

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՅԿՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ, ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ,
ԱՐԱՔՍ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, ՏԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7-րդ
ԴԱՍԱՐԱՆ

*Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար*



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Հ 000

Տպագրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով

Կարինե Հարությունյան
(Թեմա 1, Թեմա 2, Թեմա 3, Թեմա 5)

Հայկուհի Բարսեղյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
(Թեմա 1, Թեմա 2, Թեմա 3, Թեմա 5)

Տարոն Սիմոնյան
Իրավագիտության թեկնածու, դոցենտ
(Թեմա 4, Թեմա 6)

Արաքս Մանուչարյան
(Թեմա 7)

Նարեկ Գալստյան
Քաղաքագիտության թեկնածու, դոցենտ
(Թեմա 8)

Հ 000 **ՀԱՍՏՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ:** 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար / Կ. Հարությունյան, Հ. Բարսեղյան, Ն. Գալստյան, Ա. Մանուչարյան, Տ. Սիմոնյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 120 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978-9939-99-037-8

© Հեղինակներ, 2023
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2023

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով. www.zangak.am/9789939990378
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

Թեմա 1. ՄԱՐԴ-ԲՆՈՒԹՅՈՒՆ

1.1. ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Բնություն, մարդ

Բնությունը մարդուն շրջապատող բնական միջավայրն է: Այն ընդգրկում է անկենդան և կենդանի աշխարհները, այդ թվում նաև մարդուն:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Բնություն, մարդ, հասարակություն, մշակույթ, բանականություն

ԱՆՇԱՆՈՑ ԲԱՌԵՐ: Իմաստասեր, մենատնտես, բրիչ, ապավինել, շեն

Հասարակություն — մշտական հարաբերություններ ունեցող մարդկանց խումբ:

Մշակույթ — այն ամենը, ինչ ստեղծվել է մարդու կողմից:

Բանականություն — խոսելու, գիտակցելու, տրամաբանելու, դատողություն անելու, մտածելու կարողություն:

Իմաստասեր — գիտնական, փիլիսոփա:

Մենատնտես — տնտեսությունը միայնակ վարող գյուղացի:

Բրիչ — հողը փխրեցնելու գործիք:

Ապավինել — վստահել:

Շեն — փոքրիկ բնակավայր, համայնք:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կարևորի դուրսբերում

Այն միտքը կամ նախադասությունը, որը տվյալ տեքստում առանցքային է, այսինքն՝ գաղափարապես ամենից ծանրակշիռն է, սովորաբար կոչվում է **բանալի միտք** կամ **բանալի նախադասություն**: Տեքստի յուրաքանչյուր պարբերության մեջ կարող ես գտնել բանալի միտք, որից որպես հետևանք բխում է մնացյալը:

1. «Ո՞վ է մարդը» տեղեկատվական տեքստն ընթերցելիս դո՛ւրս բեր և գրառի՛ր իմաստասերներից յուրաքանչյուրի արտահայտած բանալի միտքը:
2. «Քարակոփ կացարան» պատմվածքի դասանյութում բերված հատվածն ընթերցելիս փորձի՛ր դուրս բերել յուրաքանչյուր պարբերության բանալի մտքերը՝ կապված մարդ–բնություն հարաբերությունների հետ:




ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Մարդը հայտնվել է անհայտ մոլորակում, որտեղ ո՛չ բուսականություն կա, ո՛չ կենդանական աշխարհ: Ինչպե՞ս նա իրեն կդրստորի այդ միջավայրում:
- Որո՞նք են բնության հետ ներդաշնակ լինելու կանոնները: Ի՞նչ պետք է անի մարդը, որպեսզի կարողանա ներդաշնակ լինել բնության հետ:

ՈՎ Է ՄԱՐԴԸ

Հին ժամանակներից մինչև մեր օրերը բազմաթիվ գիտնականներ, իմաստասերներ, արվեստագետներ մտո-

րել են այն հարցերի շուրջ, թե ով է մարդը, որն է մարդու էությունը, որոնք են մարդուն բնորոշ հատկանիշները:



Պլատոն



Դավիթ Անհաղթ



Արիստոտել



Մարտիրոս Մարյան

Մի զվարճալի պատմություն կա, որը ցույց է տալիս, թե որքան դժվար է մեկ ընդհանուր սահմանումով ներկայացնել «մարդ» հասկացությունը: Հույն իմաստասեր Պլատոնն իր աշակերտներին հարցնում է. «Ի՞նչ է մարդը»: Քանի որ նրա աշակերտները դժվարանում են պատասխանելուց, Պլատոնն ինքն է փորձում պատասխանել՝ ասելով. «Մարդը երկոտանի կենդանի է, բայց առանց փետուրների»: Լսելով զրույցը՝ մեկ այլ իմաստասեր փետրահան արված մի ճուտ է նետում դեպի Պլատոնը՝ ասելով. «Ահա՛, Պլատոն, քո ներկայացրած մարդը»:

Միջնադարյան հայ իմաստասեր Դավիթ Անհաղթը գրում է. «...մարդը կենդանի է՝ բանական մահկանացու՝ մտածելու

և գիտության ընդունակ»: Ըստ նրա՝ բոլոր կենդանիներից միայն մարդն է, որ ունի **բանականություն**:

Ըստ հույն իմաստասեր Արիստոտելի՝ մարդը հասարակական, քաղաքական կենդանի է: Մարդն առանց մյուս մարդկանց հետ հաղորդակցվելու չի կարող լիարժեք կյանք ունենալ: Հասարակությունը մարդկանց՝ բնականորեն առաջացած ընդհանրությունն է. մարդիկ իրենց բնույթով միշտ ձգտում են այդպիսի միասնության:

Ըստ հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի՝ «Մարդն ինքը բնությունն է: Միայն մարդու միջոցով է բնությունը ճանաչում իրեն: Հսկայական, անվերջ բնություն և փոքրիկ մի արարած, որն իր մեջ ունի այդ անսահման մեծությունը»:

Ընդհանրացրո՛ւ և ամփոփի՛ր իմաստասերների մտքերը, դրանց ավելացրո՛ւ քո մտքերը և երկու-երեք տողով գրի՛ր «մարդ» հասկացության քո բնորոշումը:

**Վախթանգ Անանյան
ՔԱՐԱԿՈՓ ԿԱՅԱՐԱՆ**

Քարահունջ գյուղի դիմաց ժայռերով ու թփուտներով պատված մի լանջ կա, որ նայում է Վարարակ գետին: Որսս հաջող չէր, բայց բավականություն էի ստանում ծառերի վրայից և թափված տերևների միջից վայրի պտուղներ գտնելով: Մի ձորակում էլ՝ տերևների տակ, ըն-

կույզներ գտա, մի քանիսը՝ ծակ ու դատարկ, սկյուռներն էին դատարկել, կային և անարատ մնացածներ: Վեր նայեցի՝ ժայռի տակ մի ընկուզենի է կանգնած՝ պառաված ճյուղերը կախ: Նրա մոտ նռան ցածրիկ մի ծառ կա, երկու սերկհիլենի:

Կրկին կարդա պարբերությունը և նշի՛ր պարբերության բանալի միտքը:



Քարահունջի համայնապարկեր

Որտեղի՞ց են այս ընտանի ծառերը բնակավայրերից հեռու ընկած այս ժայռերում: Հետաքրքրությունից մղված՝ բարձրացա: Այդ ժայռերը կանգնած էին քարերից մաքրված մի գոգավորության վրա: Այստեղ երևում էին մարդու աշխատանքի հետքերը. ժայռի տակից դեպի ծառերը հանած մի փոքրիկ առվի ցա-

մաքած հուն, իրար զուգահեռ ձգված թմբերի երեք շարք, որոնց վրա իր ժամանակին լոբի են ցանել, այստեղ-այնտեղ ընկած մի քանի ցցեր, մի կտորած բահ, օջախում մնացած մոխիր, ածուխ, կիսաայրված փայտերի կտորներ և մի սալաքար, որի վրա բլիթներ է թխել այդտեղի երբեմնի բնակիչը:

Նշի՛ր այն բանալի բառերը, որոնք քեզ կօգնեն դուրս բերելու պարբերության բանալի միտքը:

Մեծ ջանքերով բնությունից պոկած այդ հողակտորի տերը, որպեսզի պահպանի իր **մշակույթը**, ժայռի պատին բրիչով մի խորշ է փորել, որի մեջ քնել է սրթսրթալով կամ պատսպարվել անձրևից: Մի այլ խորշ իր տխուր օրերի միակ ընկերոջ՝ ջան բույն է: Վերևի խորշում խոտ է դրել, որ հավաքել է ժայռերի արանքներից: Մի վերմակի տարածություն բռնող իր այդ հողակտորին ապա-

վինած՝ ապրել է այդտեղ նա գարնանից մինչև ուշ աշուն, և որպեսզի իր քրտինքը բերք տա, ժայռի տակ մի ավազան է փորել, որի մեջ առաստաղից կաթել է գարնան ձնհալից առաջացած այն ջուրը, որ աստիճանաբար ծծվում է փուխր ժայռի մեջ: Կաթիլ առ կաթիլ հավաքել է այդ ջուրը և նրանով ոռոգել իր մի հատիկ ընկուզենին, մի զույգ սերկևիլի ծառը, նռնենին, լոբու թմբերը:

Պարբերության մեջ ի՞նչ իմաստով է Վ. Անանյանն օգտագործում *մշակույթ* բառը:

Մենատնտեսի խղճով կյանք... Պատկերացնում եմ՝ ինչ մռայլ ու ահավոր գիշերներ է անցկացրել **շեներից** ու մարդկանցից կտրված այդ չարքաշ հողագործը...


Սյնքա՛ն այդպիսի քարակոփ կացարաններ կան Զանգեզուրի ժայռերում: Կացարաններ, ուր կարիքից դրդված պատսպարվել են շինականները...

Պարբերության մեջ նշի՛ր երկու միտք, որոնք ներկայացնում են մարդ-բնություն, մարդ-կարիք կապերը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՈՒՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերջին պարբերության մեջ ի՞նչ նախադասությամբ է Վ. Անանյանը արտահայտում «Մարդն առանց մյուս մարդկանց հետ հաղորդակցվելու չի կարող լիարժեք կյանք ունենալ» միտքը:
2. *«Իր կարիքները բավարարելու նպատակով մարդը փոխհարաբերվում է բնության հետ, միաժամանակ վերակերպում ու վերափոխում է վերջինս՝ հարմարեցնելով իր փոփոխվող պահանջներին»:*
Տեքստից դ՞ուրս բեր այն տվյալները, որոնց միջոցով կարող ես հիմնավորել վերոհիշյալ միտքը և, ելնելով քո գիտելիքներից ու փորձից, ընդլայնի՛ր այդ տվյալների մասշտաբը՝ հասցնելով այն մինչև տիեզերք:
3. Տեքստից դ՞ուրս բեր այն տվյալները, որոնցով կարող ես հիմնավորել, որ մարդը չի կարող գոյատևել առանց բնական միջավայրից օգտվելու:
4. Ըստ նկարների՝ փորձի՛ր կռահել քանդակներից յուրաքանչյուրի անունը և համացանցով ստուգի՛ր՝ արդյոք կռահումդ ճիշտ էր:
Ի՞նչը կարող է օգնել քեզ կռահումներիդ ավելի ճիշտ անելու համար:




Օզյուսր Ռոդեն. «...»



Ֆրանց Բերգման. «...»



Արթուր Գեղամյան. «...»



Ռուբեն Բոչոնի. «...»



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ինչի՞ մասին է «Մի այլ խորշ իր տխուր օրերի միակ ընկերոջ՝ շան բույն է» նախադասությունը: Շինականի բնավորության ո՞ր գծերի մասին է խոսում այն:
2. Մի քանի բառով փորձի՛ր ներկայացնել շինականի կերպարը: Փորձի՛ր գնահատել նրա աշխատանքը:
3. Փորձի՛ր գրավոր մեկնաբանել «մարդ դառնալ» դարձվածքի իմաստը:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Խմբով պատրաստե՛ք սահիկաշար կամ պաստառ՝ «Ո՞վ է մարդը» վերնագրով: Աշխատանքում նկարագրե՛ք՝

- մարդու ձեր բնորոշումը,
- մարդու 4–5 հատկանիշ, որոնցով նա նմանվում է կենդանիների,
- մարդուն հատուկ 4–5 հատկություն, որոնցով նա տարբերվում է կենդանիներից:

Հատկություններից յուրաքանչյուրը նկարագրե՛ք օրինակով:

Օրինակ՝

Սպիտակազգործող — երաժիշտ, գրող, գիտնական, երգահան

1.2. ՄԱՐԴՈՒ ՊԱՀԱՆՋՍՈՒՆՔՆԵՐԸ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Պահանջմունք

Պահանջմունքն ինչ–որ բանի կարիքն է, որը մարդը զգում է ապրելու, գործելու և զարգանալու համար:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Պահանջմունք, կարիք, բնական պահանջմունք, մշակութային պահանջմունք, նյութական պահանջմունք, հոգևոր պահանջմունք, սոցիալական պահանջմունք, իմացություն

ԱՆԾԱՆՈԹ ԲԱՌԵՐ: Վերարտադրվել

Վերարտադրվել — 1. նորից արտադրվել, ստեղծվել, 2. որևէ բանի ճշտությամբ կրկնվել, ընդօրինակվել, 3. ստեղծագործորեն պատկերվել:

«Պահանջմունք» տեղեկատվական գրվածքն ընթերցելիս ուշադրություն դարձրու, թե «վերարտադրվել» բառը 1–ին կետում բերված իմաստներից որով է կիրառված:



ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ

1. Բառակազմական վերլուծության ենթարկի՛ր «վերարտադրվել» բառը և պարզի՛ր, թե ինչ մասերից է կազմված:
2. Գրվածքն ընթերցելիս գնահատի՛ր, թե բառակազմական վերլուծությունը քեզ որքանով օգնեց հասկանալու այդ բառի իմաստը տվյալ համատեքստում:



ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատճառահետևանքային կապի վերհանում

Կարդալիս պետք է փորձես հասկանալ, թե ինչ է պատահում, և ինչու է դա պատահում: Երբ մի երևույթ որոշակի պայմաններում ձևավորում, առաջացնում է մեկ ուրիշ երևույթ, ապա առաջինը պատճառն է, իսկ երկրորդը՝ հետևանքը: Երբեմն պատ-

ճառները չեն հաղորդվում, և դրանք բացահայտելու համար պետք է կիրառես տեքստի մեջ եղած տեղեկությունները և քո գիտելիքները: Նկատի՛ ունեցիր, որ հետևանքը կարող է ունենալ շատ պատճառներ, և որ մեկ պատճառը կարող է ունենալ մի քանի հետևանք:

«Պահանջմունք» տեղեկատվական գրվածքն ընթերցելիս դո՛ւրս գրիր 5 պահանջմունք: Նշի՛ր՝ որն է յուրաքանչյուր պահանջմունքի առաջացման պատճառը, և որպես հետևանք՝ ինչ գործողությունների է մղում դրա բավարարումը:

Աղյուսակ 1

Պահանջմունք	Պատճառ	Հետևանք
Ցրտից ու շոգից պաշտպանվելու	Եղանակային պայմանների փոփոխություն	Հագուստի ստեղծում, կացարանի կառուցում



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Պատկերացրո՛ւ հերթական առավուտը. ի՞նչ պահանջմունքներից դրդված ես կատարում քո գործողությունները:

ՊԱՀԱՆՋՄՈՒՆԷՔ

Ի՞նչն է մարդուն ստիպում կատարել ինչ—որ գործողություն կամ զբաղվել որևէ բանով:

Հոգեբաններն այն կարծիքին են, որ մարդուն ակտիվ գործունեության են մղում նրա **պահանջմունքները**:

Պահանջմունքների առաջացումը պայմանավորված է այն հանգամանքներով, որոնցում հայտնվում է մարդն իր կենսագործունեության ընթացքում: Օրինակ՝ եղանակային պայմանների փոփոխությամբ պայմանավորված՝ նախնադարյան հասարակարգից առ այսօր մարդիկ հագուստ են ստեղծում և կացարաններ կառուցում: Դրանով նրանք փորձում են բավարարել ցրտից կամ շոգից պաշտպան-

վելու իրենց պահանջմունքը: Պահանջմունքների գիտակցումը և բավարարումը կատարվում են աստիճանաբար՝ մարդու զարգացմանը զուգընթաց:

Պահանջմունքին բնորոշ է **վերարտադրվելու** հատկությունը: Այսինքն՝ տվյալ պահանջմունքը մեկ անգամ բավարարվելուց հետո չի անհետանում: Այն պարբերաբար մարդուն մղում է նորանոր գործողությունների: Օրինակ՝ կրթություն ստանալու պահանջմունքն անընդհատ վերարտադրվում է. մարդն ամեն անգամ նոր բան սովորելիս հասկանում է, թե ինչքան թերի ու սակավ են եղել իր գիտելիքները, ուստի անընդհատ

ձգտում է կրթվելու, զբաղվում է ինքնակրթությամբ և այլն:

Մյուս կարևոր հատկությունն այն է, որ պահանջմունքը կարող է բավարարվել տարբեր առարկաների օգնությամբ և տարբեր եղանակներով: Արդի փոփոխվող աշխարհում պահանջմունքների բավարարումը հնարավոր է դառնում դրանց բավարարման եղանակների ու միջոցների կատարելագործման շնորհիվ: Հետևաբար պահանջմունքը դրդապատճառ է դառնում մարդու անընդհատ զարգացման համար: Օրինակ՝ հաղորդակցման պահանջմունքի բավարարման համար մարդիկ ստեղծում են ավելի արագ ու հեռավար կապի նորանոր տեխնոլոգիաներ:

Ըստ ծագման՝ պահանջմունքները կարող են լինել **բնական և մշակութային**:

Բնական (բնածին) պահանջմունքները մարդուն տրվում են ի ծնե: Դրանք հաճախ իրենց զգացնել են տալիս ինքնաբերաբար: Բնածին պահանջմունքները բազմատեսակ են՝ թթվածնի, սննդի, ջրի, քնի, ցրտից ու տապից պաշտպանվելու, ցավը հաղթահարելու, սերունդ ունենալու և այլն: Այս պահանջմունքների բավարարումն անհրաժեշտ է օրգանիզմի կենսագործունեության պահպանման համար:

Մշակութային պահանջմունքները պայմանավորված են մշակույթի և քաղաքակրթության զարգացմամբ: Գրի, էպոսի, ավանդազրույցների, տարագի ստեղծումը հնագույն ժողովուրդների մշակութային պահանջմունքների դրսևորման օրինակներ են:

Մշակութային պահանջմունքների բավարարումն անհրաժեշտ է մարդու մշակութային կյանքը, նրա զարգացումն ապահովելու համար:

Պահանջմունքները կարելի է նաև դասակարգել ըստ դրանց բավարարող միջոցների (առարկաների): Դրանք կարող են լինել **նյութական և հոգևոր**:

Հիմնական **նյութական** պահանջմունքներն են սնվելու, հագնվելու, կացարան ունենալու և առողջության պահպանման պահանջմունքները:

Նյութական պահանջմունքները բավարարվում են նյութական առարկաների օգնությամբ: Դրանք կարող են բավարարվել բնության մեջ պատրաստի վիճակում հանդիպող նյութական առարկաների (օրինակ՝ քարերի, բույսերի, ջրի, մրգերի և այլն) միջոցով: Կարող են բավարարվել նաև մարդկային գործունեության շնորհիվ ստեղծված (օրինակ՝ հագուստ, կահույք, բնակարան, աշխատանքային գործիքներ և այլն) առարկաների միջոցով:

Կարևոր **հոգևոր** պահանջմունքներից է իմացությունը՝ շրջակա աշխարհը ճանաչելու պահանջմունքը: Հոգևոր պահանջմունքներից են նաև աշխատելու, ստեղծագործելու, արարելու, անվտանգության զգացումի, սիրո պահանջմունքները:

Հոգևոր պահանջմունքները բավարարվում են հոգևոր արժեքների (գիտելիք, հմտություն, հաղորդակցություն, բարոյական և կրոնական արժեքներ և այլն) միջոցով:

Հոգևոր պահանջմունքների շարքին դասվում են նաև **սոցիալական (հասարակական)** պահանջմունքները: Մեզնից

յուրաքանչյուրն ունի հասարակության անդամ լինելու, հասարակության մեջ ապրելու, այլ մարդկանց հետ շփվելու պահանջմունք: Օրինակ՝ երբ մենք ձգտում ենք լինելու տարբեր մարդկանց շրջապատում, ընկերների ու հարա-

զատների միջավայրում և մտքեր փոխանակելու, համատեղ գործունեություն կատարելու, նրանց գնահատականին արժանանալու, ապա բոլոր նման դեպքերում փորձում ենք բավարարել մեր սոցիալական պահանջմունքները:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրո՛ւ բնական, մշակութային, սոցիալական, նյութական և հոգևոր պահանջմունքների օրինակներ:
2. «Վերարտադրվել» բառն օգտագործի՛ր նախադասությունների մեջ տարբեր իմաստներով:
3. Աղյուսակ 1–ում ներառված պահանջմունքների չբավարարումը ի՞նչ հետևանքների կարող է հանգեցնել:
4. Խմբով քննարկե՛ք ձեր կազմած աղյուսակ 1–ը, համեմատե՛ք դուրս բերած պահանջմունքները և դրանց պատճառներն ու հետևանքները:
5. Փորձի՛ր բերված նկարները վերլուծել մարդու հոգևոր՝ աշխատելու, արարելու, և ֆիզիկական՝ սնվելու պահանջմունքների տեսանկյունից:



Գրիգոր Խանջյան
«Հացը լեռներում» (1972 թ.)



Մինաս Ավերիսյան
«Լավաջ են թխում» (1972 թ.)



Մինաս Ավերիսյան
«Խնացի են հարուն» (1964 թ.)



Սեդրակ Առաքելյան
«Յորեն են չորացնում» (1920 թ.)



ԱՐՃԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

Եթե վստահ չես, որ քո կարիքը պահանջմունք է, ապա քեզ հա՛րց տուր. «**Կարո՞ղ եմ գոյարևել առանց դրա, իսկ լիարժեք մարդ լինել կարո՞ղ եմ**»:
Հիմնավորի՛ր պատասխաններդ:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Պատկերացրե՛ք իրավիճակ, երբ մարդկանց մի խումբ անորոշ ժամանակով շրջափակված է սահմանափակ տարածքում և ունի սահմանափակ ռեսուրսներ: Բաժանվե՛ք խմբերի: Ընտրե՛ք որևէ պահանջմունք և հանդե՛ս եկեք ներկայացված իրավիճակում տվյալ պահանջմունքի առաջնահերթ լինելու օգտին: Ձեզ կօգնեն հետևյալ հարցադրումները.

- Ո՞ր պահանջմունքների բավարարումը կլինի առաջնահերթ տվյալ իրավիճակում:
- Եթե մարդու պահանջմունքները չբավարարվեն, ինչի՞ կարող է այն հանգեցնել:

Պատկերացրո՛ւ, որ դու այդ մարդկանց շահերի ներկայացուցիչն ես, ու ելույթդ ներկայացրո՛ւ այնքան համոզիչ, որ կարողանաս հասնել շրջափակման վերացմանը: Ելույթը սահիկաշարով ներկայացնելը խրախուսվում է:

1.3. ՄԱՐԴ-ԲՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Էվոյուցիա, բնական միջավայրի հավասարակշռություն

Էվոյուցիա — որակական մի վիճակից մի նոր վիճակի տանող փոփոխություն, փուլային գործընթաց:

«Մարդ-բնություն հարաբերությունների էվոյուցիան» գրվածքի ամեն պարբերություն նկարագրում է էվոյուցիայի որոշակի փուլ: Ընթերցելիս ուշադրություն դարձրու այդ փուլերի նկարագրություններին:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Էվոյուցիա, պարզունակ բնօգտագործում, ֆլորա, ֆաունա, կենսոլորտ, «Կանաչ քաղաք»

ԱՆՇԱՆՈՑ ԲԱՌԵՐ: Այլընտրանքային էներգիա, ջերմոցային գազեր

Տեքստն ընթերցելիս ուշադրություն դարձրու, որ «էվոյուցիա» բառը գործածվում է մարդ-բնություն հարաբերությունների որակական մի վիճակից մեկ այլ վիճակի տանող փոփոխություն իմաստով:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կարևորի դուրսբերում

Տեքստն ընթերցելիս փորձիր դուրս գրել յուրաքանչյուր պարբերության կարևոր միտքը:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բնական միջավայրի հավասարակշռության համատեքստում ինչպե՞ս կբնութագրես մարդ-բնություն հարաբերությունների այն փուլը, որում դու ապրում ես:

ՄԱՐԴ-ԲՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Սկզբնավորման պահից մարդն իր կենսականորեն անհրաժեշտ պահանջ-մունքները բավարարելու համար միջոցներ է հայթայթել բնությունից, յուրացրել նրա անմիջական բարիքները: Այդ ժամանակաշրջանին բնորոշ էր բնօգտագործման պարզունակ տեսակը՝ վերցնել բնությունից այն հնարավորը, ինչն անհրաժեշտ է գոյատևելու պահանջմունքները բավարարելու համար: Մարդը կատարելապես ենթարկվում էր բնությանը և չէր խախտում բնական միջավայրի ներդաշնակությունը:

Սակայն **մարդ-բնություն** փոխհարաբերությունը էական փոփոխություններ է ունեցել, երբ մարդը թափառական ապրելաձևից սկսել է անցնել նստակյաց կենսակերպի: Նա իր պահանջմունքները բավարարելու համար փորձել է ինքն արտադրել սնունդ և ապրուստի այլ միջոցներ: Իր ակտիվ գործունեությամբ վերափոխել է իրեն շրջապատող բնական միջավայրը, կառուցել քաղաքներ ու ջրանցքներ, ստեղծել գործարաններ ու փոխադրամիջոցներ և, ինչպես հույն իմաստասեր Դեմոկրիտն է անվանել, ստեղծեց «երկրորդ բնությունը»: Արդյունքում սկսեց խախտվել բնական միջավայրի հավասարակշռությունը:

Երբեմն իր պահանջմունքները բավարարելու, բայց հաճախ նաև իր ցանկություններին ու քմահաճույքներին տեղի տալով՝ մարդը սկսեց ավելի գործուն միջամտություն ունենալ շրջապատող բնական միջավայրի վրա՝ հավակնելով թելադրող դառնալու բնության հետ հարաբերություններում: Մարդը վերափոխում է բնական միջավայրը՝ այն հար-

մարեցնելով իր կարիքներին, օրինակ՝ չորացնում և օգտագործում է ճահիճներն ու գերխոնավ հողատարածությունները, ոռոգում է անապատային հողերը, կանաչապատում ու անտառապատում է անապատներ, ձորեր ու լեռնալանջեր: Միևնույն ժամանակ մարդն անխնա օգտագործում է բնական ռեսուրսները՝ փոխարենը շրջակա միջավայր վերադարձնելով թափոններ ու թույներ, որոնց հետևանքով փոխվում է հողի, ջրի ու մթնոլորտի բաղադրությունը: Նա հատում է անտառներ, աղտոտում մթնոլորտը, որի հետևանքով ավելանում է մթնոլորտ արտանետվող ջերմոցային գազերի քանակը: Խախտվում են բույսերի և կենդանիների, միկրոօրգանիզմների և սնկերի՝ միլիոնավոր տարիների ընթացքում ձևավորված ու նրբորեն կարգավորված համակարգերը: Վտանգվում են երկրագնդի ամբողջ ֆլորան և ֆաունան: Բուսական ու կենդանական որոշ վայրի տեսակներ, չկարողանալով արագ հարմարվել միջավայրի փոփոխվող պայմաններին, հայտնվում են անհետացման եզրին: Արդյունքում խախտվում է կենսոլորտի փխրուն հավասարակշռությունը, որը ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում:

Սակայն մարդը նաև սկսեց հասկանալ, որ իր ցանկությունների ու պահանջմունքների բավարարման պատճառով հաճախ բնությանը հասցնում է կործանարար հարվածներ, և սկսեց գիտակցել, որ մենք բոլորս բնության մի մասնիկն ենք, և այն մեր հոգատարության կարիքն ունի: Բնության պահպանության ուղղությամբ այժմ իրականացվում են բազմա-

թիվ փոքր ու մեծ ծրագրեր: Ստեղծում են բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ արգելոցներ և արգելավայրեր, անհետացման եզրին հայտնված բուսական և կենդանական տեսակները փրկելու նպատակով: Կան բազմաթիվ կազմակերպություններ, որոնց հիմնական նպատակը բնության պաշտպա-

նությունն է: Պետական մակարդակով խթանվում են այլընտանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը, էներգախնայող և էներգաարդյունավետ սարքերի օգտագործումը, էկոլոգիական տրանսպորտ և «կանաչ քաղաք» ապագային միտված ծրագրերի իրագործումը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՈՍՁԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դասընկերներով համեմատե՞ք պարբերություններից ձեր դուրս գրած կարևոր մտքերը: Այդ մտքերի հիման վրա անվանե՞ք մարդ-բնություն հարաբերությունների էվոլյուցիոն փուլերը:
2. Մեկնաբանի՞ր «Մարդու անվերահսկելի գործողությունների հետևանք է նաև կլիմայական համակարգի փոփոխությունը» միտքը:
3. Պատմության ընթացքում ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել մարդու պահանջմունքները, և ինչո՞վ են դրանք պայմանավորված:



ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ

Մտաբերի՞ր մարդկային գործունեության մի քանի օրինակ, որոնք ներգործություն են ունեցել քո համայնքի բնական միջավայրի հավասարակշռության վրա: Լրացրո՞ւ աղյուսակը՝ ըստ ներկայացված օրինակի:

Մարդու գործողությունը	Գործողություն, որ մղում է որևէ պահանջմունքի բավարարմանը	Գործողության հետևանքները	Պահանջմունքի բավարարման այլընտրանքային առաջարկներ
Կտրում են ծառեր	<ol style="list-style-type: none"> 1. Փայտանյութից կահույքի և այլ պարագաների պատրաստում 2. Թղթի արտադրություն 3. Փայտի օգտագործումը որպես վառելանյութ 	<ul style="list-style-type: none"> • Ոչնչացվում են հսկայական անտառներ: • Ոչնչանում են հազարավոր կենդանիներ: • Ուժեղանում են քամիները: • Կլիման փոխվում է: 	<ol style="list-style-type: none"> 1. Կահույք և այլ պարագաներ պատրաստել փայտին փոխարինող նյութերից 2. Աճեցնել հատուկ բամբուկ և թուղթը ստանալ բամբուկից 3. Ավելի շատ օգտագործել արևային էներգիան



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ինչո՞ւ է կարևոր բնության պահպանությունը մարդու առողջության համար:
2. Արդյոք անաղարտ բնությունը միայն մարդո՞ւն է պետք:
3. Ունկնդրի՞ր երգը: Մարդ–բնություն հարաբերությունների ո՞ր փուլին կվերագրես երգում ներկայացվող ժամանակաշրջանը:



4. Քննարկե՛ք «Բնության պահպանության շատ կարևոր գործում ես նույնպես ունեմ իմ բաժին պարտականությունները. պետք է բավարարեմ անընդհատ կրթվելու պահանջմունքներս և լինեմ նախաձեռնող» միտքը:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ (գրավոր)

Ուսումնասիրի՛ր, թե քո համայնքում բնության վրա մարդու ազդեցության ինչ դրական և բացասական հետևանքներ կան: Արդյունքները ներկայացրո՛ւ *զեկույցի* տեսքով:

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ (բանավոր)

Մշակի՛ր բնության և հասարակության ներդաշնակությունն ապահովող կանոններ և ներկայացրո՛ւ պաստառի տեսքով:



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ 1

Բնությունը մշտապես եղել և մնում է իբրև մարդու ստեղծագործական պահանջմունքի բավարարման ամենակենարար աղբյուրներից մեկը: Մարդը միշտ ներշնչվել ու ոգևորվել է բնության ներդաշնակությամբ, բազմազանությամբ և կատարելությամբ, ինչն էլ մղել է նրան ստեղծագործական աշխատանքի: Պատրաստե՛ք սահիկաշար՝ «Բնությունը՝ ստեղծագործական պահանջմունքի ներշնչանք» թեմայով:

- Փորձե՛ք սահիկաշարում օգտագործել բնությանն առնչվող ստեղծագործություններ արվեստի հնարավորինս շատ ճյուղերից՝ երաժշտություն, քանդակագործություն, կերպարվեստ և այլն:
- Սահիկաշարի առանցքային գաղափարը դարձրե՛ք «Մի՛ վնասիր բնությունը, քանի որ այն քո ներշնչանքի գլխավոր աղբյուրն է» միտքը:
- Ահա մի քանի օգտակար հղումներ, որոնք քեզ կօգնեն քո որոնումներում:



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ 2

Ուսումնասիրե՛ք ձեր համայնքում գործող որևէ արտադրության կամ ձեռնարկության աշխատանք: Խմբային աշխատանքի միջոցով ներկայացրե՛ք, թե ինչ դրական ու բացասական հետևանքներ է ունենում բնության վրա դրա գործունեությունը:



ՔԱՎԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Ինչ է բանականությունը	
Մարդու գործունեության բացասական ազդեցությունները բնության վրա	
Ինչ է պահանջմունքը	
Պահանջմունքների ինչ տեսակներ կան	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Բացատրել մարդուն բնորոշ հատկանիշները	
Նկարագրել մարդու գործունեության բացասական ազդեցություններից մի քանիսը	
Թվարկել պահանջմունքների տեսակների օրինակներ	
Դասավորել պահանջմունքները՝ ըստ ձեր նախընտրած առաջնահերթության	

Թեմա 2. ՄԱՐԴ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Հասարակություն, սոցիալականացում

Հասարակություն — մշտական հարաբերություններ ունեցող և համատեղ ապրող մարդկանց ամբողջությունը:

Սոցիալականացում — հասարակության մեջ մշակված և ընդունված կանոնների, սովորույթների, ինչպես նաև միմյանց հետ փոխհարաբերվելու հմտությունների յուրացման գործընթացը, որը սկսվում է մանուկ հասակից և շարունակվում ողջ կյանքի ընթացքում:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Հասարակություն, սոցիալականացում, անհատ, անձ, անհատականություն

Հասարակություն բառը կարող է նշանակել.

- հասարակարգ, մարդկության զարգացման պատմական փուլ. օրինակ՝ նախնադարյան հասարակություն,
- որևէ բանի ընդհանրությամբ իրար հետ կապված մարդկանց հանրություն. օրինակ՝ թատերասեր հասարակություն,
- ժողովուրդ, ազգ. օրինակ՝ հայ հասարակություն,
- որոշակի տարածքում, մայրցամաքում ապրող ժողովուրդ. օրինակ՝ եվրոպական հասարակություն:

Կատարելով բառակազմական վերլուծություն՝ մեկնաբանի՛ր հասարակություն բառի իմաստը և գործածի՛ր նախադասության մեջ:

Անհատ — մարդկային ցեղի, բանական մարդ տեսակի յուրաքանչյուր ներկայացուցիչ:

Անձ կամ անձնավորություն — կյանքի ընթացքում հասարակության մեջ ապրելով՝ իր և Նախորդ սերունդների կուտակած գիտելիքներն ու կենսափորձը յուրացրած և շարունակաբար յուրացնող անհատ:

Անհատականություն — ինքնատիպ, եզակի, միայն իրեն բնորոշ, շեշտված որակներ ձեռք բերած անձ:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապերի ստեղծում

Որևէ բան ընթերցելիս, լսելիս կամ դիտելիս եթե փորձես տվյալ նյութի որոշ մանրամասներ կապել քո գիտելիքների և անձնական փորձի հետ, ապա դա քեզ կօգնի ավելի խորությամբ հասկանալու նյութը: Նյութն ընթերցելիս յուրաքանչյուր պարբերության վերջում փոքրիկ դադա՛ր տուր և դրանում արտահայտված մտքերը փորձի՛ր մտովի կապել քո փորձի ու գիտելիքների հետ:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հասարակությունից հանցագործների մեկուսացումը ինչո՞ւ է համարվում պատիժ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկսած հնագույն ժամանակներից՝ մարդկանց գոյության հիմնական ձևը համատեղ կյանքն է: Մարդիկ սկզբում միավորվել են փոքր խմբերի մեջ, իսկ ավելի ուշ՝ մեծ խմբերի մեջ՝ բավարարելու իրենց տարաբնույթ պահանջմունքները, այն է՝ սնունդ հայթայթել, կենդանիներից

ու թշնամիներից պաշտպանվել, ջրանցքներ փորել, ճանապարհներ կառուցել: Գործունեության գրեթե բոլոր տեսակները՝ խաղը, ուսուցումը, աշխատանքը, մարդիկ կատարել և կատարում են համատեղ՝ երկու կամ ավելի անդամներից կազմված խմբերով:

Ի՞նչ կապ էս տեսնում վերն արտահայտված մտքերի և պատմության դասընթացից ստացած քո գիտելիքների միջև:

Գործունեության տարբեր ոլորտներում իրենց փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով մարդիկ մշակել են վարքագծի առանձին կանոններ, ձևավորել են սովորույթներ ու ավանդույթներ: Տարբեր հասարակություններում դրանք ունեն զանազան դրսևորումներ:

Օրինակ՝ ոչ բոլոր հասարակություններում է ընդունված ձեռքսեղմումով բարևելու սովորույթը. բարևելիս ճապոնացիները խոնարհվում են, էսկիմոսները բռունցքով խփում են դիմացինի գլխին և ուսերին, իսկ Նոր Գվինեայում խուտուտ են տալիս միմյանց ծնտուները:

Փորձի՛ր հիշել, թե մարդկանց ողջունելու ի՞նչ առանձնահատուկ ձևեր ու արտահայտություններ կան քո համայնքում:

Մարդկային հասարակության միջուկն անհատն է, սակայն հասարակությունը չպետք է դիտարկել որպես անհատների պարզ համախումբ: Հասարակությունը ձևավորվում է այն դեպքում,

երբ իրարից տարբեր ու անկրկնելի անհատները միավորվում են հանուն ընդհանուր նպատակների, շահերի կամ որևէ գործունեության իրականացման:

Քո միջավայրից բե՛ր հասարակական փոքր խմբերի ձևավորման օրինակներ:

Անհատ ասելով՝ հասկանում ենք մարդ՝ լինի երեխա թե մեծահասակ, կին թե տղամարդ, սովորող թե ուսուցիչ: Անհատ է յուրաքանչյուր մարդ՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից, մաշկի գույնից, տարիքից, մասնագիտությունից, քաղաքացիությունից և հասարակության մեջ գրաված դիրքից: Մարդը ծնվում է որպես **անհատ**, սակայն կյանքի ընթացքում ապրելով հա-

սարակության մեջ և յուրացնելով նախորդ սերունդների կուտակած գիտելիքներն ու կենսափորձը՝ ձևավորվում է որպես **անձ** կամ **անձնավորություն**: Անձը սոցիալականացման ընթացքում ձեռք է բերում ինքնատիպ, եզակի, միայն իրեն բնորոշ, շեշտված որակներ, այսինքն՝ ձևավորվում է որպես անհատականություն: Անհատականությունն ունի դրսևորման տարբեր աստիճաններ:

Սոցիալականացման փուլերն են.

- Մարդը ծնվում է անհատ:
- Ձևավորվում է անձ:
- Վերածվում է անհատականության:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՈՒՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Քո ճանաչած մարդկանցից որևէ մեկի օրինակով փորձի՛ր պատկերացնել և ներկայացնել նրա անցած *անհատ* — *անձնավորություն* — *անհատականություն* ճանապարհը:
2. Առանձնացրո՛ւ այն բնութագրիչները, որոնց առկայության դեպքում մարդը կարող է անցում կատարել *անհատ* — *անձնավորություն* — *անհատականություն* շղթայի մի օղակից մյուսը:
3. Փորձի՛ր անվանել մարդու սոցիալականացման փուլերը:
4. Մարդուն բնութագրող ո՞ր հատկանիշն է բնորոշում կամ հիմնավորում հասարակության մեջ ապրելու անհրաժեշտությունը:

5. Ի՞նչ է անհրաժեշտ երեխային, որպեսզի նա դառնա հասարակության լիարժեք անդամ: Բավական է արդյոք նրան միայն խնամելն ու կերակրելը:
6. Թվարկի՞ր մի քանի հատկանիշներ, որոնք մարդուն տրվում են ի ծնե, և հատկանիշներ, որոնք ձևավորվում են հասարակության մեջ ապրելու ընթացքում:
7. Լրացրո՛ւ աղյուսակը: Դրա շուրջ դասարանում կազմակերպե՛ք քննարկում:

Բնութագրիչներ	Մարդ	
	անհատ	անձ
Մասնակցում է հասարակական կյանքին՝ իր ներդրումն ունենալով նրա զարգացման մեջ:		
Ինքնուրույն ընդունում է որոշումներ և դրանց համար պատասխանատու է հասարակության առջև:		
Ընդունում ու առաջնորդվում է հասարակության մեջ ճանաչված որոշակի նորմերով և կանոններով:		
Անկարող է որոշումներ կայացնել:		
Հետևում է մեծամասնության կարծիքին և չունի սեփական տեսակետ:		
Չունի պատասխանատվության զգացում:		
Չի հարմարվում սոցիալական միջավայրին:		

8. Կարդա՛ «Մաուզլի երեխաներ» նյութը և առանձնացրո՛ւ այն տեղեկություններ, որով կկարողանաս հիմնավորել հետևյալ միտքը. «Առանց հասարակության մարդու ձևավորումն ու զարգացումը լիարժեք չեն լինի: Անգամ բնությունից մարդուն տրված բազմաթիվ ընդունակություններ (օրինակ՝ խոսելը) չեն կարող ձևավորվել և զարգանալ, եթե մարդը զրկված լինի այլ մարդկանց հետ շփման ու հաղորդակցման հնարավորություններից»:

ՄԱՌԻՉԼԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Անգլիացի հայտնի գրող Ռեյարդ Քիփլինգը երկար տարիներ ապրել է Հնդկաստանում, տեղացիներից լսել է շատ ավանդություններ, այդ թվում այն տղայի մասին, որն ապրել է գայլերի ոհմակում: Հենց այդ ավանդապատումն էլ Քիփլինգն օգտագործել է «Մաուզլի» հեքիաթը գրելիս: «Մաուզլի» են անվանում այն երեխաներին, որոնք ծնվելուց հետո հայտնվել են կենդանիների մեջ կամ մե-

ծացել են հասարակությունից մեկուսացած: Հետագայում՝ մարդկային հասարակություն վերադառնալուց հետո, չնայած նրանց դաստիարակների ջանքերին՝ նրանք ի վիճակի չեն լինում տիրապետելու որևէ լեզվի, ավելին՝ նրանց հոգեկան և ֆիզիկական զարգացումն այնքան է տուժում, որ չեն կարողանում երկար ապրել: Որքան ավելի երկարատև է լինում մարդկային հասարակությունից

Նրանց մեկուսացման շրջանը, այնքան ավելի քիչ բան են կարողանում նրանք սովորել:

Քիչ չեն «մաուզի» երեխաների մասին իրական պատմությունները: Ահա դրանցից մեկը:

1800 թվականին Ֆրանսիայի անտառներից մեկում հայտնաբերում են 12 տարեկան մի երեխայի, որն իրեն պահում էր փոքրիկ գազանի նման: Նրա վարքն ավելի շատ կենդանական էր, քան մարդկային. նա վայրենի էր, բայց նաև շատ ամաչկոտ, չէր կարողանում խոսել, այլ միայն մռնչում էր: Տղան լսողության և հոտառության հատուկ զգացումներ ուներ, հրաժարվում էր հագուստ հագնելուց: Նա վախեցած էր, միշտ

անհամբեր ու անհանգիստ, պատրաստ ամեն թույլ փախչելու և անտառում իր բարեկամ կենդանիներին միանալու: Ֆրանսիական կառավարությունը երիտասարդ բժիշկ Ժան Մարի Իտարին առաջարկում է սովորեցնել և կրթել տղային: Իտարը տղային Վիկտոր է անվանում և սկսում իր ծանր աշխատանքը: Վիկտորը սովորում է մի քանի բառ, սկսում է հասկանալ որոշ հրահանգներ, սովորում է մաքրասեր լինել, տիրապետում է վարքի որոշ կանոնների:

Սակայն բժշկին այդպես էլ չի հաջողվում «մաուզի տղային» սովորեցնել այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդուն հասարակության լիարժեք անդամ լինելու համար:

Բժշկի աշխատանքի արդյունքում տղայի առաջընթացը սոցիալականացման ո՞ր փուլին կվերագրես:



ԱՐԺԲ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ի՞նչ նշանակություն ունի հասարակությունը քո կյանքում: Ի՞նչ ես տալիս դու հասարակությանը, իսկ հասարակությունը ինչ է տալիս քեզ:
2. Ի՞նչ գիտես այն հասարակության մասին, որում դու ապրում ես:
 - Ուրիշ ի՞նչ կուզեիր իմանալ այդ հասարակության մասին:
 - Քո կարծիքով քո գիտելիքները բավարա՞ր են այդ հասարակությունում լիարժեք ապրելու համար:
3. Բե՛ր օրինակներ և հիմնավորի՛ր, որ տվյալ հասարակության մասին գիտելիքներն էական նշանակություն ունեն այդ հասարակության մեջ ապրելու և գործելու, միմյանց օգնելու, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և ինքնաճանաչողության համար:



ՆՊՍԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

- Բերելով մի քանի փաստարկներ՝ փորձի՛ր հիմնավորել, որ՝
- հասարակությունը մարդկային գործունեության արդյունք է,

- անձի և անհատականության ձևավորումը անհատի՝ հասարակության անդամ լինելու արդյունք է:



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Փորձիր տարբեր ֆիլմերից, մուլտֆիլմերից, գեղարվեստական գրքերից վերհիշել կերպարներ, որոնք հայտնվել են հասարակությունից դուրս: Սահիկաշարի միջոցով ներկայացրո՛ւ՝ ինչպես են նրանք կարողացել դրսևորվել այդ պայմաններում, հաջողվե՞լ է արդյոք վերստին հասարակության լիարժեք անդամ դառնալ և ինչի՞ շնորհիվ:

2.2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Սոցիալական խումբ, սոցիալական շերտ, խավ, դասակարգ

Սոցիալական խումբ — երկու կամ ավելի մարդուց բաղկացած խումբ, որի անդամները միավորվել են՝ որոշակի ընդհանուր (խմբային) նպատակների հասնելու, շփվելու կամ համատեղ գործունեության համար:

Սոցիալական շերտ (խավ, դասակարգ) — ըստ սոցիալական կարգավիճակի տարբերակված մարդկանց խումբ:

Մի քանի մարդուց բաղկացած խումբը ե՞րբ կարող է համարվել սոցիալական խումբ:

Լրացրո՛ւ աղյուսակը՝ նշելով, թե ինչ սոցիալական խմբի անդամ ես դու քեզ համարում և ինչ նպատակով ես այդ խմբում:

Աղյուսակ 1

ԽՈՒՄԲ	ՆՊԱՏԱԿ
Դպրոց	Կրթություն ստանալ



ԲԱՌԱՊՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Սոցիալական խումբ, սոցիալական շերտ, խավ, դասակարգ, համայնք

Համայնքը կարող է նշանակել՝

- տարածքային հիմունքով միավորված, օրինակ՝ միևնույն գյուղում, քաղաքում, թաղամասում ապրող մարդկանց խումբ,
- մարդկանց խումբ կամ միավորում, որն ունի ընդհանուր նպատակներ,
- կազմակերպության հատուկ տեսակ, որտեղ գոյություն ունի առանձին անդամների կողմից նույնականացման ուժեղ զգացում համայնքի հանդեպ:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Որ խմբին էլ որ մարդը պատկանելիս լինի, պետք է ունենա պատասխանատվություն՝

- սեփական արարքների համար,
- խմբի արարքների համար:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Մեզնից յուրաքանչյուրը, որպես հասարակության անդամ, միաժամանակ մեկ կամ մի քանի սոցիալական խմբի անդամ է՝ ընտանիքի, համայնքի, ազգի, պետության և այլն:

Մարդկանց կյանքն անցնում է սոցիալական խմբերում: Օրինակ՝ ծնվելուց անմիջապես հետո երեխան հայտնվում է ընտանիքում: Մանկապարտեզ գնալով՝ դառնում է նոր խմբերի անդամ, դպրոց գնալով՝ մտնում է աշակերտական խմբերի մեջ, ունենում է իր ընկերախմբերը և այլն: Հաճախ նույն մարդը կարող է լինել տարբեր խմբերի անդամ, օրինակ՝ ուսանողական, խաղային, կարող է ներգրավվել հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների մեջ և այլն: Խմբերը կարող են ձևավորվել շատ սեղմ ժամկետներում և գոյատևել շատ կարճ, օրինակ՝ թատրոնի հանդիսատեսների խումբը, հարսանիքի հյուրերի խումբը և այլն: Կան խմբեր, որոնք կարող են գոյատևել շատ երկար ժամանակ, օրինակ՝ աշխատանքային կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները, կուսակցությունները և այլն: Գրեթե չկա մարդկային գործունեության մի տեսակ, որն ուղղակի կամ անուղղակի ձևով կապված չլինի որևէ խմբի հետ:

Խումբն այն սոցիալական միջավայրն է, որտեղ անձը կարողանում է դրսևորել իր ընդունակությունները և կարողությունները, իրագործում է իր մտահղացումներն ու նպատակները: Ոչ մի սոցիալական խումբ այլ խմբերից մեկուսացած չի լինում: Յուրաքանչյուր խումբ ազդում է հասարակության վրա, բայց իր վրա էլ ունենում է հասարակության և նրա մեջ մտնող խմբերի ազդեցությունը:

Սոցիալական խմբերը կարող են լինել **փոքր** և **մեծ**, **առաջնային** և **երկրորդային**, **պաշտոնական** և **ոչ պաշտոնական**:

Ամենափոքրը երկու մարդուց կազմված խումբն է: Մեծ խմբերում մարդկանց թիվն անցնում է 45–50 հոգուց: Այդպիսի խմբեր են նույն դավանանքին կամ կուսակցությանը պատկանող անձինք, պարային համույթները, աշխատանքային կոլեկտիվները, ֆուտբոլային թիմերը և այլն:

Առաջնային են այն խմբերը, որոնց անդամները մշտապես անմիջական կապի մեջ են, տեսնում են իրար, մտքեր փոխանակում, հուզական վիճակներ ունենում և այլն: Առաջնային խմբերում հարաբերությունները սերտ են, անմիջական: Այսպիսի խմբերում մարդիկ իրար լավ են ճանաչում, գիտեն միմյանց առավելություններն ու թերությունները:

Առաջնային խմբերի օրինակ են ընտանիքը, ընկերական շրջանակները, ազգականները, հարևանները և այլ խմբավորումներ:

Երկրորդային են համարվում այն խմբերը, որոնց անդամների միջև կապը հիմնականում պաշտոնական է: Այդպիսի խմբերի օրինակներ են աշխատանքային խմբերը, ռազմական, ոստիկանական և նմանատիպ այլ կազմակերպություններ:

Խմբերի մի մասը կազմվում է խմբի անդամների նախաձեռնությամբ, ինչպես, օրինակ՝ ընտանիքը: Որոշ խմբեր ստեղծվում են պետական մարմինների որոշմամբ, օրինակ՝ բանակը: Կան այնպիսի խմբեր, որոնք կայուն են և պահպանում են իրենց գոյությունը երկար տարիներ, նույնիսկ հարյուրամյակներ: Դրանց անդամները փոխվում են, բայց խմբերը ամբողջությամբ պահպանվում են: Օրինակ՝ որոշ դպրոցներ, համալսարաններ, ձեռնարկատիրական ընկերություններ երկար տարիներ և նույնիսկ դարեր կարող են գոյատևել: Նման խմբերում ձևավորվում են վարքի կայուն կանոններ, որոնք ավանդական են դառնում և մի սերնդից փոխանցվում են հաջորդ սերունդներին: Որոշ խմբերում մարդկանց փոխհարաբերությունները շատ սերտ են, հույզերով հագեցած, ամենօրյա: Կան նաև խմբեր, որոնց անդամների փոխհարաբերությունները պաշտոնական են և սահմանվում են որոշակի կանոնադրերով (օրինակ՝ բանակ, ոստիկանություն):

Մարդկային հասարակության մեջ կան նաև սոցիալական շերտեր, խավեր, դասակարգեր: Օրինակ՝ տնտեսական գործունեությունը հանգեցրել է հարուստ, միջին և աղքատ խավերի ձևավորմանը, քաղաքական գործունեությունը՝ առաջնորդների և հետևորդների, ղեկավարների և ենթակաների դասակարգմանը: Մտավոր գործունեության արդյունքում ի հայտ են եկել մտավոր և ֆիզիկական աշխատանքով զբաղվող մարդկանց շերտեր՝ մանկավարժ, բժիշկ, նկարիչ, ծրագրավորող, շինարար, հողագործ, արհեստավոր և այլն:

Ինչպես հասարակական տարբեր խմբերի, այնպես էլ շերտերի, խավերի, դասակարգերի գոյությունը պայմանավորված է նաև մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությամբ:

Յուրաքանչյուր մարդ կարող է նպատակ դնել և դառնալ իր նախընտրած խմբի անդամ կամ ունենալ ցանկալի կարգավիճակ:

Սոցիալական ամենակարևոր խմբերից է **համայնքը**: Անկախ համայքի մեծությունից՝ կարևոր է, որ համայքի անդամներն իրենց համարեն մեկ *միասնական հանրության անդամ*: Միայն այդպիսի գիտակցությամբ միավորված համայնքը կարող է տեղական, ընդհանուր հասարակական ու պետական ջանքերի զուգորդմամբ առաջադրել և լուծել իր համար կենսականորեն կարևոր խնդիրներ:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Զուգբերով համեմատե՛ք աղյուսակ 1–ի տվյալները: Ո՞ր խմբերն են ավելի հաճախ հանդիպում, իսկ որո՞նք՝ հազվադեպ:
2. Լրացրո՛ւ աղյուսակ 2–ը՝ օգտվելով աղյուսակ 1–ում քո գրանցած տվյալներից:

Աղյուսակ 2

Խմբեր, որոնց անդամ եմ իմ կամքից անկախ	Խմբեր, որոնք ես եմ ընտրել	Սոցիալական խմբի տեսակը

3. Ստորև բերված օրինակներում ի՞նչ իմաստով է գործածվել «համայնք» բառը:
 - Առաջիկայում **համայնքի** ղեկավարի ընտրություն կլինի:
 - Դպրոցի ծնողական **համայնքը** համաձայն չէ այդ առաջարկին:
 - Եվրոպական **համայնքն** իր աջակցությունն է հայտնում մեր երկրում ժողովրդավարական ընտրական համակարգի հաստատման ուղղությամբ արվող քայլերին:
4. Ինչո՞վ է պայմանավորված հասարակական խմբերի ձևավորումը:
5. Մարդկանց ապրելակերպի, մշակույթի, հասարակական նորմերի և արժեքների բազմազանությունը ի՞նչ ազդեցություն է ունենում հասարակական խմբերի ձևավորման վրա:
6. Ի՞նչ է անհրաժեշտ, որ համայնքի անդամները կարողանան լուծել իրենց համար կարևոր խնդիրները:
7. Մարդն իր ողջ կյանքի և գործունեության ընթացքում այս կամ այն **սոցիալական խմբի** անդամ է: Թվարկի՛ր խմբեր, որոնց անդամ մարդը լինում է իր ողջ կյանքի ու գործունեության ընթացքում, և խմբեր, որոնց անդամակցությունը կարող է լինել ժամանակավոր:
8. Մարդկանց խմբերը կարող են առանձնացվել՝ ըստ տարբեր չափանիշերի: Ըստ հետևյալ չափանիշերի՝ բե՛ր սոցիալական խմբերի օրինակներ.
 - սեռ
 - տարիք
 - բնակության վայր
 - զբաղմունք
 - մասնագիտություն
 - ազգային պատկանելություն
 - կրոնական պատկանելություն
 - նախասիրություն
 -



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Վերնատուն» գրական ակումբը հայ գրողների առաջին միավորումներից մեկն էր, որը ստեղծվեց Հովհաննես Թումանյանի ջանքերով 1899 թվականին և գործում էր Թիֆլիսում: Նրա մասնակիցները հավաքվում էին Թումանյանի բնակարանի վերջին հարկում, և հենց այստեղից էլ առաջացել էր միավորման անվանումը՝ «Վերնատուն»:



Դմիտրի Նայրանդյան. «Վերնատուն» (1974–1976 թթ.)

Համացանցի օգնությամբ պարզի՞ր, թե ովքեր էին խմբակի անդամները, և որն էր խմբակի ստեղծման հիմքում ընկած գլխավոր նպատակը:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ի՞նչ ես կարծում, եթե խմբի անդամներից մեկը պատասխանատվություն չունենա իր արարքների հանդեպ, խումբը կկարողանա՞ բնականոն կերպով իրականացնել համատեղ գործունեությունը կամ հասնել առաջադրված ընդհանուր նպատակներին: Պատասխանդ հիմնավորի՞ր օրինակներով:
2. Ներկայացրո՞ւ որևէ խնդիր, որին լուծում է տրվել ձեր դասարանի համատեղ ջանքերով: Դասարանի աշակերտների ո՞ր հատկանիշների շնորհիվ է հնարավոր եղել հասնել խնդրի լուծմանը:
3. Քո կարծիքով ո՞րն է մարդկանց՝ միասնական համայնք լինելու ամենակարևոր նախապայմանը:
4. Որքանո՞վ է ուժեղ պատկանելության զգացումը այն խմբերում, որոնց անդամակցում ես:

5. Մեկնաբանի՛ր դատողությունները՝ ըստ խմբի անդամի վրա ունեցած դրական կամ բացասական ազդեցության.
- Խումբը մարդուն տալիս է ինքնավստահություն:
 - Խմբում մարդիկ զարգացնում են իրենց կարողությունները:
 - Խմբի անդամներն օգնում են միմյանց գնահատելու իրենց գործողությունները:
 - Խումբը սովորեցնում է հաշվի առնել մեծամասնության կարծիքը:
 - Հանուն ընդհանուր նպատակի՝ նրա անդամները կարող են զոհաբերել առանձին անհատների շահերը:
 - Խմբի որոշ անդամներ հաճախ ստիպված են իրենց համար անընդունելի գաղափարներ ընդունել:
 -



ՆՊՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Ընտրի՛ր որևէ սոցիալական խումբ, որը ստեղծվել է՝ ըստ անդամների նախասիրությունների (բնապահպաններ, ֆուտբոլասերներ, շախմատասերներ և այլն): Կատարի՛ր հետազոտություն ստորև թվարկված կետերի շուրջ.

- Խմբի տեսակ (համառոտ նկարագրի՛ր)
- Խմբի ընդհանուր նպատակ
- Խմբի անդամների հարաբերություններ, հարաբերությունները կարգավորող կանոններ
- Խմբում ընդունված արժեքներ
- Ինչո՞ւ դառնալ այդ խմբի անդամ
-

Ըստ հետազոտության արդյունքների՝ կազմի՛ր այնպիսի պատասառ, որը շահագրգռի դասընկերներիդ դառնալու այդ խմբի անդամ:



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Քո շրջակա միջավայրում կա՞ այնպիսի խնդիր, որի միանձնյա լուծումը դժվարությամբ ես պատկերացնում: Սահիկաշարով ներկայացրո՞ւ փոքրիկ ծրագիր՝ անդրադառնալով հետևյալ հարցերին.

- Լուծման կարիք ունեցող խնդրի ներկայացում:
- Լուծման համար անհրաժեշտ խմբի ստեղծում:
- Խմբի նկարագիր (քանի՞ անդամ կա, ովքե՞ր են, ի՞նչ մասնագիտության տեր են):
- Խմբում պարտականությունների բաժանում՝ ըստ սահմանված նպատակի:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 1

Ենթադրենք՝ երկիր մոլորակից ոչ հեռու նոր մոլորակ է հայտնաբերվել, որը շատ նման է երկրին: Սակայն կա մի տարբերություն. այն բնակեցված չէ: Նոր բնակավայր ստեղծելը հեշտ բան չէ: Այդ նպատակով ստեղծվելու է «Խորհրդատու մասնագետներ» ժամանակավոր սոցիալական խումբը, որի անդամների ընտրությունը կատարվելու է ստորև բերված մասնագետների ցանկից:

Պարտադիր պայմաններ (*կարող եք նաև ավելացնել այլ պայմաններ*).

- Խմբի անդամների քանակը չգերազանցի 5 հոգին:
- Պահպանվի գենդերային հավասարության սկզբունքը:
- Մեծամասնություն կազմեն մինչև 40 տարեկան մասնագետները:

Մասնագետների ցանկ

Ուսուցչուհի, 45 տարեկան	Մարզիկ, աշխարհի չեմպիոն, 26 տարեկան
Գյուղատնտես, 41 տարեկան	Երաժիշտ, 24 տարեկան
Ատաղծագործ, 56 տարեկան	Շինարար, 49 տարեկան
Կենսաբան, 27 տարեկան	Երկրաբան, 32 տարեկան
Խոհարար, 34 տարեկան	Փաստաբան, 42 տարեկան
Բժիշկ, 37 տարեկան	Բնապահպան, 29 տարեկան
Ճարտարագետ, 32 տարեկան	Զինվորական, 38 տարեկան
Հոգևորական, 51 տարեկան	Քաղաքագետ, 55 տարեկան
	Ծրագրավորող, 22 տարեկան
	Պատգամավոր, 49 տարեկան

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2

«Հորիզոնին չհասած» գրվածքից դ՛րս գրեք «ընտանիք» սոցիալական խմբին հեղինակի տված բնութագրիչները և ստեղծե՛ք պաստառ կամ սահիկաշար:

Սուշեղ Բաբայան ՀՈՐԻԶՈՆԻՆ ՉՀԱՍԱԾ

(հարված)

Ընտանիքը, տղա՛ս, ճշտի ու սխալի, արդարի ու անարդարի, չարի ու բարու հարթակ չէ, ընտանիքը շատ կողմերով իրարից տարբեր մարդկանց միությունն է, որտեղ բոլորն ավելի շատ սիրում են միմյանց թերությունները, քան առավելությունները, որտեղ մեկի ցավը բոլորի ողբերգությունն է, հաջողությունը՝ բոլորի երջանկությունը: Ընտանիքը սեր ու խնամք է քեզնից մեծի ու քեզնից փոք-

րի նկատմամբ: Ընտանիքը տատից հարսիկին, նրանից էլ թռնուիռն անցնող խոսքկապի մատանի է, պապից որդուն, որդուց էլ թռռանն անցնող արժանապատիվ անուն, ազգանուն: Ընտանիքն այն է, երբ կորուստներն ու ձեռքբերումները դառնում են ընդհանուր ավստասանքի կամ համատեղ ոգևորության պատմություն: Երբ մեկի պակասն ու բացակայությունը երբեք որևէ այլ մեկով չի

լրացվում, իսկ ընդմիջտ հեռացածին փոխարինում են պատի լուսանկարից մյուսներին նայող նրա հայացքի տակ հազարերորդ անգամ կրկնվող նրա մասին ջերմ պատմություններով ու հիշողություններով: Որդի՛ս, ընտանիքն այն է,

երբ դրսում գտնվող տան անդամին մյուսները մինչև ուշ գիշեր անհամբեր սպասում, համատեղ դիմավորում, կերակրում և միայն դրանից հետո տան դուռը կողպելով՝ կարողանում են հանգիստ քուն մտնել...



ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Ինչ է հասարակությունը	
Ինչ է սոցիալականացումը	
Սոցիալականացման փուլերին բնորոշ առանձնահատկությունները	
Հասարակական խմբերի առանձնահատկությունները	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Բացատրել հասարակության ստեղծման անհրաժեշտությունը	
Բացատրել հասարակության դերը անձի ձևավորման գործում	
Տարբերակել հասարակության մեծ ու փոքր խմբերը	
Ներկայացնել հասարակության սոցիալական կազմը	

Թեմա 3. ՄԱՐԴ-ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՔԱԳԻԾ

3.1. ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ



ԵԶՐՈՒՅՑՆԵՐ

Ճանաչողություն, վարք, վարքագիծ

Ճանաչողություն — շրջապատող աշխարհի և սեփական անձի մասին գիտելիքներ ձեռք բերելու գործընթացը:

Վարք — պահանջմունքների բավարարմանն ուղղված ակտիվություն:

Վարքագիծ — վարքի առանձին հատկանիշների դրսևորում:

Աղյուսակի առաջին սյունակում նշի՛ր այն սոցիալական խմբերը, որոնց անդամ ես համարում քեզ: Երկրորդ սյունակում նշի՛ր այն միջոցները, որոնք նպաստում են քո ճանաչողության գործընթացներին տվյալ միջավայրում:

Սոցիալական խումբ	Ճանաչողական գործընթացներ	Միջոց
Դպրոց	Առարկայական գիտելիքների ձեռքբերում	Դասեր, հասակակիցների հետ շփում, դասագրքեր...



ԲԱՌԱՂԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅՑՆԵՐ: Ճանաչողություն, վարքագիծ, զգայարան, զգայություն, զգայական ճանաչողություն, բանական ճանաչողություն, ինքնաճանաչում, դրդապատճառ

Զգայություն — տվյալ պահին զգայարանների վրա ազդող առարկաների և երևույթների առանձին հատկանիշների արտացոլումն է:

Դրդապատճառ — այն մտքերը կամ հույզերն են, որոնք մարդուն մղում են որոշակի նպատակի ընտրության, այդ նպատակի ձեռքբերման համար անհրաժեշտ գործողությունների իրագործման:

Բառակազմական վերլուծությանն ենթարկիր «ինքնաճանաչում» բառը, ապա «ճանաչողություն» բառի բնորոշումից ելնելով՝ փորձի՛ր ինքդ սահմանել հասկացությունը:



ՈԱԶՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Եզրակացություն

Եզրակացություն կարող ես կատարել նախագիտելիքների, տեքստում եղած փաստերի ու սեփական փորձի հիման վրա: Ցանկացած գրվածք ընթերցելիս փորձի՛ր նաև «կարդալ տողարանքները», որպեսզի դուրս բերես տեղեկություն, որը չի տրվել հեղինակի կողմից բացահայտորեն, բայց որն անհրաժեշտ է, որ տեքստը հասկանալի դառնա:

Ընթերցի՛ր Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայր» ստեղծագործությունից մեջբերված հատվածը: Բնութագրի՛ր գլխավոր հերոսին:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննարկե՛ք հույն իմաստասեր Սոկրատեսի «Մարդու բոլոր չարիքների պատճառը չիմացությունն է» միտքը: Ինչքանո՞վ է ավելի քան 2600 տարի առաջ արտահայտված միտքն այսօր արդիական:

ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ

Դեռևս վաղ տարիքից մարդը դրսևորում է անսահման հետաքրքրություն այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում է նրա շուրջը: Նա ինքն իրեն հարց է տալիս. ի՞նչ է սա, ո՞վ եմ ես, ինչո՞ւ է եղանակը փոխվում, ինչո՞ւ մեքենաները չեն թռչում և այլն: Սրանք ճանաչողության պահանջմունքի բավարարման առաջին քայլերն են: Նա սկսում է աշխարհը ճանաչել իրեն շրջապատող միջավայրի հետ փոխհարաբերվելով: Այդ փոխհարաբերությունն իրականացվում է գործունեության ամենատարբեր ձևերի միջոցով՝ խաղ, ուսուցում, ստեղծարարություն, աշխատանք և այլն:

Ճանաչողությունը նոր գիտելիքի ձեռքբերման և զարգացման, դրա մշտական խորացման, ընդլայնման և կատա-

րելագործման գործընթացն է: Արտաքին աշխարհի երևույթների մասին մարդն առաջին ազդակները ստանում է զգայարանների միջոցով՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, հոտառության և ճաշակելիքի:

Զգայարանների աշխատանքի հետևանքով առաջանում են զգայություններ: Յուրաքանչյուր զգայություն առարկայի այս կամ այն հատկանիշի արտացոլումն է մարդու գիտակցության մեջ: Ականջների միջոցով մենք լսում ենք ձայներ, աչքերի միջոցով արտացոլում ենք առարկաների գույնը, շոշափելով զգում ենք նրանց կոշտությունը կամ փափկությունը, տաք կամ սառը լինելը: Սակայն հազիվ թե լինի որևէ առարկա, որը միայն մեկ հատկանիշ ունենա և

ճանաչվի մեկ զգայության միջոցով: Ընկալելով որևէ առարկա՝ աթոռ, ծաղիկ, կիտրոն և այլն, մենք միաժամանակ ունենում ենք մի շարք զգայություններ: Այդ զգայությունները մենք ունենում ենք ոչ թե առանձին–առանձին, այլ որպես մեկ միասնություն՝ իրենց փոխադարձ կապի մեջ: Ահա թե ինչու երբ մենք նայում ենք կիտրոնին, մեր գիտակցության մեջ առաջանում է կիտրոնի միասնական պատկերը, որն ունի մի քանի հատկանիշներ՝ դեղին երանգ, թթու համ, անհարթ մակերես: Ծանաչողության այս՝ **զգայական ձևը** հատուկ է նաև բարձրակարգ կենդանիներին: Բայց եթե կենդանիների ճանաչողությունը սկսվում և ավարտվում է զգայական աստիճանով, ապա մարդու ճանաչողությունը երկաստիճան է: Ծանաչողության երկրորդ՝ ավելի բարձր աստիճանն անվանվում է **մտածողություն** կամ **բանական** աստիճան:

Ծանաչողության առանձնահատուկ ձև է ինքնաճանաչումը: Այն ենթադրում է սեփական զգացմունքների, մտքերի, արարքների, իդեալների, ձգտումների խոր վերլուծություն: Ինքնաճանաչումը մարդուն դարձնում է պատասխանատու, ինքնուրույն որոշումներ կայացնող, և դրա արդյունքում առաջանում է ինքնավստահություն, և ձևավորվում ինքնագնահատական:

Մարդը ճանաչողության արդյունքում ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որոնք էլ օգնում է հասարակության մեջ ձևավորելու պատասխանատու վարքագիծ:

Մարդու **վարքը դրսևորվում է** հետևյալ հաջորդական փուլերով.

- 1–ին փուլ՝ դրդապատճառի առաջացում,
- 2–րդ փուլ՝ նպատակի և դրանց հասնելու միջոցների ընտրություն,
- 3–րդ փուլ՝ դեպի այդ նպատակներն ուղղված գործողություններ:

Դրդապատճառը կապող օղակ է **պահանջմունքների** և **արտաքին միջավայրի** միջև: Տարբերակում են դրդապատճառների երկու տեսակ՝ **գիտակցված** և **չգիտակցված**: Գիտակցված դրդապատճառների դեպքում անձը հստակորեն գիտի, թե ինչու է կատարում տվյալ գործողությունը, ինչն է իրեն մղում դեպի ակտիվության այդ տեսակը, և ինչն է իրեն հետ պահում տվյալ իրադրության մեջ այլ գործողություններ կատարելուց: Գիտակցված դրդապատճառներից են հետաքրքրությունները, երագանքներն ու ձգտումները, համոզմունքներն ու դիրքորոշումները: Իսկ չգիտակցված դրդապատճառները անձին մղում են գործունեության, որոշակի հոգեվիճակներ են առաջացնում՝ նրան անհայտ մնալով: Այդպիսի դրդապատճառներից են հակումները: Օրինակ՝ դեռահասը սեռական հասունացման շրջանում սկսում է հակում դրսևորել հակառակ սեռի նկատմամբ՝ առանց լիովին գիտակցելու իրեն ակտիվացնող ներքին ուժերի առկայությունն ու բնույթը: Մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքներից շատերը չգիտակցված են և գիտակցված են դառնում, երբ ուժեղանում են: Օրինակ՝ մենք չենք գիտակցում, որ ունենք շնչելու պահանջմունք, քանի դեռ շնչելն ինչ–որ պատճառով չի դժվարացել:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է մարդը ձգտում ճանաչելու աշխարհը:
2. Ինչպե՞ս է մարդը ճանաչում աշխարհը:
3. Փորձի՛ր վարքի հաջորդական փուլերի սխեմայի օգնությամբ ներկայացնել այն սովորողի վարքագիծը, որը ցանկանում է սովորել որևէ օտար լեզու:

Ռիչարդ Բախ

ՋՈՆԱԹԱՆ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ ԱՆՈՒՆՈՎ ՃԱՅՑ

(հայրված)

Ճայերի մեծ մասը չի ձգտում թռիչք-ներից որևէ բան հասկանալ, բացի ամենաանհրաժեշտից, ափից հասնել մինչև կերը և վերադառնալ: Ճայերի մեծ մասի համար գլխավորը կերն է, ոչ թե թռիչքը:

Իսկ այդ ճայի համար գլխավորը կերը չէր, այլ թռիչքը: Աշխարհում ամեն բանից ավելի Ջոնաթան Լիվինգսթոնը սիրում էր ճախրել:

Ինչո՞ւ էր Ջոնաթան Լիվինգսթոնի համար ճախրելը կարևոր:

Բայց նման տենդը, ինչպես հասկացավ, թռչուններին հարգանք չէր ներշնչում: Նույնիսկ ծնողները անհանգստացած էին, որ Ջոնաթանն օր ու գիշեր մենության մեջ է և իր փորձերով տարված՝ նորից ու նորից սավառնում է հենց ջրի երեսին:

Նա, օրինակ, չէր հասկանում, թե ինչու իր թևերի կես բացվածքից պակաս բարձրություն թռչելիս կարողանում էր գրեթե առանց ջանքի օդում երկար մնալ:

Նրա ճախրող վայրէջքը չէր ավարտվում ջրում ընկղմվող թաթերի սովորական ճողփյունով, այլ՝ երկար փրփրադեզ շիթով, որը ծնվում էր, հենց որ թաթերը կիպ սեղմած Ջոնաթանի իրանը կաչում էր ծովի մակերևույթին: Երբ նա սկսեց թաթերը սեղմած սավառնել դեպի ափ, իսկ հետո քայլերով չափել ավազի վրա թողած իր հետքը, ծնողները, բնական է, լրջորեն անհանգստացան:

Պարբերությունից դո՛ւրս գրիր այն հուշումները, որոնք դրդապատճառ են Ջոնաթանի ճանաչողության ձգտման համար:

Ո՞ր տվյալներն են հուշում, որ Ջոնաթանը ձեռքբերումներ ունեցավ աշխարհը ճանաչելու գործում: Կբավարարվի՞ արդյոք նա այդ ձեռքբերումով:

— Ինչո՞ւ, Ջոն, ինչո՞ւ,— հարցրեց մայրը:— Ինչո՞ւ չես կարողանում քեզ այնպես պահել, ինչպես բոլորս: Ինչո՞ւ ջրի վրայով թռչելը չես թողնում ձկնկուլ-

ներին ու ալբատրոսներին: Ինչո՞ւ ոչինչ չես ուտում: Միայն փետուրներդ ու ոսկորներդ են մնացել, որդի՛ս:

— Մայրի՛կ, թող որ միայն փետուր ու ոսկոր դառնամ: Ուզում եմ գիտենալ, թե ինչ կարող եմ անել օդում, ինչ՝ ոչ: Ես պարզապես ուզում եմ իմանալ:

— Լսի՛ր, Ջոնաթան,— բարյացակամ ասաց հայրը,— ձմեռը սարերի հետևում չէ: Ձկնորսանավերը կսկսեն հազվադեպ երևալ, իսկ ձուկը, որ հիմա լողում է ջրի երեսին, կիջնի խորքերը: Եթե անպայման ուզում ես սովորել, ուսումնասիրի՛ր կերը, սովորի՛ր սնունդ հայթայթել: Թռիչքներն, իհարկե, լավ բան են, բայց միայն թռչելով չես կշտանա: Մի՛ մոռանա՝ թռչում ես, որ ուտես:

Ջոնաթանը հնազանդորեն գլխով արեց: Մի քանի օր նա աշխատում էր անել այն, ինչ մյուսները ջանում էր ամբողջ ուժով, զիլ ճշում էր, կառամատույցների ու ձկնորսանավերի մոտ կռիվներ սարքում ցեղակիցների հետ, ձկան ու հացի կտորտանքի հետևից սուզվում էր ջրի մեջ: Բայց ոչինչ չէր ստացվում:

«Ի՞նչ անմտություն,— մտածեց նա և դժվարությամբ ձեռք զցած սարդիկաձկան կտորը վճռականորեն շարտեց իր հետևից ընկած ծեր, քաղցած ճային:— Ես կարող էի այս ամբողջ ժամանակը հատկացնել թռչել սովորելուն: Դեռ այն-քան շատ բան ունեմ իմանալու»:

Պահանջմունքների ո՞ր տեսակն էր առաջնահերթություն Ջոնի համար՝ հոգևո՞ր, թե՞ նյութական:

Եվ ահա Ջոնաթանը կրկին միայնակ է հեռու ծովում՝ քաղցած, երջանիկ, հարցախույզ: Նա ուսումնասիրում էր թռիչքի արագությունը և մարզումների մեկ շաբաթվա ընթացքում արագության մասին ավելի շատ իմացավ, քան ամենաարագընթաց ճայն այս աշխարհում:

Ծովի վրա հազար ֆուտ բարձրացավ և ամբողջ ուժով թևերը թափահարելով՝ իրեն շեշտակի նետեց խոյաթռիչքի ու հասկացավ, թե ինչու են խոյահար թռիչքի ժամանակ ճայերը թևերը ծալում: Արդեն վեցերորդ վայրկյանին նա թռչում էր ժամում յոթանասուն մղոն արագությամբ, մի արագություն, որի դեպքում թևը թափահարման պահին կորցնում է կայունությունը:

Միշտ նույն բանն էր ստացվում: Ինչ ջանք էլ որ չէր թափում, ինչպես էլ ուժերը

որ չէր լարում, բարձր արագության ժամանակ կորցնում էր կառավարումը:

Հազար ֆուտ վերելք: Հզոր պոկում, անցում խոյաթռիչքի, թևերի լարված թափահարում և ուղղաձիգ անկում: Իսկ հետո ձախ թևը վեր թափահարելիս հանկարծ քարանում էր, ինքը շեշտակի ձախ էր թեքվում, հավասարակշռությունը վերականգնելու համար դադարում էր աջ թևով թափ տալուց և, կարծես բոցով բռնկված, աջ թևի վրայով գլուխկոնծի տալով՝ ընկնում էր պտուտածն անկման մեջ:

Չնայած բոլոր ջանքերին՝ վեր թափահարել չէր կարողանում: Տասը փորձ արեց, և տասն անգամ էլ հենց արագությունը գերազանցում էր ժամում յոթանասուն մղոնը, նա վերածվում էր փշաքաղված փետուրների չկառավարվող գնդի ու քարի պես ընկնում ջուրը:

Մինչև վերջին փետուրը թրջվելուց հետո վերջապես հասկացավ Ջոնաթանը, որ ամբողջ խնդիրն այն է, որ բարձր արագությունների ժամանակ անհրաժեշտ է բացված թևերը պահել միևնույն դիրքով՝ թափահարել, քանի արագությունը չի հասել ժամում հիսուն մղոնի, իսկ հետո պահել միևնույն դիրքով:

Նա բարձրացավ երկու հազար ֆուտ, մի անգամ էլ փորձեց, խոյաթռիչքի մեջ

կտուցը ձգեց ներքև, տարածեց թևերը, իսկ երբ հասավ ժամում հիսուն մղոն արագության, դադարեց թափահարելուց: Անհավատալի լարվեց, բայց հասավ նպատակին: Տասը վայրկյան նա անորսալի ստվերի նման սլանում էր ժամում հիսուն մղոն արագությամբ: Ջոնաթանը ճայերի համար արագընթաց թռիչքի համաշխարհային ռեկորդ սահմանեց:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի մի բերելով ճային տրված հատկանիշները՝ բնութագրի՛ր այն մարդուն, որին ներկայացրել է հեղինակը Ջոնաթանի կերպարի միջոցով:
2. Վերհիշի՛ր, թե որն է պատկերավորման այն հնարքը, որի միջոցով կենդանիներին շնչավորում են՝ նրանց մարդկային հատկանիշներ վերագրելով:
3. Լսե՛լ ես «հոսանքին հակառակ գնալ» արտահայտությունը: Ինչպե՞ս ես վերաբերվում հոսանքին հակառակ գնացողներին: Խոսքդ հիմնավորի՛ր ճայի օրինակով:
4. Կարո՞ղ ես նմանատիպ իմաստ ունեցող այլ թևավոր խոսքեր ու արտահայտություններ մտաբերել:
5. Ինչպե՞ս հանգուցալուծվեց Ջոնի ներանձնային կոնֆլիկտը՝ իմացության պահանջմունքի և նյութական պահանջմունքի հակասությունը:
6. Ի՞նչ նշանակություն ունեւ ստեղծագործության հերոսի համար թռչել սովորելը:
7. Ինչո՞վ էր Ջոնաթանը առանձնանում մյուս բոլոր ճայերից:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Ուսումնասիրի՛ր, թե ով է եղել Ջոնաթան Լիվինգսթոնը, և նախապատրաստի՛ր համառոտ ելույթ, թե ինչու է ստեղծագործության հերոսը կոչվել հենց այդ անունով:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Գնահատի՛ր Ջոնաթան Լիվինգսթոնի աշխարհաճանաչողության ձգտումը:
2. Որքանո՞վ ես արդարացված համարում Ջոնաթան Լիվինգսթոնի ընտրությունը՝ աշխարհաճանաչողություն, թե՞ միայն հասակակիցների հետ խաղ ու ձկան որս:
3. Ջոնի հատկանիշներից ընտրի՛ր այն առանցքայինները, որոնց շնորհիվ նա հասավ իր նպատակին:

4. Ընտրի՛ր, թե ներքոնշվածներից որն էր Ջոնաթան Լիվինգսթոնի՝ ամեն կերպ նպատակին հասնելու հիմնական դրդապատճառը.
- Աշխարհը ճանաչելու ձգտումը:
 - Ինքնաճանաչման ձգտումը:
 - Ծնողներին ու հասակակիցներին ապացուցելը, որ ինքը կարող էր:
 - Ինքն իրեն ապացուցելը:
 -



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

1. Կա տեսակետ, որ նկարիչներն ինքնանկարներ են նկարել, քանի որ բնորոշ չեն ունեցել: Իսկ ինքնաճանաչողությունը կապ ունի՞ ինքնանկար կերտելու հետ:
2. Ստեղծի՛ր սահիկաշար՝ «Ինքնաճանաչում և ինքնանկար» թեմայով: Ամբողջացրո՛ւ հայտնի նկարիչների ինքնանկարների շարքը՝ իրենց կից նկարագրություններով, և ներկայացրո՛ւ դասարանին:



Ֆրիդա Կալո. «Ինքնանկար»

Մեքսիկացի հայտնի նկարիչ, որ առավել հայտնի է իր դիմապատկերներով, ինքնանկարներով: Մոտ 150 նկար է նկարել, որոնցից 55-ը՝ ինքնանկար:

«Ես ինքնանկարներ եմ նկարում, քանի որ ես այն մարդն եմ, որին ամենալավն եմ ճանաչում»:

3.2. ՀՈՒՅՋԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Հոյզ

Հոյզ — մարդու վերաբերմունքի և գնահատականի յուրահատուկ արտահայտությունն է, բնագրների, պահանջմունքների, դրդապատճառների հետ կապված հոգեկան վիճակների և գործընթացների համակարգը:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Հոյզ, դրական հոյզ, բացասական հոյզ, առաջնային հոյզ, երկրորդային հոյզ

Հոյզ — հոգեկան ապրում, զգացմունք:

Դրական հոյզ — այն հոյզերը, որոնք առաջանում են պահանջմունքների բավարարման արդյունքում:

Բացասական հոյզ — այն հոյզերը, որոնք առաջանում են պահանջմունքների բավարարման խոչընդոտման արդյունքում:

Առաջնային հոյզ — ինքնաբերաբար ծագող հոյզերը:

Երկրորդային հոյզ — հիմնական հոյզերի միաձուլումից առաջացող հոյզերը:

Տրված հոյզերը լրացրո՛ւ աղյուսակում՝ հետևելով օրինակին:

Ուրախություն, վախ, զայրույթ, արհամարհանք, համակրանք, ընկճվածություն, կարեկցանք, նախանձ, հաճույք

Աղյուսակ 1

Հոյզ	Հոյզի տեսակ	Հոյզի առաջացման պատճառ	Հոյզի արտաքին դրսևորում
Կարոտ	Բացասական, առաջնային	Որևէ մեկի կամ որևէ բանի բացակայություն	Խոր շունչ քաշել, հոգոց հանել, շրթունքները միացնել, թախծոտ հայացք ընդունել, լաց լինել

ԱՆԾԱՆՈՑ ԲԱՒԵՐ

Նորմ — ընդհանուր ճանաչում գտած կանոն, կարգ:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապերի ստեղծում



ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Բացասական հույզը հաճախ մեզ ստիպում է ...
2. Դրական հույզի ազդեցության տակ մենք ...
3. Մարդն օժտված է բանականությամբ, որպեսզի հասկանա, որ միայն բանականությամբ չի կարող ապրել:
4. Այն մարդիկ, որոնք ունեն սեփական հույզերը կառավարելու հմտություններ՝
 - ավելի քիչ են ենթարկվում սթրեսների և քիչ են անհանգստանում,
 - հեշտությամբ տիրապետում են հաղորդակցման հմտություններին,
 - նախաձեռնող են, ակտիվ, իրականացնում են բազում ստեղծագործական գաղափարներ:

ՀՈՒՅՋԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարդը ոչ միայն ճանաչում է շրջապատող աշխարհը, այլև իր վերաբերմունքն է դրսևորում այն ամենի նկատմամբ, ինչին առնչվում է: Աշխարհի երևույթների, մարդկանց և իր անձի նկատմամբ վերաբերմունքը մարդն արտահայտում է ոչ միայն մտածողության, խոսքի, այլև հույզերի միջոցով: Նա գնահատում է դրանք, հաճույք կամ տհաճություն է զգում, զարմանում է կամ հիանում:

Հույզերը յուրահատուկ ազդանշաններ են արտաքին վտանգների մասին: Օրինակ՝ վախի դրսևորումներից մեկը լացն է: Երբ երեխան լաց է լինում, մենք շտապում ենք պարզել, թե ինչն է նրա անհանգստության պատճառը: Ընդ որում՝ հույզերը հաճախ ավելի շուտ են հայտնում մեզ մոտեցող վտանգի մասին, քան մեր մտածողությունը:

Հիշի՛ր դեպք, երբ դու վախեցել ես: Ինչպե՞ս է այն դրսևորվել:

Հուզական վիճակներն ազդարարում են նաև ներքին վտանգի մասին: Դրանք անմիջականորեն կապված են օրգանիզմում կատարվող ֆիզիոլոգիական գործընթացների հետ: Երբ մարդը զայրանում է, նրա սրտի աշխատանքն արագանում է, իսկ վախի դեպքում ծարավ է զգում:

Կան գործընթացների հետ: Երբ մարդը զայրանում է, նրա սրտի աշխատանքն արագանում է, իսկ վախի դեպքում ծարավ է զգում:

Քո մեջ էլ են զայրույթն ու վախը այդպիսի ֆիզիոլոգիական արձագանքներ ստանում: Փորձի՛ր հիշել այդպիսի իրավիճակներ:

ՀՈՒՅՁԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարդկանց հույզերի աշխարհը շատ հարուստ ու բազմազան է: Հույզերը լինում են **դրական** և **բացասական**, **հիմնական** և **երկրորդային**: Այն ամենը, ինչը նպաստում է պահանջմունքների բավարարմանը, առաջացնում է **դրական հույզեր**, իսկ այն ամենը, ինչը խոչընդոտում է պահանջմունքների բավարարումը, առաջացնում է **բացասական հույզեր**: Մարդու **հիմնական հույզեր** են ուրախությունը, տխրությունը, վախը, զարմանքը, կանխազգացումը, հետաքրքրվածությունը, համակրանքը, զզվանքն ու զայրույթը: Սրանք կոչվում են նաև **առաջնային հույզեր**, քանի որ ծագում են ինքնաբերաբար, այլ ոչ թե ուսուցման հետևանքով: Երկրորդ՝ դրանցից յուրաքանչյուրը մարդուն մղում է այնպիսի գործողությունների, որոնք կյանքի համար էական նշանակություն ունեն: **Երկրորդային** կոչվում են այն հույզերը, որոնք առաջանում են հիմնական հույզերի միաձուլումից: Զարմանքի և տխրության միաձուլումից առաջանում է հուսախաբություն, իսկ զայրույթն ու զզվանքը միաձուլվելով հանգեցնում են արհամարհանքի:

Միևնույն հույզը կարող է դրսևորվել տարբեր իրադրություններում և ունենալ ուժգնության տարբեր աստիճաններ: Միևնույն հույզի տարբեր աստիճանները կրում են տարբեր անուններ: Օրինակ՝ միևնույն հույզի տարբեր աստիճաններ են տագնապը, վախը և սարսափը:

Հույզերն ունեն նաև **արտաքին դրսևորում**. դրանք արտահայտվում են մարդու շարժումներում, հատկապես դիմախաղում՝ դեմքի զանազան արտահայտությունների ձևով: Ուրախանալիս մարդու շրթունքների անկյունները հետ են քաշվում, շրթունքները կորանում են, իսկ զարմանալիս մարդու հոնքերը բարձրանում են, աչքերը՝ լայնանում, չվում, բերանը լայն բացվում ու կլորանում է: Հույզերի արտաքին արտահայտությունները դրսևորվում են դեմքի վրա, դեմքը գունատվում է կամ կարմրում: **Հույզն ու Կեսարը** զինվոր ընտրելիս առաջնորդվում էր հենց դրանով. վտանգի ժամանակ ում դեմքը կարմրում էր, նրան վերցնում էր, ումը գունատվում, մերժում էր:

Փորձի՛ր նկարագրել այն արտաքին հուզական դրսևորումները, որ ունենում ես դու ուրախության, զայրույթի պահերին:

Հույզերը մեծ ազդեցություն ունեն մարդու վարքագծի և մտածողության վրա:

Կան հուզական վիճակներ, որոնց ընթացքում մարդն իրեն ավելի ուժեղ ու ճարպիկ է զգում: Օրինակ՝ վայրի գազանից սարսափահար փախչող մարդը կարող է կապկի ճարպկությամբ ծառը

բարձրանալ կամ բարձր պատի վրայից ցած թռչել ու փրկվել: Իսկ օրինակ՝ թախիծ ու վիշտ ապրող մարդը կարող է դառնալ անգործունյա և անհաղորդ:

Հույզերը մեր մտքերի ուղղակի արտացոլանքն են: Եթե մենք մտածում և տրամադրվում ենք լավատեսորեն, ապա

ստանում ենք դրական հույզեր: Ընդհակառակը՝ երբ մռայլ, ճնշող մտքերի ազդեցության տակ ենք, բացասական հույզեր ենք ստանում: Երբ մեր գլխում ուրախ մտքեր են ծագում, մենք մեզ երջանիկ ենք զգում, իսկ մռայլ մտքերից մեզ դժբախտ ենք զգում:

Հույզերը որոշակի շարժունություն են հաղորդում մարդու իմացական գործընթացներին: Եթե, օրինակ, մարդը հրճվանքի մեջ է, ապա նրա մտածողությունը կարող է ակտիվանալ և արագանալ: Մինչդեռ թախիծը, տրտմությունը, կարոտը կարող են արգելակել մտածողությունը, բայց ակտիվացնել երևակայության աշխատանքը և զանազան հույ-

շեր արթնացնել մարդու մեջ: Դրական հույզերն ավելի արդյունավետ են դարձնում սովորելը:

Չափազանց կարևոր է կարողանալ կառավարել սեփական հույզերը: Կառավարել հույզերը նշանակում է հասկանալ և գիտակցել դրանք: Կառավարել հույզերը ամենևին էլ չի նշանակում ճնշել դրանք: Հույզի զսպումը հանգեցնում է ինքնազգացողության և առողջական վիճակի վատթարացման: Ցանկացած հույզ, նույնիսկ բացասական, պետք է արտահայտել: Հետևաբար կարևոր է ոչ միայն ճանաչել, այլև կառուցողաբար արտահայտել սեփական հույզերն ու զգացմունքները:



ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դասընկերներով համեմատե՛ք աղյուսակ 1-ում լրացված տվյալները: Ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ վեր հանեցիք:
2. Մնջախաղի միջոցով ներկայացրե՛ք դասանյութում ներկայացված հույզերը:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Դասարանին ներկայացրո՛ւ հույզերը կառավարելու քո եղանակները: Իրավիճակային օրինակներ բերելով՝ փորձի՛ր համոզիչ ներկայացնել այդ եղանակների արդյունավետությունը:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ի՞նչ ես կարծում, կարևոր է արդյոք հանրային տարածքներում կառավարել հույզերը: Պատասխանդ հիմնավորի՛ր օրինակներով:
2. Ինչպե՞ս ես վերաբերվում այն իրավիճակին, երբ հանրային տարածքում ուրախությունն արտահայտում են հրավառության միջոցով:
3. Ինչպե՞ս են հույզերն ու մտածելակերպն ազդում կայացրած որոշումների և վարքագծի վրա:



ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ներկայացված իրավիճակները՝ փորձի՛ր կանխատեսել, թե ինչ հետևանքների կարող են հանգեցնել դրական և բացասական հույզերի դրսևորումները:

Իրավիճակ 1

Աշխատանքային օրվա ավարտն էր: Ավտոբուսի մեջ նստելու տեղ չկար: Կանգնած ուղևորները, մի կերպ իրար հենված, հոգնած հայացքներով նայում էին փողոցներին՝ իրենց կանգառում իջնելու սպասումով: Վարորդի հեռախոսը զանգեց: Անտեսելով սահմանված կարգը և պատասխանելով զանգին՝ նա հանկարծ սկսեց գոռգոռալ, դեկը թողնելով՝ ձեռքերը բարձրացնել: Ընթացքի արագությունը սաստկացավ, կանգնածները սկսեցին կառչել իրարից: Նստածները վախից սկսեցին բողոքել, վարորդն ավելի բորբոքվեց, վարում էր առանց կանգառ անելու, ուղևորները խուճապի մեջ էին...

Իրավիճակ 2

Դպրոցում վերջին դասաժամն էր: Հակոբն անհամբեր սպասում էր, թե երբ դուրս կվազի: Նա թիմային աշխատանքում հաջողել էր և արժանացել ընկերների գովասանքին: Զանգի ձայնը դեռ չէր դադարել, երբ դուրս թռավ, օգնեց մի փոքրիկի փողոցն անցնելու: Տուն տանող ճանապարհին նա հանդիպեց իրենց հարևանին, որը, ծանր տոպրակները ձեռքին, դանդաղ քայլում էր: Առաջարկեց իր օգնությունը, ուղեկցեց մինչև մուտքի դուռը և ինքնագոհ ժպիտով վազեց տուն:




ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

1. Պատրաստի՛ր «Հույզերը արվեստում» վերնագրով սահիկաշար՝ ներառելով արվեստի տարբեր ճյուղերից ստեղծագործություններ, որոնք արտահայտում են որոշակի հույզեր և գուցե վերնագրված են հենց հույզի անունով:
2. Դասարանում ունկնդրե՛ք Տիգրան Մանսուրյանի «Մեր մանկության տանգոն» երաժշտությունը: Թվարկե՛ք հույզեր, որ առաջացան ունկնդրման ընթացքում:



3. Ուսումնասիրի՛ր Վարդգես Սուրենյանցի «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» և Արշիլ Գորկու «Նկարիչը և Նրա մայրը» նկարները, շարադրի՛ր այն հույ-

զերը, որոնք տեսնում ես պատկերներում: Որոնի՛ր լրացուցիչ տեղեկություններ հայ նկարիչների կյանքի և գործունեության մասին:



*Վարդգես Սուրենյանց
«Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ»*



*Արշիլ Գորկի
«Նկարիչը և նրա մայրը»*

3.3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Հաղորդակցություն — փոխներգործության գործընթաց է, որի ընթացքում տեղի է ունենում տեղեկատվության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն մի անձից մյուսը:

Հաղորդակցում — մարդկանց միջև միմյանց ճանաչելու և իրար վրա ազդելու սոցիալական գործընթաց, որի ընթացքում ծագում, ձևավորվում, դրսևորվում են միջանձնային հարաբերությունները:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Հաղորդակցություն, խոսքային հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում, խոսք, ժեստ, պատկեր, էմոջի, դիմախաղ, մեդիա

Հաղորդակցություն — լատիներենից (communico) թարգմանաբար նշանակում է մասնակցել, ընդհանուր դարձնել, միասին տիրել:

խոսք — խոսքը լեզվի միջոցով տեղի ունեցող հաղորդակցումն է:

ժեստ — ազդանշաններ, որոնք փոխանցվում են ձեռքերի, ոտքերի, գլխի, մարմնի օգնությամբ:

էմոջի — գաղափարագրերի և զմայլիկների լեզու, որն օգտագործում են էլեկտրոնային նամակներում և կայքէջերում:

Դիմախաղ — դեմքի մկանների շարժումներ, որոնք արտահայտում են մարդու այս կամ այն զգացմունքը, տրամադրությունը:

Պատկեր — հաղորդակցության առավել ընդհանրական կիրառության միջոց (նկար, լուսանկար, վահանակներ, նշաններ և այլ):

Մեդիա — մեդիա կամ մեդիում բառը հունարեն նշանակում է միջնորդ: Այն հաղորդակցության միջոց է և տեղեկատվության տարածման եղանակ:

Անձանոթ բառեր

Գաղափարագիր — պայմանական գրային նշան, որով նշանակվում է ամբողջական հասկացություն, միտք:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մտապատկերում

Եթե հաղորդակցման ընթացքում, բացի հաղորդվող տեղեկությունից, ուշադրություն դարձնես նաև տարբեր ձևերով արտահայտվող հույզերին, դա քեզ կօգնի ավելի լավ հասկանալու խոսքը:

Անկախության հռչակագրի մասին տեսանյութը դիտելիս ուշադրություն դարձրու, թե ինչ հույզեր ես ստանում Արամ Մանուկյանի և Վազգեն Ա կաթողիկոսի խոսքը լսելիս, և որքանով են դրանք օգնում քեզ ավելի լավ հասկանալու ելույթը:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Բնությունը մարդուն պարզևեղ է մեկ լեզու և երկու ականջ՝ դրանով իսկ ակնարկելով, որ միշտ հարկավոր է ավելի շատ լսել, քան խոսել:
- Ինչպե՞ս ես շփվում շրջապատիդ մարդկանց հետ: Ի՞նչն է քեզ օգնում ավելի հասկանալի լինելու դիմացինի համար:
- Բեռնարդ Շոուն ասում էր, որ գոյություն ունի «այո» կամ «ոչ» ասելու մեկ ձև, բայց արտասանելու 50 եղանակ:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Մարդկանց համատեղ ապրելու և աշխատելու անհրաժեշտ պայմանը միմյանց հետ հաղորդակցությունն է: Հաղորդակցվելով մարդիկ փոխանակում են մտքեր, տեղեկույթ, կիսվում են հույզերով, կարողանում են ճանաչել միմյանց, իմանալ դիմացինի սովորությունները, ձգտումները, նախասիրությունները և դրա շնորհիվ փոխհարաբերություններ կառուցել: Կախված նրանից, թե ինչ ձև, բովանդակություն, որակ ու նպատակ ունի հաղորդակցությունը, այն կարող է մարդկանց միավորել կամ հեռացնել իրարից:

Հաղորդակցության՝ մարդուն հայտնի ձևերն ու ուղիները, սկսած քարանձավներում թողած ժայռապատկերներից մինչև հեռահաղորդակցության բարդ սխեմաները, կառուցված են բնության և

շրջակա միջավայրի տարաբնույթ փոխհարաբերությունների օրինակով: Բնության ձայներին նմանակելով՝ նախամարդը բանավոր ազդանշաններ է հորինել, վայրի կենդանիների ոտնահետքերին հետևելով՝ ժայռերի վրա պարզ պատկերներ է նկարել: Մեր օրերում արդեն համացանցով մեծածավալ տեղեկությունների փոխանակման հիմքում ընկած են տեղեկույթի նշանագրումը/ծածկագրումը (կոդավորումը) և այդ նշաններով հաղորդակցության բարդ սխեմաների կառուցումը:

Հին դարերից մեզ հասած հուշարձաններն ու գտածոները, ազգային երգերն ու պարերը, սովորությունները, ծեսերը, հեքիաթներն ու էպոսները անցյալից ապագա հասցեագրած հաղորդա-

գրություններ են, որոնք վերծանում են հնագետներն ու ազգագրագետները:

Ըստ տեղեկատվության փոխանցման ձևերի՝ հաղորդակցությունը լինում է **խոսքային (վերբալ) և ոչ խոսքային (ոչ վերբալ)**: Խոսքային հաղորդակցությունը տեղի է ունենում բառերի միջոցով, իսկ ոչ խոսքային հաղորդակցությունը՝ ժեստերի, պատկերի, դիմախաղի (միմիկա), երաժշտության, շարժումների միջոցով:

Խոսքը հաղորդակցության ամենաբնական ձևերից մեկն է: Առօրյա կյանքում՝ ուսումնական և աշխատանքային գործունեության ընթացքում, խոսքն այն հիմնական միջոցն է, որը մարդկանց թույլ է տալիս մտքեր, տեսակետներ, գիտելիքներ հաղորդել միմյանց և հասնել փոխըմբռնման, ազդել միմյանց վարքի ու մտածելակերպի վրա: Թեև մարդիկ իրենց տրամադրության տակ ունեն նաև շփման ոչ խոսքային միջոցներ, ինչպես նաև նշանային այլ համակարգեր (օրինակ՝ փողոցային երթևեկության նշանները, երաժշտական նոտաները և այլն), սակայն դրանք միայն օժանդակ միջոցներ են: Այսպես՝ երաժշտության միջոցով կարելի է արտահայտել զանազան հույզեր, բայց ոչ հստակորեն ձևակերպված հասկացություններ ու մտքեր: Միևնույն երաժշտական ստեղծագործությունը լսելիս մարդկանց գլուխներում մտքեր, անշուշտ, ծագում են, բայց դրանք տարբեր անձանց համար տարբեր են:

Խոսքային հաղորդակցության ընթացքում օգտագործվում են խոսքի **բանավոր** և **գրավոր** տեսակները: Բանա-

վոր խոսքը իր հերթին հանդես է գալիս մենախոսության և երկխոսության ձևով:

Գրավոր հաղորդագրությունները կարող են պահպանվել, դրանք հաճախ ավելի լավ են ձևակերպված, քան բանավոր հաղորդումները: Գրավոր հաղորդագրություններն ունենում են նաև թերություններ, օրինակ՝ մարդիկ հաճախ ուշադիր և հետևողական չեն լինում հաղորդագրություններ ձևակերպելիս: Բանավոր հաղորդակցությունների գլխավոր առավելությունն այն է, որ հնարավոր է դառնում իրականացնել տեղեկության արագ և ամբողջովին փոխանցումը:

Ժեստը (շարժում) հաղորդակցության ամենահին ձևերից է: Ժեստերը գլխի, մարմնի շարժումներ են, օգտագործվել են հիմնականում կարճ ազդանշանների համար, բայց հետագայում հարստացել են նոր իմաստներով (օրինակ՝ խոլ ու համրերի լեզուն, պարի լեզուն): Ժեստերի մի մասի որոշակի իմաստը տարբեր մշակույթներում տարբեր է, սակայն կան նաև ժեստեր, որոնց նշանակությունը նույնն է:

Օրինակ՝ ամերիկյան «OK» ժեստը (ցուցամատը և բթամատը միացված են «O» տառի նման), որը նշանակում է «Ամեն ինչ լավ է», Ֆրանսիայում և Ռուսաստանում կարող է ընկալվել որպես զրո, Ճապոնիայում նշանակում է փող: Իսկ, օրինակ, ձեռքը կրծքին դնելը անկեղծություն արտահայտող ժեստ է: Այս ժեստը մեզ հայտի է դեռևս Հին Հռոմից. հռոմեական լեգեոնները միմյանց ողջունում էին մի ձեռքը սրտին դնելով, մյուսը՝ բաց ափով դիմացինին ցույց տալով:

Ի՞նչ ժեստեր եք առավել հաճախ կիրառում շրջապատի մարդկանց հետ հաղորդակցվելիս:



Արտահայտիչ շարժումներ: Խոսելիս մարդն իր ձեռքերով, գլխով ու ողջ մարմնով կատարում է մի շարք շարժումներ, որոնք, լրացուցիչ իմաստ կրելով, լրացնում ու ճշտում են խոսքի միջոցով արտահայտված նշանակությունները: Օրինակ՝ գլխի շարժումը վերից վար՝ իբրև հաստատման նշան («այո»), ձախից աջ՝ իբրև բացասման նշան («ոչ»):

Օրինակ՝ մարդու մասին բավակա-նաչափ տեղեկություն կարող է տալ նրա քայլվածքը. հաճախ քայլվածքից եզրակացնում են մարդու տրամադրության մասին, երբեմն կռահում են մասնագիտությունը՝ նավաստի, զինվորական, բալետի պարուհի:

Ամբողջ մարմնի կամ նրա առանձին մասերի շարժումներն արտահայտում են նաև մարդու ներքին հոգեվիճակը: Շատերը մտքում որևէ բարդ խնդիր լուծելիս տեղից վեր են կենում և սկսում անընդհատ հետուառաջ գնալ: Օրինակ՝ գրույցի

ժամանակ եթե նկատում ենք, որ գրուցակիցը ձեռքերը խաչում է, նշանակում է՝ ասել ենք ինչ-որ բան, որ նրան դուր չի եկել, և նա մեր կարծիքի հետ համաձայն չէ, չնայած խոսքերով նա կարող է համաձայն լինել:

Շարժումների մի մասը մարդու վարքում դրսևորվում ու ձևավորվում է ինքնաբերաբար, բայց կան բազմաթիվ շարժումներ, որոնք պայմանական են. դրանք մեզնից յուրաքանչյուրը սովորում է կյանքի ընթացքում: Օրինակ՝ դպրոցում մեզ սովորեցնում են, որ ձեռքը բարձրացնելը արտահայտվելու, հարցին պատասխանելու ցանկության նշան է:


Պատկերը (նկար, լոգո, վահանակներ, նշաններ և այլն) հաղորդակցության առավել ընդհանրական կիրառության միջոց է. կարելի է լեզուն չիմանալ, բայց պատկերով շատ բան հասկանալ:



Օրինակ՝ կարմիր խաչը Միջազգային հումանիտար կազմակերպության նշանն է: 1884 թ. տեղի ունեցավ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի առաջին միջազգային կոնֆերանսը, որի ժամանակ ընկերության խորհրդանշան ընտրվեց սպիտակ ֆոնի վրա կարմիր խաչը:

Էմոջին գաղափարագրերի և զմայ-
լիկների լեզու է, որն օգտագործում են
էլեկտրոնային նամակներում և կայքէ-
ջերում: Այդ գրաֆիկական լեզուն, որում

բառերի փոխարեն օգտագործում են
նկարների զուգակցումը, հայտնվել է
ճապոնիայում և տարածվել ամբողջ աշ-
խարհում:



Դիմախաղը (միմիկա) դեմքի մկան-
ների շարժումն է, որն արտահայտում է
մարդու ներքին հուզական վիճակներն
ու դիրքորոշումները: Այն հաղորդակցվե-
լու օժանդակ միջոցներից է, որն ուղեկ-
ցում է խոսքին, օգնում նրա արտահայտ-
չականությանը, արտահայտում մարդու
այս կամ այն զգացումը, հոգեկան ապ-
րումները, վերաբերմունքը, օրինակ՝
ժպիտ, հոնքերի կիտում և այլն: Հարուստ
տեղեկություն կարող են տալ հայացքն ու
աչքերի արտահայտությունը: Իզուր չեն
ասում, որ «աչքերը հոգու հայելին են»:

Պարզվում է, որ մարդիկ ավելի հաճախ
համակրանք են զգում իրենց հետ հա-
ղորդակցվող այն անձանց նկատմամբ,
որոնք ուղիղ նայում են իրենց աչքերին և
այն էլ՝ հաճախակի ու տևական: Ընդհա-
կառակը, եթե խոսակիցը խուսափում է
աչքերին նայելուց, ապա եզրակաց-
նում է, որ նա իրեն ինչ-որ բանով մեղա-
վոր է զգում: Անժպիտ դեմքը դիմացինին
կարող է վանել և տպավորություն ստեղ-
ծել, թե տվյալ անձը անմարդամոտ է,
անտրամադիր կամ ուզում է խուսափել
շփումից:



Դիմախաղ

Մեղիայի դերը հաղորդակցության մեջ: Հաղորդակցությունը լինում է չմիջնորդավորված և միջնորդավորված: Մարդկանց անմիջական հանդիպումները, շփումները, գրույցները չմիջնորդավորված հաղորդակցության ձևեր են: Պատմության տարբեր փուլերում մարդկությունը ուղղակի, պարզ շփումներից անցնում է միջնորդավորված, բարդ հաղորդակցության, որի համար անհրաժեշտ են հատուկ սարքավորումներ, տեխնոլոգիաներ, նոր հմտություններ ու մասնագիտություններ: *Մեղիա* կամ *մեղիում* բառը հունարեն նշանակում է միջնորդ: Միջնորդությունը շատ կարևոր, երբեմն նույնիսկ վճռորոշ դեր է խաղում հաղորդակցության գործընթացում: Հեռատատետսությունը, ռադիոն, ինտերնետը միջնորդավորված հաղորդակցության ձևեր են: Այսօր մարդն իր փոխհարաբերությունների մեծ մասը միջնորդավորված հաղորդակցության վրա է կառուցում. առցանց գնումներ է կատարում,

ծառայություններ պատվիրում կամ մատուցում, աշխատանքի ընդունվում, կրթություն ստանում և այլն:

Արդյունավետ հաղորդակցություն: Արդյունավետ հաղորդակցման կարիք ունեն բոլորը՝ թե՛ ընտանիքում, թե՛ հասարակական այլ միջավայրերում: Արդյունավետ հաղորդակցման համար էական է սեփական և ուրիշների զգացողությունները ընկալելու, վերլուծական դիտարկումներ կատարելու ունակությունը: Միշտ չէ, որ մենք հաղորդակցվելիս, գրուցելիս կարողանում ենք վերահսկել մեր հույզերը, ագրեսիվ չտրամադրվել մեր գրուցակցի նկատմամբ, զսպել մեր զայրույթը, որն էլ խանգարում է ճիշտ հաղորդակցությանը: Արդյունքում մենք չենք ասում այն ամենը, ինչ ուզում էինք ասել, կամ չենք ասում այնպես, ինչպես ուզում էինք: Արդյունավետ հաղորդակցությունը կախված է նրանից, թե որքան հստակ ենք արտահայտում մեր մտքերը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս են մարդիկ հաղորդակցվում:
2. Որո՞նք են հաղորդակցման տեսակները:
3. Որո՞նք են բանավոր և գրավոր հաղորդակցման առավելությունները և թերությունները:
4. Որո՞նք են դիմելու և ողջունելու այն հիմնական ձևերը, որոնք դուք օգտագործում եք առօրյա կյանքում: Ինչո՞ւ:
5. Ձեր շրջապատում ո՞ւմ հաղորդակցման ոճն եք արդյունավետ համարում: Ինչո՞վ է հիմնավորված ձեր ընտրությունը:
6. Ի՞նչ է հույզը, և ի՞նչ նշանակություն ունի այն մարդու հոգեկան կյանքում:
7. Որո՞նք են մարդու հիմնական հույզերը:
8. Ինչպե՞ս են հույզերն ու մտածելակերպն ազդում մեր կայացրած որոշումների և վարքագծի վրա:
9. Ինչպե՞ս են ճանաչողությունն ու վարքագիծը կապված իրար հետ:



ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կարդացե՛ք ստորև ներկայացված իրավիճակները և փորձե՛ք մեկնաբանել, թե ինչպես եք ընկալում այդ գործողությունների իմաստը:

Իրավիճակ 1

Զրուցակցի բերանը փակված է ձեռքով, և բուֆ մատը հպված է այտին, հայացքը՝ սևեռված մի կետի:

Իրավիճակ 2

Նա ձեռքով փակում է բերանը այն պահին, երբ դուք եք խոսում:

Իրավիճակ 3

Զրուցակիցը երկու ձեռքերի ափերով բռնում է գլուխը:

Իրավիճակ 4

Զրուցակցի ձեռքերը գոտկատեղին են, ոտքերը՝ իրարից հեռու, փորը՝ առաջ:

Իրավիճակ 5

Զրուցակցի ուսերը բարձրանում են վեր:

Դասընկերներով փորձե՛ք նույն տեղեկությունը (միտքը կամ զգացումը) փոխանցել հաղորդակցության տարբեր ձևերով: Օրինակ՝ դուք կարող եք հայտնել ձեր սերը հեռախոսով կամ նամակով, ժամադրության ժամանակ բարձրաձայն խոստովանություն անել, սիրային երգ երգել կամ պարզապես արտահայտիչ հայացքով նայել:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ



Արամ Մանուկյանը հրապարակում է Անկախության հռչակագիրը



1. Հաղորդակցման ի՞նչ տեսակներ նկատեցիր տեսանյութում:
2. Ի՞նչ հույզեր արտահայտեց Արամ Մանուկյանը Անկախության հռչակագրի ընթերցման ժամանակ:
3. Նկարագրի՛ր Ազգային ժողովի արձագանքը Հռչակագրի ընթերցմանը: Ինչո՞ւ էր զուգահեռ հնչում «՝ օրհներգը: Այս դեպքում ո՞րն է հաղորդակցման տեսակն ու նպատակը:
4. Ի՞նչ հույզեր ունեցար Անկախության հռչակագիրը լսելիս:
5. Խնդրի՛ր պապիկիդ, տատիկիդ կամ նրանց հասակակից որևէ մեկին քեզ հետ դիտել տեսանյութը: Դիտման ընթացքում հետևի՛ր, թե ինչ հույզեր է ունենում նա Անկախության հռչակագիրը լսելիս: Համեմատի՛ր նրա և քո հույզերը Անկախության հռչակագիրը լսելիս: Փորձի՛ր մեկնաբանել ձեր ընկալումների տարբերությունը և դրանց հիմնապատճառները:
6. Ի՞նչ հույզեր նկատեցիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի խոսքերում: Քո կարծիքով ի՞նչ է անկախությունը նրա համար:
7. Ի՞նչ է անկախությունը քեզ համար: Ո՞րն է քո առաքելությունը Հայաստանի անկախության պահպանման և ամրապնդման գործում:
8. Ի՞նչ կարող ես անել, եթե քո հայրենիքի գլխին մութ ամպեր կուտակվեն:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

1. Նախապատրաստի՛ր և դասարանին ներկայացրո՛ւ նկարագրական խոսք՝ «Արդյունավետ հաղորդակցում» թեմայով: Այն կարող ես ներկայացնել պաստառի կամ սահիկաշարի օգնությամբ:
2. Կազմի՛ր արդյունավետ հաղորդակցվելու քո ուղեցույցը՝ ներառելով օգտակար խորհուրդներ: Ներկայացրո՛ւ դասարանում՝ դասընկերներիդ համոզելով քո փորձառության արդյունավետության մեջ: Օրինակ՝
 - Մի՛ վատնեք ժամանակ անօգուտ տեղեկույթ փոխանցելու վրա, մի՛ վատնեք լսողի կամ ընթերցողի ժամանակը: «Որքան պարզ, այնքան լավ»: ձգտե՛ք լինել արդյունավետ և գործնական:
 -



ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Որն է ճանաչողության և վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում	
Հույզերի կառավարման հնարները	
Ինչ է արդյունավետ հաղորդակցումը	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Մեկնաբանել ճանաչողության և վարքագծի դերը իմ կյանքում	
Տարբերակել հույզերի հիմնական տեսակները	
Ճանաչել և վերլուծել սեփական հույզերը	
Կիրառել հաղորդակցման տարբեր տեսակներ շփվելիս	
Կիրառել հույզերի կառավարման տարբեր հնարներ	
Բացատրել արդյունավետ հաղորդակցվելու նշանակությունը	

Թեմա 4. ՄԱՐԴ-ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

4.1. ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԿԱՆՈՆԸ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Բարոյական նորմ, բարոյականություն

Բարոյական նորմ — համատեղ ապրելու և միմյանց հետ շփվելու վարքագծի կանոնները:

Բարոյականություն — 1. նորմերի, կանոնների ամբողջություն է, որով ուղղորդվում, կարգավորվում են մարդկանց վարքն ու գործունեությունը: 2. Սեփական անձի վրա իշխելու կարողությունը:

Մեկնաբանի՛ր բարոյականության՝ վերևում բերված երկու բնորոշումների տարբերությունները:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

Եզրույթներ

Հասարակական կարծիք — որոշակի թեմայի վերաբերյալ անհատական հայացքների, վերաբերմունքի և համոզմունքների համախումբն է՝ արտահայտված համայնքի զգալի հատվածի կողմից:

Հասարակական պարսավանք — հասարակության կողմից անձին կամ երևույթին տրված բացասական գնահատական:

Պետական հարկադրանք — պետության կողմից սահմանված պատժամիջոց:

Բարոյական — բարոյականության կանոնները պահպանող:

Ոչ բարոյական — բարոյականության առարկա չհանդիսացող, բարոյականության հարթությունից դուրս, բարոյական նկարագիր չունեցող:

Լրացրո՛ւ աղյուսակը՝ յուրաքանչյուր սյունակում նշելով 6–7 հատկանիշ:

Քարոյական մարդ	Ոչ քարոյական մարդ
ազնիվ	խաբեբա



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամփոփում

Ամփոփումը տեքստի բովանդակության սեղմ շարադրանքն է: Ամփոփել կարողանալու համար պետք է դուրս բերես գրվածքի կամ գրվածքի հատվածի կարևոր մտքերը, խմբավորես և դասակարգես դրանք, ապա դնես համառոտ շարադրանքի հիմքում: Այդպիսով դու կստեղծես նոր՝ ավելի համառոտ տեքստ, որը կփոխարինի բնագրին և կպարունակի բնագրի կարևոր տեղեկությունները: Գրվածքն ընթերցելիս յուրաքանչյուր պարբերության համար գրի՛ր մեկ ընդհանուր միտք, որով կամփոփես տվյալ պարբերության հիմնական իմաստը:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ի՞նչ ես հասկանում «քարոյական հաղթանակ» ասելով: Ի՞նչ իրավիճակներում է կիրառվում այս արտահայտությունը: Ինչպե՞ս ես դու վերաբերվում քարոյական հաղթանակին:
- Ամեն օր մենք կայացնում ենք տարբեր որոշումներ, օրինակ՝ օգնության ձեռք մեկնել՝ ընկերոջը, թե՞ ձևացնել, որ չենք նկատում, անտարբե՞ր անցնել անտուն շան կողքով, թե՞ կերակրել նրան, հյուրասիրե՞լ դասընկերոջը, թե՞ ուտել միայնակ: Ինչո՞վ են պայմանավորված մեր կայացրած որոշումները:
- Հույն փիլիսոփա Արիստոտելի կարծիքով անհնար է գործել հասարակական կյանքում՝ չլինելով որոշակի քարոյական հատկությունների կրող:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

Հասարակության մեջ ապրելով՝ մարդիկ ձևավորում են համակեցության ու շփման իրենց պատկերացումները, որոնք հիմնվում են բարու և չարի, ճշմարիտի և սխալի վրա: Այդ պատկերացումները կարող են բխել տարբեր աղբյուրներից՝ կրոնից, ավանդույթներից, սովորույթներից, հեքիաթներից, առասպելներից, հարգանք ու հեղինակություն վայելող անձանց կարծիքից և այլն:

Պատկերացումներն ու համոզմունքները, ժամանակի ընթացքում սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղանում են և տվյալ հասարակությունում ապրող մարդկանց համար դառնում քարոյականության ուղենիշեր: Վերջիններիս հիման վրա էլ մարդիկ իրենց համար ստեղծում են համակեցության և շփման կանոններ՝ քարոյական նորմեր:

Բարոյական նորմերն ունեն համընդհանուր կատարման համար պարտադիր բնույթ և տարածվում են բոլոր մարդկանց վրա: Առօրյայում բարոյական են անվանում այն մարդուն, որը ձգտում է տվյալ հասարակության կամ ընդ-

հանրապես մարդկության կողմից ընդունված բարոյական իդեալներին և իր վարքը համապատասխանեցնում է բարոյականության այդ նորմերին:

Օրինակ՝

- Ընկերոջն օգնելը բոլոր մարդիկ համարում են բարոյական պարտականություն, իսկ նա, ով ունի հնարավորություն և հրաժարվում է օգնելուց ընկերոջը, երբ վերջինս օգնության կարիք է ունենում, արժանանում է շրջապատի պարսավանքին:
- Ազնիվ լինելը համարվում է բարոյական պարտականություն, հակառակ դեպքում մարդը հարգանք չի վայելում իրեն շրջապատող մարդկանց կողմից:
- Երբ ինչ-որ մեկը մյուսի համար բարիք է գործում, վերջինս բարոյապես պարտավորված է զգում համարժեք փոխհատուցելու այդ բարության դիմաց: Բայց նման վերաբերմունք չցուցաբերելու դեպքում հասարակությունը բացասաբար է վերաբերվում այդպիսի մարդուն և տարբեր եղանակներով արժանացնում է հասարակական պարսավանքի:

Ոչ բարոյական է համարվում հասարակության կողմից ընդունված բարոյական նորմերին չհամապատասխանեցված վարքը: Օրինակ՝ գողություն կատարողին կարող են համարել անբարո մարդ, որովհետև գողությունը անհամատեղելի է մարդկության կողմից ընդունված բարոյական սկզբունքների հետ:

Կարևոր է անդրադառնալ ևս մեկ հանգամանքի: Բարոյականը և քաղաքավարին նույնը չեն: Օրինակ՝ քաղաքավարի կարելի է համարել զրուցակցի անհետաքրքիր պատմությունը համբերատար լսելը, հասարակական վայրում անտեղի չաղմկելը, «Դուք»-ով դիմելը և այլն: Հասարակության այս չգրված կանոնները խախտողն անքաղաքավարի է, այլ ոչ թե անբարոյական:

Բարոյականությունը սերտորեն կապված է մարդու բանական լինելու հանգամանքի հետ, որովհետև բանականությունն է մարդուն կողմնորոշում դեպի բարձրագույն բարիքը, ձևավորում արժեքային որոշակի համակարգ և տալիս ազատ, գիտակցված ընտրության հնարավորություն:

Բարոյականության պատկերացումները քարացած չեն: Ժամանակի ընթացքում՝ սերունդների հերթափոխում, դրանք ենթարկվում են փոփոխության, որը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով. օրինակ՝ հասարակության միատարրություն (մեկ ազգ), տեխնոլոգիաների զարգացում, կրոնական հայացքներ, կրթության որակ, մշակույթ, ավանդույթներ և այլն:

Օրինակ՝

Մինչև 20-րդ դարը եվրոպական շատ երկրներում բարոյապես ընդունելի չէր տղաների և աղջիկների համատեղ կրթությունը: Նրանք պետք է հաճախեին տարբեր դպրոցներ, համալսարաններ կամ սովորեին տարբեր դասասենյակներում:

Ավելի վաղ աղջիկների կրթությունն ընդհանրապես ընդունված չէր:

Այսօր արդեն տղաներն ու աղջիկները սովորում են առանց խտրականության՝ նույն դպրոցներում ու համալսարաններում, նույն դասարաններում ու լսարաններում:

Բարոյական արարքի «դատավորը» **հասարակական կարծիքն է**: Հասարակական կարծիքը մարդկանց խմբերի ընդհանրության կարծիքն է՝ հիմնված միանման, տեղեկատվության ընդունման կամ մերժման վրա: Թեպետ «հասարակական կարծիք» եզրույթը սկսել է գործածվել 18-րդ դարից, սակայն երևույթը գոյություն ուներ դեռևս հազարամյակներ առաջ: Օրինակ՝ Բաբելոնի և Ասորեստանի հնագույն պատմությունները հիշատակում են խալիֆների, որոնք քողարկված մտնում էին մարդկանց շարքերը՝ լսելու, թե ինչ կարծիք ունեն մարդիկ իրենց ղեկավարման մասին:

Հասարակական կարծիքը ձևավորվում է տարածված կարծիքներից, համոզմունքներից, ինչպես նաև սխալ պատկերացումներից, կարծրատիպերից, կեղծ լուրերից ու ասեկոսեններից:

Հասարակական կարծիքի ձևավորման մեջ մեծ դեր են խաղում զանգվածային լրատվության միջոցները, մասնավորապես հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլը, սոցիալական ցանցերը: Հասարակական կարծիքի վրա ազդում են նաև այն մարդկանց կարծիքները, որոնք հասարակության կողմից ճանաչված են որպես իրազեկ և հեղինակավոր:

Բարոյական նորմերը խախտելու պարագայում առաջանում է ոչ թե պետական հարկադրանք (պետությունն իրավունք ունի մարդու կողմից օրենքով սահմանված պարտավորությունը չկատարելու դեպքում կիրառել պատժամիջոցներ), այլ հասարակական պարսավանք: Հասարակությունն ինքն է տարբեր կարծիքների, վերաբերմունքի միջոցով ստիպում ոչ բարոյական վարքագիծ դրսևորած անձին շտկել իր սխալը:

ՈՍԿԵ ԿԱՆՈՆԸ

Բարոյականության, բարոյական նորմերի և ընդհանրապես մարդու վարքագծի հիմքում ընած է «Ոսկե կանոնը».

«Դիմացիոնի հետ վարվի՛ր անպես, ինչպես ինքդ կցանկանաս, որ նա վարվի քեզ հետ»:

«Մի՛ վարվիր դիմացիոնի հետ այնպես, ինչպես որ չես ցանկանա, որ նա քեզ հետ վարվի»:

Ոսկե կանոնի առանցքը փոխադարձությունն է: Մարդը չի ցանկանում ինքն իրեն վնասել, նա ձգտում է, որ իրեն սիրեն, հարգեն, անհրաժեշտության դեպքում աջակցեն: Իսկ եթե նա ցանկանում է ստանալ այդ ամենը մյուսներից, ապա ինքն էլ մյուսների նկատմամբ պետք է նման վարքագիծ դրսևորի:

Նա պետք է ձգտի բարիք գործելու այլ մարդկանց նկատմամբ՝ իր ընկերների,

ընտանիքի անդամների, բարեկամների, հայրենակիցների և նույնիսկ օտարների, որպեսզի այդ բարիքը վերադառնա իրեն:

Բարոյական վարքագիծը պահանջում է ոչ միայն բարիք գործել՝ սպասելով, որ դիմացինը նույն բարիքը քո նկատմամբ կգործի, այլև բարիք գործել առանց սպասելու փոխադարձ բարիքի:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տեքստից ստացած տեղեկություններից ու անձնական փորձից ելնելով՝ տո՛ւր բարոյականության քո սահմանումը:
2. Դասարանով համեմատե՛ք աղյուսակ 1–ում ձեր լրացրած հատկանիշները: Լրացված բարոյական հատկանիշները դասակարգե՛ք՝ ըստ ձեզ համար ընդունելի առաջնահերթության:
3. Պարբերություններից դուրս գրված հիմնական մտքերն ամբողջացնելով՝ դասարանում ամփոփ ներկայացրո՛ւ գրվածքի բովանդակությունը:
4. Ներկայացրո՛ւ իրավիճակներ, երբ քո կարծիքով անհրաժեշտ է մարդկանց վարքագիծը կարգավորել բարոյական կանոններով (նորմերով): Բե՛ր այդպիսի կանոնների օրինակներ:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ի՞նչու է բարոյականությունը կարևոր: Ի՞նչ կլինի, եթե չլինեն բարոյական նորմերը:
2. Գնահատի՛ր ստորև բերված մտքերը դրանց բարոյական նկարագրի տեսանկյունից (բարոյակա՞ն է, թե՞ ոչ բարոյական): Ավելացրո՛ւ քո տարբերակները:
 - Ավտոմեքենան կանգ առավ լուսակիրի տակ, ուղևորները պատուհանից աղբը նետեցին դուրս, ինքնաբավ հայացքով նայեցին անցորդներին և շարժվեցին:
 - Դպրոցի բակում ծաղկած միակ ծիրանենուն սովորողները խնամքով էին վերաբերվում:
3. Քննարկե՛ք տրված ձևակերպումները:
 - Բարոյականությունը նորմերի համախմբություն է, որը փոխանցվում է սերնդից սերունդ նույն մշակույթի ներսում:
 - Բարոյականությունը պարտքի գիտակցումն է ու այդ գիտակցման թելադրանքի կատարումը:


- Բարոյականությունը մարդկայինն է մարդու մեջ:
4. Բարոյականության ոսկե կանոնի տեսանկյունից մեկնաբանի՞ր իրավիճակը:

Մեր երկրում չրեղի ունեցած պատերազմի ընթացքում հազարավոր համաքաղաքացիներ արձագանքում էին սոցիալական ցանցերում տարածվող այն հայրարարություններին, որտեղ պահանջվում էր արյուն տալ՝ վիրավոր զինվորների կյանքը փրկելու համար, կամ իրականացվում էին դրամահավաքներ՝ զինվորներին անհրաժեշտ պարագաներ կամ դեղորայք ձեռք բերելու և սահման ուղարկելու համար:



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

1. Դասարանով կազմե՛ք պաստառ՝ ներկայացնելով տարբեր ժողովուրդների՝ բարոյություն անելու պատգամ պարունակող ասացվածքներ: Օրինակ՝ «Լավություն արա՛, գցի՛ր ջուրը» կամ «Լավություն արա՛, հարյուրապատիկը կվերադառնա» և այլն:
2. Պատմությունից գտի՛ր օրինակներ, երբ տարբեր ժամանակահատվածներում եղել են բարոյականության տարբեր ընկալումներ: Փորձի՛ր բացահայտել, թե ինչ գործոններ են ազդել պատկերացումների փոփոխության վրա:
3. Որոնե՛ք հետևյալ նկարը համացանցում: Կարդացե՛ք նկարի նկարագրությունը: Քննարկե՛ք «Արոյո՞ք հասարակական կարծիքը միշտ արդար դատավոր է» միտքը:



Եղիշե Թաղևոսյան. «...»

4.2. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Առաքինություն — բարոյական ճանապարհից չջեղվելու համար մարդուն անհրաժեշտ որակ:

Էզոիզմ (եսասիրություն) — բարոյական սկզբունք, որի պարագայում սեփական ցանկությունների բավարարումն ավելի կարևոր է համարվում, քան այլոց կարիքները կամ հոգսերը:

Ալտրոիզմ (այլասիրություն) — բարոյական սկզբունք, որն արտահայտվում է ուրիշների նկատմամբ անշահախնդիր հոգատարությամբ՝ ընդհուպ մինչև զոհողություն կատարելու պատրաստակամություն:

Փորձի՛ր բերել ալտրոիզմի և էզոիզմի օրինակներ քո կենսափորձից:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐ: Մարդասիրություն, արդարություն, ողջամտություն, ազնվություն, հարգանք, գիտելիք, իմաստություն, քաջություն, չափավորություն, ընկերասիրություն, նպատակասլացություն, վեհություն, նվիրում



ՈԱՋՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապերի ստեղծում

Տեղեկատվական տեքստը կարդալիս փորձի՛ր մտածողների մատնանշած առաքինությունները գնահատել մերօրյա արդիականության տեսանկյունից:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- «Առաքինությունը ևս կարող է արատ դառնալ, եթե այն ճիշտ չօգտագործես»: (Շեքսպիր)
- «Այն, ինչ անհրաժեշտ է չարի հաղթանակի համար, սոսկ բարի մարդկանց անգործությունն է»: (Էդմունդ Բըրք)

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարոյական սկզբունքներից չէղվելու համար մարդուն անհրաժեշտ են որոշակի որակներ: Այդ որակներն ընդունված է անվանել առաքինություններ, իսկ նման որակներ ունեցող անձին՝ առաքինի մարդ: Տարբեր մտածողներ սահմանել են մարդկային այդպիսի որակներ:

Ըստ չինացի իմաստասեր Կոնֆուցիոսի՝ գոյություն ունեն հինգ առաքինություններ՝ մարդասիրություն, արդարություն, ողջամտություն, ազնվություն և հարգանք ավանդույթներին:

Հույն իմաստասեր Սոկրատեսի կարծիքով՝ «առաքինությունը գիտելիքն է»: Գիտելիք ունենալ նշանակում է առաքինի լինել: Անընդհատ գիտելիք կուտակող մարդը այն համոզման է, որ «ինքը ոչինչ չգիտի», քանի որ ինչքան շատ է գիտելիք կուտակում, այնքան ավելի է հասկանում, որ ավելի քիչ է ճանաչում աշխարհը, ու նորից ձգտում է գիտելիքի:

Սոկրատեսի աշակերտ Պլատոնի կարծիքով առկա են չորս առաքինու-

թյուններ՝ իմաստություն, քաջություն, արդարություն, չափավորություն:

Պլատոնի աշակերտ Արիստոտելը առաքինությունն ամփոփում էր «ոսկե միջինի» կանոնի մեջ: Սա մարդու ունակությունն է գտնելու ծայրահեղությունների մեջ ոսկե միջինն ու առաջնորդվելու դրանով: Այսպես՝ օրինակ՝ մարդը չպետք է սպասի բարի դառնալուն, որպեսզի դրանից հետո կատարի բարի արարք: Ընդհակառակը՝ մարդը, անընդհատ բարի արարքներ կատարելով, պետք է բարոյական առումով իրեն ավելի ու ավելի կատարելագործի: Լավ արարքներ կատարելու սովորություն ձեռք բերելն առաքինի դառնալու քայլերից մեկն է: Բարոյական առաքինության դրսևորումների մեջ առանձնացնում էր քաջությունը, ընկերասիրությունը, նպատակասլացությունը, չափավորությունը և այլն:

Գերմանացի իմաստասեր Իմանուիլ Կանտը բարոյական վարքագիծը մեկնաբանում էր 2 սկզբունքների միջոցով.

1. Մարդը մեկ այլ մարդու հետ պետք է շփվի ոչ թե որպես միջոցի, այլ որպես նպատակի:
2. Մարդը պետք է այնպիսի վարքագիծ դրսևորի, որը, իր ընկալմամբ, արժանի լինի դառնալու բոլոր մարդկանց համար վարքագծի օրինակ:

Կանտը կարծում էր, որ մարդը չպետք է ձգտի շահագործելու մեկ այլ մարդու, օգտագործի դիմացինին անձնական նպատակների համար: Հակառակը, դիմացինին պետք է վերաբերվի որպես «նպատակի», ձգտի հասկանալու նրա հույզերը, զգացմունքները, սովորի

ներանից, օգնի նրան, աջակցի տարբեր հարցերում: Նա պետք է մշտապես օրինակելի վարքագիծ դրսևորի՝ դրանով իսկ փորձելով «ոսկե կանոնը» համընդհանուր սկզբունք դարձնել բոլորի համար:

Ամփոփելով առաքինության մասին փիլիսոփաների մոտեցումները՝ կարե-

լի է թվարկել առաքինի մարդուն բնութագրող հատկանիշներ, որոնք անհրա-

ժեշտ են բարոյական վարքագիծ դրսևորելու համար:

Օրինակ՝

- Առաքինի անհատը պետք է ունենա վեհ հոգի, այսինքն՝ լինի բարի, մեծահոգի, պատվախնդիր, հարգալից, պարկեշտ, մարդասեր, ազատասեր, ստեղծագործ, միևնույն ժամանակ՝ համեստ և չափավոր:
- Առաքինի անհատը պետք է ունենա ազնիվ միտք, այսինքն՝ լինի արդարամիտ, ճշմարտասեր ու ճշմարտախոս, լայնախոհ, ողջամիտ, գիտակ և այլն:
- Առաքինի անհատը պետք է լինի իր գործի և կոչման նվիրյալը, այսինքն՝ լինի նպատակասլաց, հայրենասեր, ընկերասեր, ընտանեասեր, հավատարիմ, հաստատակամ, կարգապահ, պատասխանատու և այլն:
- Առաքինի անհատը պետք է լինի քաջ, այսինքն՝ լինի կամային, համարձակ, աննահանջ, արդարության, ճշմարտության համար պայքարող, թույլին պաշտպանող և երբեք չձեռվի վեհության, ազնվության ու նվիրումի որակներից:

Հայրենասիրությունը մարդկային կարևոր առաքինություններից մեկն է: Հայրենասիրության խնդիրը, ի թիվս այլոց, իմաստասիրական վերլուծության է ենթարկել նաև հայ մտածող, հայրենասեր, ռազմական ու քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհը, որի կարծիքով հայրենասիրությունը մարդկային բարոյականության բարձրագույն արտահայտությունն է: Նա համոզված էր, որ հայրենասիրությունը արիություն է պահանջում, հետևապես վախկոտ մարդիկ հայրենասեր չեն կարող լինել, քանի որ թե՛ ռազմական, թե՛ խաղաղ պայմաններում հայրենասիրությունը պահանջում է

ռիսկ, կյանքի կամ ունեցվածքի վտանգում: Առօրյա կյանքում հայրենասիրությունն արտահայտվում է նվիրված աշխատանքի, ամենօրյա հոգատարության մեջ:

Պատահական չէ, որ հայոց զինվորը, ստանձնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության բարձր առաքելությունը, բոլորի՝ ծնողների, հրամանատարության և ամբողջ հայ ազգի առջև հանդիսավոր արտասանում է հետևյալ խոսքերը. *«Երդվում եմ անձնվիրաբար ծառայել Հայրենիքիս՝ Հայաստանի Հանրապետությանը, և հանուն նրա չխնայել կյանքս»:*



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՈՍՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Առաքինության ո՞ր որակներ են կարևոր ժամանակակից մարդու համար, որպեսզի նա համարվի բարոյական վարքագիծ դրսևորող անհատ:
2. Գրվածքում ներկայացված մտածողների օրինակով կազմի՞ր առաքինությունների քո ցանկը: Հիմնավորի՞ր ընտրությունդ:

3. Վերլուծիր դասանյութի վերջում մեջբերված հատվածը և նշիր, թե առաքինության ինչ որակներ ես տեսնում այնտեղ:

ԷԳՈՒՋՍ ԵՎ ԱԼՏՐՈՒԻՋՍ

Կախված նրանից, թե մարդիկ որքան հաճախ են կիրառում բարոյականության սկզբունքները սեփական մտածողության, դաստիարակության, ընկալումների, պատկերացումների և վարքագծի մեջ, կարող են տարբերվել այլ մարդկանց հետ հարաբերություններում՝ եսասիրությունից մինչև այլոց նկատմամբ սեր:

Նրանք, ովքեր շատ ավելի տարված են իրենց անձով, չեն նկատում շրջապատող անձանց կարիքները, հույզերը, դրական վերաբերմունքի չեն արժանացնում իրենց ընկերներին, ընտանիքի անդամներին, հայրենակիցներին

և մշտապես տարված են միայն իրենց պահանջմունքներով ու ցանկություններով:

Այսպիսի մարդկանց որակում են որպես էգոիստ: Էգոիզմը դիրքորոշում է, որի համաձայն՝ սեփական շահերին հետամուտ լինելը դիտարկվում է որպես բարիք: Այս դիրքորոշումն ունեցող մարդիկ բավարարում են սեփական շահերը՝ անտեսելով ուրիշների կամ ընդհանուր շահերը: Բարոյագիտական տեսանկյունից էգոիզմը դիտարկվում է որպես բացասական դիրքորոշում, այն ուրիշների հաշվին սեփական անձի մասին հոգ տանելն է:



Նարցիսը (Նարկիսոս) հին հունական դիցաբանության կերպար է՝ օժրված բացառիկ գեղեցկությամբ: Նրան սիրահարվում է Էխո նինֆը: Լինելով գեղեցիկ, բայց և հպարտ ու սառնասիրտ՝ պարանին մերժում է նինֆին՝ արժանանալով ասրվածուհու պարժին: Որսի ժամանակ Նարկիսոսը գեղում նկատում է իր արտացոլանքը և սիրահարվում իր իսկ պատկերին: Չկարողանալով նրանից բաժանվել՝ պարանին մահանում է տառապանքից:

Նարցիս անունը բացասական նշանակություն է ձեռք բերել՝ խորհրդանշելով ինքնասիրահարվածություն ու հպարտություն:

Կարավաջո. «Նարցիսը նայում է իր սեփական արտացոլանքին»

Ալտրոփստ անվանում են այն մարդուն, որը ավելի հակված է հոգ տանելու ուրիշների մասին, քան սեփական անձի: Ալտրոփզմը բարոյական տեսանկյունից դիտարկվում է որպես դրական սկզբունք: Ալտրոփզմ նշանակում է ուրիշների մասին ավելի շատ հոգ տանել, քան սեփական անձի, այլ բնորոշմամբ՝ սեփական անձի հաշվին հոգ տանել ուրիշների մասին:

Օրինակ՝ Արցախյան հերոսամարտի ժամանակ շատ բժիշկներ, թողնելով իրենց աշխատանքը հիվանդանոցներում և վտանգելով իրենց կյանքը, ինքնակամ որոշում էին կայացնում մեկնել պատերազմական գործողությունների վայր՝ օգնելու վիրավորում ստացած հայ զինվորներին:

Կարդա՝ «Հերոստրատը և տաճարի կործանումը» և Ալֆրեդ Բեռնհարդ Նոբելի մասին պատմությունները և դո՛ւրս բեր այն բոլոր տվյալները, որոնց հիման վրա պատմության առանցքային կերպարներին կբնորոշես որպես էգոիստ կամ ալտրոփստ:


ՀԵՐՈՍՏՐԱՏԸ ԵՎ ՏԱՃԱՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Հերսիփրոնի նախագծած տաճարը ճարտարապետական ճիշտ լուծումների շնորհիվ դեռ երկար կանգուն կմնար, եթե չլիներ մի դիպված, որը պատմության մեջ ստացավ «Հերոստրատի առասպել» անվանումը: Ոչնչով աչքի չընկնող մի մարդ ձգտում է ինչ-որ ձևով անմահության արժանանալու: Դրա համար ուրիշ միջոց չգտնելով՝ նա հղանում է Արտեմիսի հոյակերտ տաճարի հրկիզման միտքը: Մ. թ. ա. 356 թվակա-

նին, հանուն փառքի և ճանաչման, նա հրկիզում է Արտեմիսի տաճարը: Եփեսոսացիները այս չարագործության համար որպես պատիժ որոշում են մոռացության տալ Հերոստրատի անունը: Եվ հենց նրանց այդ որոշման պատճառով է, որ մինչև այսօր այդ անունը չի մոռացվել և փոխաբերական իմաստով նշանակում է փառասեր, ամեն գնով փառքի ձգտող մարդ:



ԱՆՖՐԵԴ ԲԵՈՆՀԱՐԴ ՆՈՐԵԼ



«Ես՝ Անֆրեդ Բեռնիարդ Նորելս, այսպիսով հայտարարում եմ իմ կամքը իմ կողմից ձեռք բերված գույքի մասին... Իմ ամբողջ եկամուտը պետք է փոխարկվի արժեթղթերի՝ սրբեղծելով հիմնադրամ, որի տոկոսագումարը կտրվի բոլոր նրանց, ովքեր նախորդ տարվա ընթացքում մեծագույն օգուտ են բերել մարդկությանը»:

Անֆրեդ Նորելի արխիվում պահպանվել է երկու կտակ: Առաջինը գրվել է 1893–ին, ըստ որի՝ իր ողջ ունեցվածքի 20 տոկոսը բաժին էր ընկնում իր ընկերներին ու ազգականներին, իսկ մնացած

80 տոկոսը պետք է տնօրինեին Ստոկհոլմի համալսարանը և Գիտությունների թագավորական ակադեմիան՝ «գիտելիքների լայն ոլորտում աչքի ընկնող նվաճումների համար մրցանակներ հանձնելու նպատակով»: Սակայն երկու տարի անց՝ 1895 թ. նոյեմբերի 27–ին, արդեն ծանր հիվանդ վիճակում նա գրում է իր երկրորդ կտակը: Դրանում արդեն ավելի հստակ գրված էր, որ ամբողջ ունեցվածքը պետք է վերածել դրամի ու այն դարձնել հիմնադրամ: Դրանից ստացվող տարեկան եկամուտները պետք է բաժանել հինգ մասի և բաշխել հետևյալ կերպ. մի մասը՝ ֆիզիկայի ոլորտում խոշորագույն գյուտերի համար, երկրորդը՝ քիմիայի, երրորդը՝ ֆիզիոլոգիայի և բժշկության, մյուս երկուսը՝ այն անձանց պարգևատրելու համար, որոնք մեծ հաջողությունների են հասել գրականության բնագավառում և խաղաղության ամրապնդման ոլորտում:

Պատմությունից կամ գրականությունից հիշի՛ր էգոիստ և ալտրոիստ կերպարների: Այդպիսի բարոյական կեցվածքը խանգարո՞ւմ, թե՞ օգնում էր նրանց: Հիմնավորի՛ր օրինակներով:



ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Բարոյագիտության առանցքային հասկացությունների բնորոշումը	
Բարոյականության ոսկե կանոնի էությունը	
էգոիզմ և ալտրոիզմ հասկացությունների բացատրությունը	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Ներկայացնել բարոյական նորմերի նշանակությունը	
Մեկնաբանել էգոիզմի և ալտրոիզմի դրսևորումները	
Մեկնաբանել առաքինություն եզրույթը	
Վերլուծել բարոյական նորմերի դերը	
Ներկայացնել առաքինությունների վերաբերյալ փիլիսոփաների տեսակետները	

Թեմա 5. ՄԱՐԴ-ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

5.1. ԳԱՂԱՓԱՐ ԳԵՂԵՑԻԿԻ ՄԱՍԻՆ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Գեղեցիկ



ԲԱՌԱՊԱՇԱՐ

Գեղագիտական զգացում — այն հուզական վիճակը, որն առաջանում է իրականության երևույթների կամ արվեստի ստեղծագործությունների գեղագիտական ընկալման գործընթացում:

Ի՞նչ խոսքի մաս է «գեղեցիկ» բառը: Թեմայի վերնագրում որպես ի՞նչ խոսքի մաս է հանդես եկել «գեղեցիկ» բառը: «Գեղեցիկ» բառի տարբեր գործածություններով կազմի՛ր նախադասություններ:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապերի ստեղծում

Տեքստը կարդալիս ամփոփի՛ր իմաստասերների մոտեցումները գեղեցկության մասին և ներկայացրո՛ւ, թե այս կամ այն երևույթը որպես գեղեցիկ գնահատելիս ավելի շատ ո՞ր մոտեցմանն ես համամիտ:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ի՞նչ է գեղեցիկը ինձ համար:

ԻՆՉ Է ԳԵՂԵՑԻԿԸ

Շրջապատող աշխարհի երևույթները ընկալելիս մարդիկ ունենում են զգացմունքների մի հատուկ տեսակ, որն անվանում են **գեղագիտական զգացմունք**:

Մարդը գեղեցկության ձգտող էակ է: Նա իր գործունեության բոլոր ոլորտներում (կենցաղում, աշխատանքում, մշակույ-

թում) որոնում է գեղեցիկը, ձգտում ճանաչելու և արարելու այն:

Գեղեցիկ է այն ամենը, ինչը գեղագիտական հաճույք է պատճառում: Գեղեցիկն անհատական զգացողություն է և չունի որոշակի սահմանում: Մարդկանց մեջ տարբեր են գեղեցիկի մասին պատկերացումները: Գեղեցիկ է այն ամենը, ինչին սիրով ենք նայում:

Հին Հունաստանում ողջ տիեզերքն է համարվել գեղեցիկ. հունարեն «**կոսմոս**» բառն ունի «ներդաշնակ», «կարգավորված» և «գեղեցիկ» իմաստները: Քանի որ մարդը դիտարկվել է որպես փոքր տիեզերք, հետևաբար մարդը նույնպես համարվել է գեղեցիկ:

Այդ տեսակետն ընդունելի է եղել նաև հույն իմաստասեր և գիտնական **Պյութագորասի** համար: Նրա կարծիքով տիեզերքում հնչում է հրաշալի երաժշտություն, որն այն ընկալելու ունակ մարդուն նույնպես ի վիճակի է գեղեցկացնելու: **Սոկրատեսը** գեղեցիկ է համարել օգտակարն ու նպատակահարմարը՝ ասելով, որ այն, ինչ օգուտ չունի, չի կարող համարվել գեղեցիկ:

Ըստ **Պլատոնի**՝ գեղեցիկն ունի աստիճաններ: Առաջին աստիճանը ֆիզիկական՝ բնական կամ մարմնական գեղեցկությունն է, որն անցողիկ է: Երկրորդը հոգու գեղեցկությունն է, որը կարող է ավելի երկար մնալ, քան ֆիզիկական գեղեցկությունը, բայց կարող է նաև անցողիկ լինել: Երրորդ աստիճանը գիտության, արվեստի շնորհիվ ստեղծված գեղեցկություններն են: Սակայն այս աստիճանն էլ գեղեցիկի լիարժեք պատկերացում չէ, քանի որ տարբեր գիտությունների ու արվեստների ներկայացուցիչների

համար գեղեցիկը կարող է տարբեր լինել: Ըստ նրա՝ կատարյալ գեղեցկությունը կարող է լինել միայն չորրորդ աստիճանում՝ գիտելիքի ու բարիքի ոլորտում: Իրական գեղեցիկը գոյություն ունի միայն գաղափարների աշխարհում՝ ժամանակից ու տարածությունից դուրս:


Արիստոտելը գեղեցկության ոլորտը համարել է արվեստը. նրա կարծիքով գեղեցիկ են այն երևույթները, որոնց բնորոշ են չափավորությունն ու կարգավորվածությունը:

Միջնադարում գերիշխել են գեղեցկության աստվածային ծագման մասին պատկերացումները: Մինչդեռ Վերածննդի դարաշրջանի արվեստագետները՝ Լեոնարդո դա Վինչին, Շեքսպիրը, գեղեցկության աղբյուրը համարում էին բնությունը: Նրանք արվեստը դիտում էին որպես հայելի, որն արվեստագետը պահում է բնության դիմաց:

Նոր ժամանակներում առավել տարածվեց այն կարծիքը, որ գեղեցիկը իրականում գոյություն չունի. բնության երևույթները ինքնին ո՛չ գեղեցիկ են, ո՛չ տգեղ: Գեղեցիկը գոյություն ունի այն ընկալող մարդու հոգում և միևնույն երևույթը տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում:

Յուրաքանչյուր դարաշրջան մշակել է ֆիզիկական գեղեցկության իր չափանիշը՝ **իդեալը**: Կնոջ գեղեցկության թեման առավել քննարկվածն է եղել բոլոր ժամանակներում, սակայն տարբեր են եղել գեղեցկության չափանիշերը:

Հին հույների համար գեղեցկության չափանիշը **Աֆրոդիտեն** էր՝ գեղեցիկ կազմվածքով, ուղիղ քթով և մեծ աչքերով:



Սանդրո Բոտիչելի
«Վեներայի ծնունդը» (հատված)



Ռոգիր վան դեր Վայդեն
«Կնոջ դիմանկար»



Նեֆերտիտի կիսանդրին
(Բեռլինի եգիպտական
թանգարան)

Վերածննդի դարաշրջանում գեղեցիկ են համարվել լայն ճակատն ու սափրած ունքերը, ինչպես նաև աներևակայելի սանրվածքները, որոնք պահպանելու համար անգամ շատ հարուստ կանայք տարիներով չէին լվանում իրենց գլուխները:

Հին եգիպտոսում գեղեցիկ էին համարվում ուղիղ քիթ, հատուկ նյութերով կարմրացրած այտեր, հարթ սև մազեր, բարձր ճակատ ու երկար պարանոց ունեցող կանայք: Թախանդում պահուանգ ազգի ներկայացուցիչների համար նույնպես կանացի գեղեցկության չափանիշ է համարվել երկար վիզը և այդ նպատակով, 5 տարեկանից սկսած, աղջիկների վզին հատուկ օղակներ են հագրել:

Արտաքին գրավչության համար բնական գեղեցկությունը բավարար չէ, շատ կարևոր է նաև ներաշխարհի գեղեցկությունը: Գեղեցիկի տեսանկյունից գնահատվում են նաև մարդու արարքները: Օրինակ՝ երբ անօթևան մնացած կեն-

դանուն խնամում ու կերակրում եք, ապա ձեր արարքը գեղեցիկ է, իսկ եթե դուք տեսնում եք, թե ինչպես են բակում վիճաբանող երեխաները վիրավորում, պիտակավորում անօգնական կանգնած երեխային և անտարբերությամբ անցնում եք նրանց կողքով, ապա ձեր արարքը դժվար թե գեղեցիկ համարվի:

Գեղեցիկի մասին մարդու պատկերացումները քարացած չեն, դրանք փոփոխվում են ժամանակի ընթացքում, աշխարհընկալման և աշխարհաճանաչողության գործընթացին զուգահեռ: Ներկայումս ժամանակակից տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցների զարգացման շնորհիվ ավելի դյուրին ու սերտ են դարձել մարդկանց շփումները: Այդ շփումների արդյունքում մարդիկ հաղորդակից են դառնում գեղեցիկի բազմամշակութային ընկալումների և այդ ընկալումների տարբերությունների համադրման արդյունքում ձևավորում են նոր պատկերացումներ:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Մտորի՛ր գեղեցիկի վերբերյալ ներկայացված դիրքորոշումների շուրջ և փորձի՛ր ձևակերպել գեղեցիկի քո բնորոշումը:
2. Լրացրո՛ւ աղյուսակը՝ թվարկելով, թե ինչն է քեզ համար գեղեցիկ կամ տգեղ բնության, մարդու, հասարակության և արվեստի մեջ:

	Գեղեցիկ	Տգեղ
Բնության մեջ		
Մարդու մեջ		
Հասարակության մեջ		
Արվեստում		

3. Կարդա՛ անգլիացի գրող Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» ստեղծագործությունից մի հատված: Ի՞նչ խորհուրդ կտայիր հերոսին:
Գրքի հերոսը հրապուրված էր իր նկարի գեղեցկությամբ: Նա արտաքին գեղեցկությունը համարում էր ամենակարևոր ու թանկարժեք բանը, որն ուներ կյանքում, և սարսափում էր այն մտքից, որ այն հավերժական չէ. «Ես նախանձում եմ ամեն ինչի, որի գեղեցկությունն անմահ է: Նախանձում եմ նույնիսկ իմ այս դիմանկարին: Ինչո՞ւ նա պետք է պահպանի այն, ինչ ինձ վիճակված է կորցնելու: Յուրաքանչյուր անցնող ակնթարթ խլում է ինձնից ինչ-որ բան և տալիս նրան: Օ՛, եթե լինեք ձիշտ հակառակը, եթե փոխվեք նկարը, իսկ ես մնայի ձիշտ նույնը, ինչպես հիմա: Ինչո՞ւ նկարեցիք, կգա մի օր, երբ այդ նկարը կծաղրի ինձ, կծաղրի դաժանորեն»:
4. Ինչպե՞ս կարելի է տարբերել արտաքին և ներքին գեղեցկությունը: Ի՞նչ հատկանիշներ են բնութագրական ներքին գեղեցկության համար:
5. Ինչո՞ւ են մարդիկ տարբերակում գեղեցիկը և տգեղը: Արդյոք գեղեցիկն ու տգեղը անհատակա՞ն ընկալումներ են:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ

1. Մտորի՛ր այն հարցի շուրջ, թե ինչպես կարելի է հասնել մարդու մեջ արտաքին և ներքին գեղեցկության ներդաշնակությանը: Ի՞նչ հատկանիշներ են բնութագրական ներքին գեղեցկության համար:
2. Շարունակի՛ր լրացնել:
 - *Գեղեցկության արտաքին դրսևորումներ* — սպորտով զբաղվելը, առողջ սնվելը, հիգիենայի պահպանումը, խնամված և մաքուր լինելը...

- *Գեղեցկության ներքին դրսևորումներ* — երաժշտություն լսելը, նկարելը, կարդալը, մշակութային հաստատություններ հաճախելը...
-



ՆՊՍԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Բանավեճի միջոցով ներկայացրե՛ք կողմ և դեմ դիրքորոշումներ հետևյալ արտահայտության շուրջ. *Գեղեցիկ է թվում ամեն բան, ինչին սիրով ես նայում:*



ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

1. 20–րդ դարի եվրոպական նորաձևության վարպետներից մեկը՝ *Կոկո Շանեյլը*, ասել է. «Գեղեցկության մասին հոգալիս պետք է սկսել հոգուց և սրտից, թե չէ ոչ մի շպար չի օգնի»: Տարբեր աղբյուրներից օգտվելով՝ հավաքագրի՛ր գեղեցիկ տարբեր մեկնաբանումներ: Որո՞նք են քեզ ավելի հոգեհարազատ: Ինչո՞ւ:
2. Համեմատի՛ր գեղեցիկի ընկալումները տարբեր ժամանակների նկարիչների կտավների միջոցով: Ո՞ր նկարն է լավագույնս արտացոլում գեղեցիկի քո ընկալումները:

5.2. ՄԵԶ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Գեղագիտական միջավայր — միջավայր, որտեղ գերիշխում է գեղեցիկը, գեղագիտականը:

Գեղագիտական ճաշակ — գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու ունակությունը:

Գեղագիտություն — արվեստի էության և օրենքների մասին գիտություն:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մտապատկերում

Մտապատկերումը մտային պատկերի ձևավորման գործընթաց է գրավոր կամ բանավոր տեղեկությունների հիման վրա: Եթե գրվածքի ընթերցման ժամանակ փորձես ստեղծել տեքստի/նկարագրության տեսողական պատկերներ մտքում կամ թղթի վրա, նյութն ավելի հասկանալի, իսկ առաջադրված խնդիրները լուծելի կդառնան:

Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքից ստորև տրված հատվածն ընթերցելիս փորձիր մտապատկերել այն ամենը, ինչ նկարագրում է հեղինակը: Հատկապես ո՞ր բառերն ու արտահայտություններն են օգնում քեզ գեղեցիկն ընկալելու ու մտապատկերելու:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ինչո՞ւ է գեղեցիկը դրսևորվում հատկապես արվեստում:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Բնությունը միշտ եղել է գեղեցիկի իդեալ մարդու համար: Բնության մեջ առկա է չափ, կարգավորվածություն ու ներդաշնակություն: Նկատե՞լ ես, թե որքան համաչափ են դասավորված ծառի ճյու-

ղերը կամ ծաղկի թերթիկները: Ժամանակի ընթացքում մարդը սովորեց նմանակել բնությանը: Օգտագործելով նրանում առկա օրինաչափությունները՝ մարդը կառուցեց կացարաններ, ամրոցներ,

տաճարներ, ավելի ուժ՝ նաև պալատներ, պատրաստեց իրեր՝ զարդեր ու զարդարանքներ: Պատահական չէ, որ մարդուն շրջապատող, նրա կողմից ստեղծված միջավայրը անվանում են նաև **գեղագիտական միջավայր**: Այսօր արդեն մարդն իր մտքի թռիչքով գերազանցում է բնությանը, կարողանում է ստեղծել այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք բնության մեջ առկա չեն:

Ձևավորելով իրեն շրջապատող միջավայրը՝ մարդը կերտում է ինքն իրեն, իր վերաբերմունքը այդ ամենի նկատմամբ:

ԳԵՂԵՑԻԿԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Գեղեցիկի իմացությունը եղել է մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկը: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու ունակությունը անվանում են **գեղագիտական ճաշակ**: Ինչպես մարդու բազմաթիվ այլ ունակություններ, գեղագիտական ունակությունը ևս մարդուն տրվում է ժառանգաբար: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու բոլոր ընդունակությունները կարիք ունեն շարունակական կատարելագործման, գեղեցիկը ընկալելու ունակությունը նույնպես կարիք ունի զարգացման: Արվեստն օգնում է ձևավորելու գեղագիտական ճաշակ, պատկերավոր բացահայտում է գեղեցիկի աշխարհը, ազդեցություն է ունենում անհատի համոզմունքների և վարքագծի վրա:

Արվեստը մարդու հոգևոր գործունեության ամենավաղ ստեղծված ձևերից է: Արդեն հնադարում նախնադարյան մարդը կերտում էր արվեստ. բնական ներկանյութերով ժայռերի պատերին պատկերում էր որսի տեսարաններ,

մամբ: Մարդու բարոյական պարտականությունն է հոգատար վերաբերմունք ունենալ իր միջավայրի՝ հայրենիքի, համայնքի, դպրոցի, տան նկատմամբ: Մաքուր, խնամված և կանաչապատ տարածքների առկայությունը համայնքում և դպրոցամերձ տարածքում, կոկիկ ու հարդարված առանձնասենյակն ու դպրոցական պայուսակը լավագույն փաստում են գեղագիտորեն դաստիարակված հասարակության և նրա անդամների մասին:

իրական ու հնարովի կենդանիներ, մարդկանց, կերտում էր փոքր ու մեծ կոթողներ, հորինում էր երգեր ու պարեր, որոնցով ուղեկցվում էին աշխատանքային գործունեությունն ու պաշտամունքային արարողությունները, ասքեր, որոնք արտացոլում էին նրանց նիստուկացը, աշխարհընկալումը:

Արվեստը, հատկապես երաժշտությունը վերացնում է մարդկանց միջև տարբերությունները, սերմանում բարություն, հանդուրժողականություն, հավասարություն, արդարություն և սեր: Արամ Խաչատրյանն իր հանրահայտ «Գայանե» բալետի երաժշտությամբ ունկնդրի մեջ սերմանում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, ժողովուրդների բարեկամությունը, սերը, հարգանքը և ամենակարևորը՝ խաղաղ, համատեղ ապրելու իրավունքը:

Իրականության գեղագիտական ընկալումը իրականացվում է արվեստի տարբեր տեսակներով՝ կիրառական դեկորատիվ արվեստ, կերպարվեստ,

քանդակագործություն, ճարտարապետություն, թատրոն, պար և երաժշտություն: Երբ գիտատեխնիկական նվաճումները սկսեցին ծառայել նաև արվեստին, ծնվեցին լուսանկարչությունը, կինոն և հեռուստատեսությունը: Արվեստի էության ու օրենքների մասին գիտությունը կոչվում է **գեղագիտություն**:

Բնության գեղեցկությամբ ներշնչվել են բազմաթիվ արվեստագետներ՝ գրողներ ու նկարիչներ: Հայ գրող **Ակսել Բակունցի** համար ստեղծագործելու լավագույն շարժառիթ է դարձել Սյունյաց աշխարհի գեղեցկությունն ու չնաշխարհիկ բնությունը:

Ակսել Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքից ներկայացված հատվածն ընթերցելիս ուշադրություն դարձրու, թե պատկերավորման ինչ հնարներ է հեղինակն օգտագործել բնության գեղեցկությունը նկարագրելու համար:

Ակսել Բակունց ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

(հատված)

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում, և

այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:



Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և կի-

սով չափի հողի մեջ խրված պարիսպները: Ոչ մի երկաթյա դուռ և ոչ մի պահակ՝ աշտարակի գլխին:

Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ավերը և հղկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները:

Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնյունով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարե արծիվը՝ կտուցը կեռ թուր, մագիլ-

ները՝ սրածայր նիզակներ, փետուրները՝ որպես պողպատե զրահ:

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը՝ կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը՝ ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՈՒՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Գրականության դասընթացից վերհիշի՞ր ստեղծագործություններ, որոնցում հեղինակները ներկայացրել ու գովերգել են բնությունը: Դո՞ւրս գրիր քեզ համար ամենահաջողված ու սիրելի հատվածներից մեկը: Քո ընտրած հատվածում հեղինակին որքանո՞վ է հաջողվել բնության գեղեցկությունը փոխանցել ընթերցողին:
2. Համացանցում որոնի՞ր բնանկարի ժանրում հայտնի նկարիչների կտավները և ստեղծի՞ր անվանական թղթապանակ:
3. Դիտի՞ր «Գայանե» բալետից «Լեզգինկա» հատվածը և ասա՛, թե գեղեցիկի ինչ դրսևորումների հանդիպեցիր, և մեկնաբանի՞ր (ռիթմ, երաժշտություն, շարժումներ, գույներ, ձևավորում և այլն):



ՀԵՏԱՋՈՏՈՒՄ

Համացանցում գտի՞ր և ուսումնասիրի՞ր համաշխարհային և ազգային կերպարվեստի վարպետների գործեր, առանձնացրո՞ւ 5 ստեղծագործություն, որոնք քո կարծիքով գեղեցկության իդեալի դրսևորում են: Ստեղծի՞ր էլեկտրոնային պաստառ՝ հիմնավորելով քո ընտրությունը:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Նախապատրաստի՛ր փոքրիկ ելույթ «Արդյոք մենք ունե՞նք պատասխանատվություն գեղեցիկի պահպանման գործում» թեմայով և ներկայացրո՛ւ դասարանին:



ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Գեղեցիկն անհատական զգացողություն է և չունի որոշակի սահմանում	
Ինչ է գեղագիտական միջավայրը	
Գեղեցիկի իմացությունը մարդկային գործունեության հիմնական նպատակներից մեկն է	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Ներկայացնել «գեղեցիկ» հասկացությունը և ինձ շրջապատող իրերի գեղեցկությունը	
Մեկնաբանել պատասխանատվության իմ բաժինը գեղեցիկի պահպանման գործում	
Համեմատել գեղեցիկի ընկալումները տարբեր ժամանակների նկարիչների կտավների միջոցով	

Թեմա 6. ՄԱՐԴ-ԻՐԱՎՈՒՆՔ

6.1. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ: ԻՐԱՎՈՒՆՔ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Իրավունք

Մարդու վարքագիծը, հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի, կանոնների համակցությունը:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

Եզրույթներ

Հասարակական նորմ — միմյանց միջև հարաբերությունները կարգավորելու և ավելի ներդաշնակ համայնքներ ու հասարակություններ ձևավորելու նպատակով մարդկանց կողմից ստեղծված վարքագծի կանոններ:

Սովորույթ — հասարակություններում ընդունված և ժամանակի ընթացքում պարբերաբար կրկնվելու արդյունքում բյուրեղացած վարքագծի կանոններ:

Կրոնական նորմ — որոշակի կրոնի շրջանակներում ընդունված վարքագծի կանոններ, որոնք կրոնական այդ համայնքի համար սահմանում են անհրաժեշտ, ցանկալի, թույլատրելի կամ արգելված վարքագծի կանոններ:

Էթիկական նորմ — որոշակի մասնագիտական համայնքներում (փաստաբանական, դատավորների, բժիշկների, գործարարների և այլն) գործող վարքագծի կանոններ են, որոնք պարտադիր են կատարման այդ համայնքի ներկայացուցիչների կողմից:

Օրենք — պետության կողմից ընդունվող իրավական ակտ:

Փորձի՛ր բերել սովորույթների, հասարակական, կրոնական ու էթիկական նորմերի օրինակներ և նշի՛ր, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ դրանց չհետևելը:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ե՞րբ է առաջանում մարդկանց միջև հարաբերությունները իրավունքով կարգավորելու անհրաժեշտություն: Բե՛ր օրինակներ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ


Մարդիկ ողջ կյանքի ընթացքում դրսևորում են որոշակի վարքագիծ. նրանք սովորում են, ձեռք են բերում ընկերներ, մտերիմներ, գործընկերներ, նպաստում են իրենց ընտանիքների և հասարակության բարեկեցությանը, ձևավորում իրենց պատկերացումները երջանիկ լինելու մասին:

Եվ որքան շատ ու տարբեր են մարդիկ, այդքան տարբեր են նրանց ցանկությունները, պահանջմունքներն ու շահերը: Արդյունքում մարդկանց մեջ առկա է լինում շահերի ու պահանջմունքների բազմազանություն, և շատ դեպքերում այդ շահերն ու պահանջմունքները հակասում են իրար:

Համատեղ կյանքի ընթացքում մարդկանց շահերը բախվում են: Ստաց-

վում է, որ մի կողմից մարդիկ ցանկանում են ապրել միասին, ձևավորել ընտանիքներ, համայնքներ, հասարակություններ, պետություններ, մյուս կողմից առկա է լինում վտանգ, որ նրանց շահերի ու պահանջմունքների հակասությունները կարող են սպառնալ այդ նույն մարդկանց, ընտանիքներին, համայնքներին, հասարակություններին:

Հնարավոր այդ հակասությունները մեղմելու, միմյանց միջև հարաբերությունները կարգավորելու և ավելի ներդաշնակ համայնքներ ու հասարակություններ ձևավորելու համար մարդիկ իրենց համար ստեղծել են վարքագծի տարբեր կանոններ, որոնք իրենց ամբողջության մեջ անվանվում են հասարակական նորմեր:



Գծապատկեր 1
Հասարակական նորմեր

Գծապատկերում ներկայացված նորմերի միջոցով մարդիկ կազմակերպում են սեփական վարքագիծը և հասարակության մյուս անդամներից պահանջում են չխախտել այդ կանոնները: Կանոնները խախտողի նկատմամբ հասարակության մյուս անդամները կիրառում են համապատասխան միջոցներ:

Կարևոր է իմանալ, թե ինչ տեսակի նորմ է խախտվում (բարոյական, կրոնական, իրավական), որովհետև ցանկացած նորմի խախտում ունենում է իրեն բնորոշ հետևանք:

Սովորույթները հասարակության մեջ ընդունված վարքագծի կանոններ են, որոնք, ժամանակի ընթացքում պարբերաբար կրկնվելով, բյուրեղացել են և դարձել հասարակության կողմից պահանջվող վարքագծի կանոններ: Երբեմն դրանք կարող են դրսևորվել ավանդույթների տեսքով:

Օրինակ՝ հայկական ընտանիքներում ամուսնացող յուրաքանչյուր զույգ ունենում է քավոր և քավորկին: Նրանց խոսքը սովորույթի ուժով բարձր հեղինակություն է վայելում, և նորապսակները սովորաբար պարտավորված են լինում հետևելու նրանց խոսքին՝ կարծիքին, խորհուրդներին, որոշմանը:

Կրոնական նորմերը որոշակի կրոնի (քրիստոնեություն, մահմեդականություն, բուդդիզմ, հինդուիզմ, հուդայականություն, զրադաշտականություն և այլն) շրջանակներում ընդունված վարքագծի կանոններ են, որոնք կրոնական այդ համայնքի համար սահմանում են անհրաժեշտ, ցանկալի, թույ-

լատրելի կամ արգելված վարքագծի կանոններ:

Օրինակ՝ քրիստոնեական հավատքը սահմանում է պսակադրությունների իրականացման հատուկ կարգ, համաձայն որի՝ ամուսնությունը համարվում է կայացած, եթե եկեղեցական արարողակարգով սահմանված բոլոր գործողությունները կատարվում են: Իսլամը կամ մահմեդականությունը պահանջում է մզկիթ մտնել բոկոտն և օրվա սահմանված ժամերին պարտադիր մի քանի անգամ աղոթել:

Էթիկական նորմերը որոշակի մասնագիտական համայնքներում (փաստաբանական, դատավորների, բժիշկների, գործարարների և այլն) գործող վարքագծի կանոններ են, որոնք ևս պարտադիր պետք է կատարվեն այդ համայնքի ներկայացուցիչների կողմից: Եթե համայնքի անդամները այդ կանոնները չեն պահպանում, ապա այդ համայնքը հնարավորություն է ստանում որոշակի քայլեր ձեռնարկելու այդ նորմերը խախտողի նկատմամբ, ընդհուպ մինչև համայնքից հեռացում:

Եթե, օրինակ, դատավորը կամ փաստաբանը կատարել է այնպիսի անվայելույց արարք կամ անպարկեշտ վարքագիծ է դրսևորել, որը հարիր չէ այդ մասնագիտության տեր մարդուն և նվազեցնում է հասարակության հարգանքը մասնագիտության նկատմամբ, ապա համապատասխան մասնագիտական համայնքները կարող են որոշակի կանխարգելիչ քայլեր ձեռնարկել, որոնք կարող են անբարենպաստ հետևանք ունենալ այդ անձանց համար:

օրինակ՝ կիրառեն նախագգուշացում կամ անգամ գրկեն այդ մասնագիտա-

կան աշխատանքը կատարելու իրավունքից:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համեմատե՛ք ձեր առաջադրած բարոյական, կրոնական նորմերը և սովորույթները: Փորձե՛ք բացահայտել դրանց հիմնական տարբերությունները:
2. Ներկայացրե՛ք բարոյական նորմերի մի քանի օրինակներ, որոնք դուք կարևորում եք մեր հասարակության համար:
3. Ի՞նչ սովորույթներ գիտեք, որոնք այսօր էլ մարդկանց վարքագծի վրա կարող են ազդեցություն ունենալ:
4. Կրոնական ի՞նչ նորմերի օրինակներ գիտեք, որ կիրառական են մարդկանց կյանքում:

ԻՐԱՎՈՒՆՔ. ԻՄԱՍՏԸ, ԴԵՐԸ, ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Իրավունքի վերաբերյալ պատկերացումները մարդկանց մեջ ձևավորվել են անհիշելի ժամանակներից: Սակայն դրանք միշտ փոփոխությունների են ենթարկվել:

Սկզբնական շրջանում և հատկապես Հին Արևելքի հասարակություններում շատ դժվար էր տարանջատել իրավական նորմերը բարոյական, կրոնական և այլ հասարակական նորմերից: Եվ մարդկանց համար դրանք մեկ միասնական հասարակական նորմի տեսք ունեին:

Այսպես՝ Համմուրաբիի օրենքների 192–րդ հոդվածը սահմանում է. *«Եթե որդեգրված որդին իրեն որդեգրած հորը կամ մորն ասում է. «Դու իմ հայրը կամ մայրը չես», նրա լեզուն պեղք է կտրել»:*

Այս հոդվածը, ըստ էության, իրավական նորմ է, քանի որ ընդունվել էր պետության կողմից՝ ի դեմս Համմուրաբի թագավորի, սակայն այն գործել է որպես բարոյական պարտականություն ևս, քա-

նի որ որդեգրված որդին միշտ պետք է հիշի, որ իրեն որդեգրողներն իր ծնողներն են: Այն համարվել է նաև կրոնական նորմ, որովհետև Համմուրաբիի օրենքները թագավորին են հանձնվել արևի աստված Շամաշի կողմից, համարվել են նրա կամքի արտահայտությունը, իսկ խախտման դեպքում, բացի նորմերում գրված հետևանքներից, առաջացրել են նաև վերջինիս անեծքը և ցասումը:

Ժամանակի ընթացում մարդկանց թիվը հասարակությունում մեծանում է, դրան զուգահեռ միևնույն արժեքները չկիսող մարդկանց թիվը, նրանց շահերը, հետաքրքրությունները փոփոխվում են, պահանջմունքները շատանում են, այլ կերպ ասած՝ հարաբերությունները բարդանում են: Եվ մարդկանց հարաբերությունները որքան բարդանում են, այնքան հասարակական հարաբերությունները կարգավորելը միայն սովորույթներով, բարոյական, կրոնական և

այլ հասարակական նորմերով գործնականում չի ստացվում, ձախողվում է: Պատճառն այն է, որ մարդկանց վերաբերմունքը այդ նույն՝ բարոյական, սովորությանին, կրոնական և այլ նորմերին տարբեր է, քանի որ ոչ բոլորն են նույն կրոնին պատկանում, ոչ բոլորն են նույն սովորույթները զարգացրել կամ նույն բարոյական արժեքները կիսում:

Այստեղ էլ առաջանում է մարդկանց վարքագիծը իրավունքով կարգավորելու անհրաժեշտությունը: Բանն այն է, որ իրավունքը՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչ, թերևս ամենաընդհանրականն է բոլոր մյուս կարգավորիչներից: Այն առավել մեծ հնարավորություն ունի սահմանելու մարդկանց վարքագծի հավասարակշռված չափանիշերը, առավել արդարացիորեն բաշխել ազատությունը մարդկանց մեջ և սահմանել բոլորի համար հավասար պայմաններ:

Պետությունը ստեղծվում է հասարակության կողմից, որպեսզի հետևի այդ իրավունքների կենսագործմանը և մարդկանց ազատությունների պաշտպանությանը:

Օրինակ՝

Բարոյական նորմ — Եղի՛ր բարի, սիրի՛ր մերձավորիդ, հավատարի՛մ եղի՛ր ընկերոջդ և այլն:

Իրավական նորմ — Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Որպես այդպիսին՝ իրավունքի նորմերն իրավունքի համակարգի բջիջներն են, կառուցվածքային ամենափոքր

հսկ եթե այդ իրավունքները չեն պահպանվում կամավոր, ապա պետությունը կիրառում է պետական հարկադրանք՝ ստիպելով իրավունքը խախտած անձին հետևել իրավունքի գրավոր կարգադրությանը:

Այստեղ պետք է ընդգծել, որ իրավունքը հասարակական այլ կարգավորիչներից (կրոն, սովորույթ, բարոյականություն և այլն) **տարբերվում է պետական հարկադրանքով:**

Իրավունքն արտահայտվում և մարդկանց տեսանելի է դառնում իրավական նորմերի՝ կանոնների միջոցով:

Իրավական նորմերը մարդկանց վարքագծի կանոններ են, որոնք սահմանվում են պետության կողմից:

Եթե, օրինակ, բարոյական նորմերը վերացական կանոններ են, խիստ ձև չունեն, մարդկանց գիտակցության մեջ են, ապա իրավական նորմերը խիստ որոշակի, հստակ ձև ունեցող կանոններ են և առկա են պետության կողմից ընդունված իրավական ակտերում՝ օրենքներ, կառավարության որոշումներ և այլն:

տարրերը, որոնց միջոցով կառուցվում է ամբողջ իրավունքի համակարգը:

իրավունքի նորմերը՝ որպես վարքագծի կանոններ, կարող են գոյություն ունենալ և արտահայտվել երկու ձևով՝ բանավոր և գրավոր:

Ի սկզբանե բոլոր հասարակություններում իրավական նորմերի գոյության և արտահայտման հիմնական ձևը եղել են մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունեցող կանոնները, որոնք պահպանվել են մարդկանց ներքին համոզմունքով և հասարակական կարծիքով: Սրանք մարդկանց մեջ փոխանցվել են բանավոր կերպով, սերնդեսերունդ, իսկ մենք դրանց այլ կերպ անվանել ենք իրավական սովորույթներ կամ սովորույթային իրավունք:

Այս ամենով հանդերձ՝ փորձենք ի մի բերել իրավունքի բոլոր հատկանիշները.

իրավունքը մարդու վարքագիծը, հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի, կանոնների համակցություն է:

Իրավունքը սահմանվում է պետության կողմից:

Ամրագրվում է պաշտոնական փաստաթղթերում (օրենքներ, հրամաններ և այլն):

Համապարտադիր է (այն ուղղված է բոլորին) և օժտված է պետական հարկադրանքով:

Իրավունքը պայմանավորված է մարդու և հասարակության բնույթով (որքան զարգացած են մարդն ու հասարակությունը, այնքան առաջադիմական է իրավունքը):



Յուստիցիա կամ արդարության լեդի (18-րդ դար, Մայթա)

Արդարության խորհրդանիշը ծագում է հռոմեական դիցաբանության արդարության և օրինականության աստվածուհի Յուստիցիայից: Հունական դիցաբանության համարժեքները՝ Թեմիս (Ֆեմիդա) և Դիկե:

- Համացանցում որոնի՛ր՝ որոնք են Յուստիցիայի կերպարի հիմնական բնութագրիչները: Ի՞նչ են դրանք խորհրդանշում:
- Կատարի՛ր փոքրիկ հետազոտություն տարբեր դիցաբանություններում արդարությունը խորհրդանշող կերպարների վերաբերյալ: Ի՞նչ ընդհանրություններ ու տարբերություններ ունեն դրանք: Հետազոտությանդ մեջ ներառի՛ր Արդարության լեդիին պատկերող հայտնի կոթողներ:



ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված իրավիճակներից ո՞րը կկարգավորվի պետական հարկադրանքով:

Իրավիճակ 1

Հայաստանում բնակվող երիտասարդը մեկնել էր Ճապոնիա՝ ուսանելու: Նա զարմանում էր, որ դպրոցում բարևելիս ճապոնացի սովորողները խոնարհվում էին միմյանց:

Երբ նա հարցրեց իր ուսուցչուհուն, թե արդյոք ինքն էլ է պարտավոր դա անել, ուսուցչուհին պատասխանեց, որ խոնարհումը՝ որպես բարևելու նշան, ճապոնացիների սովորույթն է:

Իրավիճակ 2

Փողոցում մի մարդ բարձր ձայնով գոռում էր մեկ այլ մարդու վրա և վիրավորական բառեր ասում:

Մոտակայքում գտնվող ոստիկանը մոտեցավ նրան և պահանջեց դադարեցնել նման վարքագիծը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հաշվի առնելով դասագրքի տեղեկությունները և քո դիտարկումները՝ փորձի՛ր տալ իրավունքի սեփական սահմանումը:
2. Պատասխանե՛ք ներկայացված իրավիճակից բխող հարցերին:

Ոչ հեռավոր ապագայում, երբ հնարավոր է լինում գաղութացնել այլ մոլորակներ և այնտեղ հաստատվել բնակություն, մի խումբ երիտասարդներ՝ թվով քսան հոգի, որ մանկության ընկերներ են, մեկնում են նոր հայտնաբերված Արանոդ մոլորակ՝ հեղազորական աշխատանքներ կատարելու և հետագայում բնակություն հաստատելու:

Հասնելով նոր մոլորակ՝ նրանք որոշում են սահմանել իրենց հարաբերությունները կարգավորելու կանոններ:

- Ի՞նչ խորհուրդ կտաք երիտասարդներին, հասարակական ո՞ր նորմերով պետք է կարգավորեն իրենց հարաբերությունները՝ բարոյակա՞ն, կրոնակա՞ն, իրավակա՞ն, ավանդույթայի՞ն, թե՞ այլն: Ո՞ր նորմերն ավելի արդյունավետ կկարգավորեն երիտասարդների այս խմբի միջև առկա հարաբերությունները:
- Ի՞նչ խորհուրդ կտաք նրանց, եթե նրանց հետ միաժամանակ այդ նույն մոլորակ գան մարդկանց մեծաքանակ խմբեր, որոնք պատկանում են տարբեր մշակույթների, երբ ձեր առջև խնդիր լինե՞ր ապահովել հարաբերությունների արդյունավետ կարգավորումը նոր մոլորակ ժամանած բոլոր մարդկանց միջև:

3. Արդյոք հնարավոր են մարդկանց միջև հարաբերություններ, որոնք կարգավորվեն բացառապես իրավունքով: «Այո» և «ոչ» պատասխանների դեպքում հիմնավորի՛ր ասվածը:
4. Հնարավոր է, որ հակասություն առաջանան իրավունքի և հասարակական այլ կարգավորիչների (սովորույթներ, բարոյական նորմեր, կրոնական նորմեր և այլն) միջև:
5. Ձեր կարծիքով որտեղի՞ց է ծագել իրավունքը:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

Դասակարգի՛ր հասարակական նորմերը՝ ըստ քեզ համար ընդունելի կարևորության, և հիմնավորի՛ր:

6.2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Նորմատիվ իրավական ակտ — պաշտոնական փաստաթուղթ, որն ընդունվում է պետության կողմից:

Իրավական սովորույթ — մարդկանց վարքագծի պարբերաբար կրկնման հետևանքով ձևավորված կանոններ, որոնք այդ նույն մարդկանց կողմից ընկալվում և ճանաչվում են որպես պարտադիր վարքագիծ:

Դատական նախադեպ — նման փաստական հանգամանքներ ունեցող՝ նախկինում քննված գործի առնչությամբ դատարանի կողմից ընդունված որոշում:


Միատարր հասարակություն — միևնույն էթնիկ խմբին պատկանող մարդկանցից կազմված հասարակություն:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐ

Իրավունքի նորմեր կարելի է հայտնաբերել տարբեր աղբյուրներում. օրինակ՝ օրենքներում, այլ փաստաթղթերում, դատարանի որոշումներում, սովորույթներում, միջազգային

պայմանագրերում, միջազգային սովորույթներում, շատ ազգերի կողմից ճանաչված իրավական սկզբունքներում, կրոնական սուրբ գրքերում՝ Աստվածաշունչ, Դուրան և այլն:

Իրավունքի աղբյուրներից են.



Իրավական սովորույթ: Իրավական սովորույթները մարդկանց վարքագծի պարբերաբար կրկնման հետևանքով ձևավորված կանոններն են, որոնք այդ նույն մարդկանց կողմից ընկալվում և ճանաչվում են որպես պարտադիր վարքագիծ: Այսինքն՝ եթե հանկարծ հասարակության անդամը խախտի նման իրավական սովորույթի պահանջը, ապա հասարակությունը նրա նկատմամբ կկիրառի հարկադրանք:

Որպեսզի տարբերենք սովորույթն իրավական սովորույթից, նախ պետք է հասկանանք, որ սովորական սովորույթը (սովորություն) հարկադրանք չի առաջացնում մարդկանց նկատմամբ, այն պարզապես կրկնվող վարքագիծ է: Սովորույթը իրավական սովորույթի կձևափոխվի միայն այն ժամանակ, երբ հասարակությունը ցանկանա և իր գործողություններով նպաստի, որ այդ **կրկնվող վարքագիծը** պարտադիր բնույթ ունենա, իսկ եթե չկատարվի ինչ-որ մեկի կողմից, ապա նրա նկատմամբ հնարավոր լինի կիրառել հարկադրանք:

Այլ կերպ ասած՝ հասարակությունը **իրավական համոզվածություն** պետք է ունենա, որ այդ կրկնվող վարքագիծը ցանկալի և պարտադիր է, որ լինի համապարտադիր հասարակության անդամների համար:

Սովորություն: *Երիտասարդ աղջիկն ամեն առավոտ դուրս է գալիս մարզանքի, մեկ ժամ բնության գրկում ֆիզիկական մարմնամարզությամբ է զբաղվում, վերադառնում է տուն և պատրաստվում մեկնելու աշխատանքի:*

Իրավական սովորույթ: *Աշխատանքի մեկնելիս տղան այցելում է իր հարևանի խանութ, այնտեղից վերցնում որոշ գրենական պիտույքներ, բայց գումար չի վճարում դրանց դիմաց: Նրանց մեջ ձևավորված է իրավական սովորույթ, համաձայն որի՝ տղան փոխհատուցումը կատարում է ոչ թե դրանով, այլ ծառայությամբ: Ամեն երեկո նա խանութպանի երեխաներին օգնում է պատրաստելու դասերը:*

Իրավական սովորույթը շատ տարածված է միատարր հասարակություններում: Պատճառն այն է, որ միևնույն էթնիկական խմբում մարդիկ հարաբերականորեն ավելի միանման են մտածում, երևույթների վերաբերյալ ունեն գրեթե նույնական պատկերացումներ, ճիշտ և սխալ վարքագծի վերաբերյալ համընկնող պատկերացումներ: Ուստի նման հասարակություններում հարաբերությունների կարգավորման զգալի ծավալը մնում է սովորութային իրավունքի ձեռքում:

Պատական նախադեպ: Լինում են դեպքեր, երբ դատարանը ստիպված է լինում քննել այնպիսի գործ, որը նման է նախկինում քննված մեկ այլ գործի, այսինքն՝ կողմերը տարբեր են, սակայն փաստերն ամբողջությամբ նույնն են: Նման պարագայում դատարանը գտնում է նման փաստական հանգամանքներ ունեցող՝ նախկինում քննված գործ, վերցնում է այդ գործի դատական որոշումը և կիրառում է իրեն հանձնված գործը լուծելիս:

Իրավիճակ

Բնակիչն իր առանձնատան մոտ գտնվող աղբյուրի ջուրը մոռացել էր փակել: Արդյունքում ջուրը հոսել էր և վնասել հարևան բնակչի այգում աճող թանկարժեք ծաղիկները:

Երբ գործը հասավ դատարան, դատարանը որոշեց, որ առանձնատանն ապրողը պետք է փոխհատուցի մյուս բնակչի կրած վնասը, քանի որ նա պարտավոր էր կանխատեսել վնասը:

Իրավիճակով պայմանավորված դատական նախադեպ

Բազմաբնակարան շենքի բնակիչն իր բնակարանում ջուրը միացրած է թողնում և վնասում ներքևի հարկում ապրողի առաստաղը:

Երբ գործը հասնում է դատարան, դատարանը հղում է տալիս իրավիճակ 1–ում առաջացած վեճի արդյունքում կայացրած դատական ակտին և որոշում, որ այդ նույն տրամաբանությամբ պետք է փոխհատուցվի ներքևի հարկում ապրող բնակչին հատուցած վնասը:

Դատական նախադեպերը համարվում են իրավունքի **սուսջնային** աղբյուր Անգլիայում, Ավստրալիայում, ԱՄՆ–ում, Կանադայում և այլն:

Այս երկրներում դատավորները համարվում են «խոսող իրավունք», քանի որ հենց դատավորներն են դատական նախադեպերով ստեղծում իրավունք:

Հայաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Իտալիայում

և այլ երկրներում դատավորները ոչ թե ստեղծում են իրավունք, այլ պարզապես մեկնաբանում են եղած, արդեն իսկ օրենքներով հաստատված իրավունքները:

Նորմատիվ իրավական ակտ: Նորմատիվ իրավական ակտը պաշտոնական փաստաթուղթ է, որն ընդունվում է պետության կողմից:

Օրինակ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը որոշում է, որ վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով գարնանային արձակուրդը երկարաձգվում է մեկ շաբաթով:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ տարբերություններ կան իրավական սովորույթի և նորմատիվ իրավական ակտի միջև:
2. Ե՞րբ և ո՞ր դեպքերում է կիրառելի դատական նախադեպը՝ որպես իրավունքի աղբյուր:



Ռաֆայել Սանտի. «Սողոմոնի դպր» (1520–ական թթ.)

Աստվածաշնչյան հայրնի պատմություն կա. մի անգամ երկու կանայք գալիս են Սողոմոնի մոտ՝ խնդրելով նրան վճռել, թե ում է պատկանում երեխան: Կանայք ապրում էին նույն փանը և որդիներ էին ունեցել երեք օրվա փարբերությամբ: Երեխաներից մեկը մահացել էր: Առաջին կինը պնդում էր, որ հարևանը փոխել է երեխաներին, այն բանից հետո երբ նրա որդին մահացել է: Երկրորդ կինը համոզում էր, որ մահացել է առաջին կնոջ երեխան: Սողոմոն թագավորը հրամայում է սուր բերել և երեխային բաժանել երկու մասի և բաժանել կանանց միջև: Երկրորդ կինը բավարարվում է որոշումով: Լսելով որոշման մասին՝ առաջին կինը բղավում է, որ երեխային պետք չէ սպանել. ավելի լավ է նրան հանձնեն հարևանին:

- Ելնելով բերված տվյալներից՝ եզրակացրո՛ւ ով էր երեխայի մայրը:
- Ինչպե՞ս կգնահատես կոնֆլիկտը լուծելու համար Սողոմոնի գործածած հնարը:
- Ի՞նչ հնար կառաջարկեիր դու՝ հասկանալու համար, թե ով է երեխայի իրական մայրը:



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ

Դասարանով բաժանվե՛ք խմբերի: Յուրաքանչյուր խումբ թող ներկայացնի իրավունքի մեկ աղբյուր՝ իրավական սովորույթ, դատական նախադեպ, նորմատիվ իրավական ակտեր: Ներկայացնելիս խումբը պետք է՝

- Ընդգծի՝ իրեն բաժին հասած իրավունքի աղբյուրի կարևորությունը և հասարակական հարաբերությունները դրանով կարգավորելու անհրաժեշտությունը:
- Նշի՝ մյուս երկու իրավունքի աղբյուրների բացասական գծերը, և թե ինչու պետք չէ հասարակական հարաբերությունները կարգավորել միմիայն այդ աղբյուրներով:



ՔԱՎԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Ինչ են հասարակական նորմերը	
Իրավունքի առաջացման պատճառները, աղբյուրները	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Բացատրել իրավունք հասկացության իմաստը և դերը մարդու կյանքում	
Վերլուծել, թե ինչ նորմերով/կանոններով են կարգավորվում մարդկանց միջև հարաբերությունները	
Ներկայացնել իրավունքի աղբյուրները	

Թեմա 7. ՄԱՐԴ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

7.1. ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ, ԿԱՐԻՔՆԵՐ, ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Տնտեսություն — այն գործողությունների ամբողջությունն է, որը նկարագրում է, թե ինչպես են սահմանափակ ռեսուրսներով բավարարվում մարդկանց, ընկերությունների, պետությունների անսահմանափակ կարիքներն ու ցանկությունները: Այդ գործողությունների շարքում են ապրանքների ու ծառայությունների արտադրությունը, սպառումը, բաշխումն ու փոխանակումը:

Կարիք — մարդկանց այն պահանջներն են, որոնք անհրաժեշտ են գոյատևելու, հանրության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Դրանց բացակայությունը կարող է վտանգ առաջացնել մարդու ֆիզիկական, հոգեբանական և մտավոր առողջության համար:

Ցանկություն — որևէ բան անելու կամ ձեռք բերելու մտադրությունը, ձգտումը, առանց որի վտանգ չի սպառնում կյանքին կամ ընդհանուր բարեկեցությանը, սակայն որի առկայությունը կարող է բարձրացնել մարդու կյանքի որակը:

Կյանքի որակ — մարդկանց բարեկեցության մակարդակն է, որը կարող է ունենալ բազմաթիվ ոլորտներ՝ առողջություն, հասարակության հետ շփում, ֆինանսական կայունություն և այլն:

Բառակազմորեն վերլուծի՛ր «տնտեսություն» բառը և մեկնաբանի՛ր՝ հաշվի առնելով, որ հիմքում տոնն արմատն է: Գտի՛ր այլ լեզուներով մի քանի թարգմանություններ և դրանք և՛ս բացատրի:

Բերված սահմանումների հիման վրա քո բառերով բացատրի՛ր կարիքի և ցանկության տարբերությունը: Փորձի՛ր բերել օրինակներ:



ՈԱԶՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապերի ստեղծում

Տեքստի ցանկացած գործնական օրինակ կարդալիս այդ ամենը փորձի՛ր արտապատկերել քո և քո շրջապատի մարդկանց վրա ու ասել, թե ինչ որոշում կկայաց-

Նես դու նմանատիպ իրավիճակում: Եթե արդեն եղել են նման իրավիճակներ, ի՞նչն այլ կերպ կանեիր:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մարդկանց ո՞ր տեսակին ես դու պատկանում: Հիմնավորի՛ր՝ ինչու:

- Իմ ծախսերի գումարից յուրաքանչյուր ամսվա վերջում որոշակի գումար է ավելանում, որը պահում եմ իմ խնայատուփի մեջ:
- Ունեցածս գումարը չի բավականացնում: Գումարս ծախսելուց հետո ինձ օգնում են ընտանիքիս անդամները, ընկերներս:
- Իմ ամբողջ եկամուտը ծախսվում է, ես չեմ խնայում, բայց կարողանում եմ իմ ծախսերն այպես կառավարել, որ գումարս մինչև ամսվա վերջ բավականացնի:
- Գումարն, իհարկե, նաև ծախսելու համար է, ես այդպես էլ անում եմ՝ մեծ մասը ծախսում եմ: Բայց, իհարկե, նաև որոշ գումար ամեն ամիս մի կողմ եմ դնում:

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ, ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եղե՞լ են դեպքեր, երբ ցանկացել եք որևէ գաղափար իրագործել, որևէ երազանք իրականացնել, բայց ինչ–որ բան, օրինակ՝ ժամանակ, գիտելիք, գումար, չի բավականացրել: Այդպես է շատերի հետ. մարդիկ ունեն անսահմանափակ կարիքներ, ցանկություններ, նպատակներ, երազանքներ, բայց դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցները ոչ միշտ են հասու ու բավարար: Այս նպատակով էլ բոլորս կատարում ենք այն, ինչ կարևոր է, և ինչի համար այս պահին միջոցները բավարար են:

Այն ամենը, ինչը մեզ համար անհրաժեշտություն է, կոչում ենք **կարիք**: Օրինակ՝ տարբեր մարդկանց անհրաժեշտ է ջուր, սնունդ, ապրելու տեղ, հագուստ, մարդկային շփում, ստեղծագործելու հնարավորություն: Այդ ամենը նրանց

անհրաժեշտ է ֆիզիկական, հոգեբանական և մտավոր առողջության համար:

Կարիքները ևս կարող են լինել շոշափելի, ֆիզիկապես գոյություն ունեցող և հակառակը՝ անշոշափելի: Օրինակ՝ հացը, ջուրը կարող ենք տեսնել, շոշափել, հոտ քաշել, քանի որ դրանք գոյություն ունեն նաև ֆիզիկապես: Իսկ ոստիկանների աշխատանքը, որի արդյունքում մենք մեզ ապահով ենք զգում, չենք կարող շոշափել:

Մարդկանց կարիքները կարող են տարբերվել, օրինակ՝ մեկի համար ակնոցը կարող է լինել անհրաժեշտություն, քանի որ առանց ակնոցի լավ չի տեսնի: Մեկ ուրիշի համար էլ այն կարող է լինել շքեղության պարագա: Երկրորդ դեպքում ակնոց գնելը կլինի ոչ թե կարիքի, այլ ցանկության բավարարում:



Վինսենթ վան Գոգ, «Կարտոֆիլ ուտողները» (1885 թ.)

Ինչպե՞ս է կապվում Վինսենթ վան Գոգի այս կտավը ներկայացված նյութի հետ:

Կարիքներից ելնելով՝ մարդիկ ձևավորում են տարբեր ասպրանքների ու ծառայությունների պահանջունքներ, օրինակ՝ ծարավ են, ցանկանում են գնել ջուր կամ հյութ:

Ցանկությունն անհրաժեշտություն չէ, այլ որևէ բան անելու կամ ձեռք բերելու հաճելի մտադրություն, որի բացակայության դեպքում վտանգ չի սպառնում կյանքին: Բայց ցանկությունները բարձրացնում են մարդկանց կյանքի որակը.

նրանք իրենց ավելի երջանիկ, ապահով ու բարեկեցիկ են զգում: Ցանկությունները տեղին ընտրելով ու իրագործելով՝ մարդկանց մեջ առաջանում է բավարարվածության զգացում ու ոգևորում ավելին անելու: Օրինակ՝ մարդը կարող է դիմանալ առանց դասական համերգ գնալու, բայց դասական համերգը նրան կարող է հոգեբանական ու մտավոր հանգստություն պարգևել ու բարձրացնել նրա կյանքի որակը:

Քո տարեկից մի աշակերտ ցանկանում էր ձեռք բերել վերջին սերնդի իր նախասիրած հեռախոսը: Նրա ծնողները ձեռք բերեցին ու նվիրեցին այդ հեռախոսը իրենց որդուն ծննդյան օրվա կապակցությամբ: Իրականում նրան պետք չէն այդ հեռախոսի հնարավորությունները, քանի որ նրան անհրաժեշտ հնարավորությունները ապահովում են նաև ավելի մատչելի հեռախոսները: Ի՞նչ ես կարծում, նրա ու նրա ընտանիքի կյանքի որակի վրա ինչպե՞ս է անդրադարձել այդ հեռախոսի ձեռքբերումը:

Կարդա՛ ստորև տրված իրավիճակը: Քո կյանքում եղե՞լ են նման իրավիճակներ: Ինչպե՞ս ես որոշել առաջնահերթությունը:

Շուշանին ծնողներն այսօր տվել են 700 դրամ, նաև նրա հետ դրել են օրապահիկ:

Շուշանն այսօր պետք է գնա դպրոց, հետո՝ նկարչության: Տրանսպորտի համար նրան անհրաժեշտ է 300 դրամ: Դպրոցից պարի գնալու ճանապարհին ծարավում է և որոշում է ջուր գնել, որն արժե 200 դրամ: Խանութում տեսնում է նաև գունավոր գրիչների հավաքածու, որն արժե 400 դրամ: Քանի որ նրա համար այժմ ջուր խմելը կարիք է, նա գրիչներ գնելը հետաձգում է: Նա սահմանում է առաջնահերթություն. չմնալ ծարավ, գնալ նկարչության, հասնել տուն, իսկ գունավոր գրիչներ գնելն այժմ առաջնահերթություն չէ. կարող է նաև գնել հետո կամ չգնել:

Բերված օրինակը կարող է հասարակ ու ինքնըստինքյան հասկանալի թվալ, բայց ոչ միշտ է մարդկանց հաջողվում առաջնահերթություններ սահմանել, քանի որ երբեմն կարիքները շփոթում են ցանկությունների հետ, անհրաժեշտն ու ցանկալին էլ՝ անկարևորի հետ:

Այս խնդիրն առաջանում է, քանի որ մեր ռեսուրսներն անսահմանափակ չեն, հակառակը՝ դրանք սահմանափակ են կամ սակավ: Ինչպես մեր օրինակում Շուշանն ուներ 700 դրամ, այնպես էլ բոլորն ունեն սահմանափակումներ՝ ինչ-

պես մարդիկ, այնպես էլ ձեռնարկությունները (բիզնեսները), պետությունները: Չենք կարող անել այն ամենը, ինչ մեր մտքով անցնի, կամ ցանկանանք: Պետք է ունենանք հերթականություն կամ առաջնահերթություն: Օրինակները բերված են գումարով, բայց վերաբերում են բոլոր տեսակի ռեսուրսներին, այդ թվում՝ ժամանակին, աշխատանքին, իրերին և այլն: Մենք չենք կարող միաժամանակ լինել և՛ մի տեղում, և՛ մյուսում. պետք է ընտրել, քանզի ժամանակը և տարբեր տեղեր գնալու հնարավորությունները սահմանափակ են:




ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմի՛ր վերջին երեք ամիսների ընթացքում քո կարիքների և ցանկությունների աղյուսակը՝ ըստ տրված օրինակի կամ շարունակելով նշվածները: Կարող ես ավելացնել լրացուցիչ տողեր:

Կարիք	Ցանկություն
Մտունդ	Նոր հագուստ
Գրենական պիտույքներ	Նվերներ

2. Արդյոք չկա՞ կարիք, որն իրականում ցանկություն է, և չկա՞ արդյոք ցանկություն, որն իրականում կարիք է:
3. Այս գծապատկերում լրացրո՛ւ քո կարիքներն ու ցանկությունները. որքան շտապ է այն բավարարելու կարիքը, այնքան ա՛ջ գրիր, առավել կարևորը՝ վերևո՛ւմ: Քեզ համար կազմի՛ր քայլաշար, թե որոնք ես առաջինը բավարարելու, որոնք՝ ավելի ուշ:

Կարևոր նկատառում: Հատուկ ուշադրությունն դարձրու նրանց, որոնք *շտապ չեն*, սակայն *կարևոր են*: Հետագայում այս վարժությունը կարող ես կիրառել քո անելիքների առաջնահերթությունը որոշելիս, թե ինչը անես հիմա, ինչի համար հետո ժամանակ հատկացնես, ինչը չանես և այլն:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Որքանո՞վ է քեզ համար կարևոր կարիքներն ու ցանկությունները տարանջատելը: Քեզ հաջողվո՞ւմ է առանջնահերթություն սահմանել ու գնումների, ռեսուրսների տրամադրման հերթականությունը որոշել:
2. Հիշի՛ր հայկական և այլ ասացվածքներ, որոնք բնութագրում են բերված իրավիճակները:
Օրինակ՝ «Ուտքդ վերմակի չափո՞վ մեկնիր»: Մեկնաբանի՛ր:
3. Զրուցի՛ր ընտանիքի անդամներից երկուսի հետ, հարցերի միջոցով կազմի՛ր նրանց վերջին ամսվա կարիքների և ցանկությունների աղյուսակը: Ճշտի՛ր՝ եղե՞լ է ցանկություն, որն ավելի շուտ է բավարարվել, քան կարիքը, կամ եղե՞լ է կարիք, որի համար գումար չի մնացել ցանկությունների բավարարման արդյունքում: Փորձի՛ր պարզել, թե ինչու: Արդյունքները պետք չէ ներկայացնել դասարանում, այն քո և քո ընտանիքի համար է:

7.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ, ՍԱԿԱՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Սակավություն — այն իրավիճակն է, երբ ռեսուրսները (ժամանակ, գումար, հող, աշխատանք, կապիտալ և այլն) սահմանափակ են և չեն բավարարում մարդկանց բոլոր կարիքներն ու ցանկությունները: Արդյունքում առաջանում է ռեսուրսների միջև ընտրություն կատարելու ու դրանք տնտեսելու կարիք:

Տնտեսագիտություն — գիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է սահմանափակ ռեսուրսների միջև կատարվող ընտրությունը՝ մարդկանց անսահմանափակ կարիքներն ու ցանկությունները լավագույնս բավարարելու համար: *Տնտեսագիտություն* անունը գալիս է հունարենից՝ οἰκονομία (օյկոնոմիա), որի բաղադրիչներն են οἶκος՝ տուն, տնտեսություն, և νόμος՝ կառավարում:

Արտադրական գործոններ — այն ռեսուրսներն են, որոնք անհրաժեշտ են արտադրության ընթացքում:

Փորձի՛ր բերել արտադրության ընթացքում անհրաժեշտ ռեսուրսների օրինակներ:

Ադամ Սմիթ — շոտլանդացի տնտեսագետ և փիլիսոփա, ժամանակակից տնտեսագիտության հիմնադիրը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունները չեն կարող արտադրել այն ամենը, ինչ ցանկանում են, երբ ունեն սահմանափակ ռեսուրսներ: Նրանք պետք է որոշում կայացնեն, թե ինչ են ընտրում, ինչի մեջ են մասնագիտանում: Դրա համար կան մարզակոշիկներ արտադրող մասնագիտացած ընկերություններ, և կան դասական կոշիկների ճյուղը գրաված ընկերություններ: Իհարկե, նրանց ընտրությունը կարող է պայմանավորված լինել նրանով, որ նրանք ցանկանում են հենց այդ ոլոր-

տում գործել, ցանկանում են այդպիսի հաճախորդների հետ աշխատել: Բայց նաև մեծ նշանակություն ունի այն փաստը, որ իրենց ռեսուրսներն անսահմանափակ չեն, և նրանք չեն կարող ամեն ինչ արտադրել: Սա էլ հենց կկոչենք **սակավության հիմնախնդիր**:

Առօրյա կյանքում մենք գործ ունենք տարբեր տեսակի ռեսուրսների սակավության հիմնախնդրի հետ: Օրինակ՝ մտածում ենք՝ ինչին ուղղենք մեր ժամանակը՝ դասապատրաստմանը, թե՞ հե-

տաքրքիր հաղորդում նայելուն: Ժամանակը կլինի այն սակավ ռեսուրսը, որի բաշխումն էլ մեզ կդնի ընտրության առաջ:

Որքան էլ մեծ լինի սակավության հիմնախնդիրը, այն հնարավոր է հաղթահարել տարբեր եղանակներով.

- **Ընտրություն կատարելով.** երբ ընտրենք ամենաանհրաժեշտը և գիջենք ոչ այդքան կարևորը:
- **Ռեսուրսները խնայելով.** Հայաստանը հարուստ է խմելու ջրի պաշարով, սակայն դա չի նշանակում, որ մենք պետք է վատնենք այն: Ռեսուրսների խնայողությունը շատերին թույլ կտա օգտվել դրանցից:
- **Պետությունը ևս կարող է միջամտել,** որ այն մարդիկ կամ կազմակերպությունները, որոնք ունեն որևէ ռեսուրսի կարիք, սակայն չեն կարողանում ստանալ դրանք, հնարավորություն ունենան ձեռք բերելու: Օրինակ՝ ոչ բոլորն են ունակ ստանալու բարձրագույն կրթություն ու վճարելու դրա համար, այդ պատճառով պետական համալսարաններում կա պետական պատվերով անվճար կրթվելու հնարավորություն:

Նշենք նաև, որ կան ռեսուրսներ, որոնք սակավ չեն ու անվճար են, ուստի դրանց ձեռքբերման համար դուք չպետք է հրաժարվեք այլ բաներից: Օրինակներ են արևի շողերը, մաքուր օդը,

լիճը, անտառները: Բայց դրանք կարող են որոշ իրավիճակներում դառնալ սակավ ու «ստիպել» ձեռք բերել դրանք: Օրինակ՝ կան պահպանվող անտառներ, որոնց մուտքը տոմսով է ու վճարովի:

1. Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են անվճար ռեսուրսները քիչ: Ի՞նչ դեր ունի պետությունը դրանց ապահովման մեջ:
2. Միասին ընտրե՛ք մի տեսակի ապրանք, որն ունեք դասարանում (գրիչ, գիրք կամ այլ իր): Մեկ սեղանի վրա հավաքե՛ք ընտրած այդ իրից դասարանի աշակերտների քանակից երկու անգամ քիչ քանակով, օրինակ՝ եթե դասարանում 20 աշակերտ կա, ապա մեկ սեղանի վրա դրե՛ք 10 գրիչ: Սկսե՛ք խաղը. դուք ունեք 5 րոպե, որպեսզի որոշեք, թե դասարանից ովքեր են ստանալու այդ իրերը: Եթե աշակերտների քանակը ավելի է 10-ից, կարող եք խաղն անել խմբերով՝ բաժանվելով 4–5-հոգանոց խմբերի: Խաղից հետո բացատրե՛ք, թե ինչպես որոշեցիք բաժանելու ձևը. ինչո՞ւ: Կապե՛ք խաղի արդյունքը սակավության հիմնախնդրի հետ:

Ռեսուրսների սակավության հիմնախնդիրն էլ եղավ մի ամբողջ գիտություն ստեղծելու «առիթը», որը **տնտեսագիտությունն** է: Տնտեսագիտության հիմքում հենց այդ ռեսուրսների ընտրությունն է և տնտեսական որոշումները, թե ինչպես կարող են հնարավորինս ար-

դյունավետ օգտագործվել ռեսուրսները, որ շատ բարիք ստեղծվի հանրության համար: Ժամանակի ընթացքում շատ գիտնականներ են ուսումնասիրել տնտեսական խնդիրները, առաջարկել լուծումներ: Նրանց թվում եղել են նաև անվանի հայ գիտնականներ:

Երբ ձեռնարկությունները տարբեր ապրանքներ են արտադրում (թթվասեր, անձեռոցիկ, գիրք և այլն) կամ ծառայություններ են մատուցում (վարսավիրը մազ է կտրում, արշավախմբի ղեկավարը սար է բարձրացնում), նրանց ամենաշատը պետք են գալիս այս 4 տեսակի ռեսուրսները, որոնց կոչում են **արտադրական գործոններ**.


րը սար է բարձրացնում), նրանց ամենաշատը պետք են գալիս այս 4 տեսակի ռեսուրսները, որոնց կոչում են **արտադրական գործոններ**.

- **Հող և բնական ռեսուրսներ**՝ բնական հանածոները, հողը, անտառները, ստորերկրյա ջրերը, գետերը և այլն:
- **Աշխատանք**՝ ֆիզիկական և մտավոր ռեսուրսները, որ մարդիկ ներդնում են արտադրական գործընթացում: Շինարարը շենքեր է կառուցում, բժիշկը մարդկանց է բուժում, ճարտարապետը շինություններ է նախագծում, հացթուխը հացաբուլկեղեն է պատրաստում և այլն:
- **Կապիտալ**՝ մարդու կողմից ստեղծված արտադրական գործոնները, ինչպես, օրինակ՝ հաստոցները, շենքերը, ճանապարհները, օդանավակայանները, գործիքները և այլն:
- **Ձեռնարկատիրություն**՝ որոշ մարդկանց տաղանդը ձեռնարկությունը կառավարելու, այդ թվում՝ բիզնես սկսելը, կառավարելը, զարգացնելը, նոր գաղափարներ տալը և այլն:




ՆՊՍԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ


1. Որոնի՛ր ու գտի՛ր, թե ովքեր են եղել այս տնտեսագետները, ի՞նչ են ուսումնասիրել: Պատրաստի՛ր տեղեկատվական նյութ այն մասին, թե ինչով են նպաստել նրանք տնտեսագիտության կայացմանը:




Ադամ Սմիթ



Ջոն Քեյնս



Ֆրիդրիխ Հայեկ



Մրմեն Աֆյան

2. Թվարկի՛ր ռեսուրսներ անհատների և ձեռնարկությունների (բիզնեսների) համար: Նշի՛ր, թե արտադրական 4 գործոններից որոնց մեջ կարող են դրանք ներառված լինել:
3. Եթե դու լինեիր մի ընկերության ղեկավար, ապա ինչպե՞ս կընտրեիր արտադրական գործոնները: Օրինակ՝ ինչպե՞ս կընտրեիր քո աշխատողներին:

7.3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՇԽՈՒՄ, ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Արտադրություն — ապրանքների ու ծառայությունների ստեղծման գործընթացն է:

Այն ներառում է հումքի, աշխատուժի և արտադրական այլ գործոնների կիրառումը՝ մարդկանց, ընկերությունների ու երկրների համար բարիքներ ստեղծելու համար:

Բաշխում — նկարագրում է, թե ինչպես են մարդիկ, կազմակերպությունները ստանում արտադրված ապրանքներն ու ծառայությունները:

Փոխանակում — մարդկանց, կազմակերպությունների ու պետությունների միջև ապրանքների և ծառայությունների առևտուրն է:


Սպառում — ապրանքների ու ծառայությունների օգտագործումը մարդկանց, ընկերությունների և պետության կողմից՝ իրենց կարիքներն ու ցանկությունները բավարարելու նպատակով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՓՈԽԼԵՐԸ

Եթե տնտեսությունը պատկերավոր ներկայացնենք որպես կոնստրուկտոր, ապա այն բաղկացած կլինի մի քանի կարևոր կտորից: Այդ կտորները կլինեն.

1. Ապրանքների ու ծառայությունների ստեղծում կամ **արտադրություն**: Օրինակ՝ ընկերությունն արտադրում է ավտոմեքենա: Արտադրությունն անելիս սակավության հիմնախնդիրը մեզ ստիպում է պատասխանել հետևյալ երեք հարցին.
 - **Ի՞նչ արդադրել**. պետք է ընտրել, թե ինչ տեսակի և որքան ապրանք կամ ծառայություն արտադրել:
 - **Որքա՞ն արդադրել**. պետք է կատարել արտադրական ռեսուրսների ընտրություն, օրինակ՝ ավելի շատ հաստոցներ ու ավելի քիչ մարդկանց ներգրավել, թե՞ հակառակը:
 - **Ո՞ւմ համար**. այստեղ էլ որոշվում է, թե ով ու որքան քանակով կստանա այդ ապրանքից կամ ծառայությունից: Օրինակ՝ պետությունը որոշում կայացնի, որ կրթական, առողջական ծառայությունները մարդկանց հասանելի են հավասարապես, իսկ, օրինակ, ավտոմեքենայի պարագայում ընկերությունը կարող է որոշել կենտրոնանալ ասիական երկրների վրա ու ասիացիների կարիքներին համապատասխան ավտոմեքենաներ արտադրել:

2. Արտադրվելուց հետո ընկերությունը ավտոմեքենաները փոխանցում է այն վաճառատաներին, որոնք այնուհետև վաճառում են ավտոմեքենաները: Սա էլ կոչվում է **բաշխում**, քանզի ավտոմեքենաները բաշխվում են մեզ:
3. Այնուհետև տեղի է ունենում **փոխանակում**՝ ապրանքների, ծառայությունների, գումարի: Սա էլ այն փուլն է, երբ գումար ենք վճարում ու ձեռք բերում ավտոմեքենան:
4. Եվ վերջապես՝ այդ ապրանքներն ու ծառայություններն օգտագործելու փուլը, որը կանվանենք **սպառում**: Մեր օրինակում ավտոմեքենան էր, որը վարելով էլ կիրականացնենք սպառումը:



Գծապատկեր 1. Արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում

1. Ուսումնասիրի՛ր գծապատկերը և փորձի՛ր յուրաքանչյուր գործընթացից բերել օրինակներ:
2. Ըստ գծապատկերից ստացված տեղեկության՝ ստորև բերված տեքստում առանձնացրո՛ւ արտադրությանը, բաշխմանը, փոխանակմանն ու սպառմանը վերաբերող հատվածները: Ուշադրություն դարձրու այն հատվածներին, որոնք կարող են վերաբերել դրանցից միանգամից մի քանիսին:

«Ջանգալ» ընկերությունը հիմնադրվել է 1997 թվականին: Այն հայտնի է դպրոցական դասագրքերի, մասնագիտական, մոտիվացիոն, ճանաչողական գրականության, գեղարվեստական, մանկական, գիտական գրքերի, գիտական ամսագրերի հրատարակությամբ: Հրատարակչությունն ընթերցողին ներկայացնում է նաև էլեկտրոնային գրքեր՝ տարբեր հարթակներում ու հավելվածներում ընթերցելու հնարավորությամբ: Սկզբում

«Զանգակ»-ը միայն հրատարակչություն էր, սակայն 2012 թ. բացվում է առաջին «Զանգակ» գրատունը, և սկսվում է նոր պատմություն՝ հազարավոր ընթերցողներով, գրքերով, ղեկքերով ու իրադարձություններով:

Տպագրվելուց հետո գրքերը խմբավորվում և ուղարկվում են ամենադարձեր գրախանութներ, գրադարաններ, հասանելի են դառնում առցանց հարթակներում: «Զանգակ»-ն ունի հարուկ ծրագիր՝ ուղղված Սփյուռքի համար ուսումնական գրականության սրելոծմանը:

Գրքերի վաճառքն իրականացվում է գրախանութներում և առցանց հարթակներում փարբեր՝ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ վճարման եղանակով:

1997 թվականից ի վեր «Զանգակ»-ի դասագրքերով բազում սերունդներ են կրթվում դպրոցներում, մանկավարժներն ապահովվում են ուսումնասովանողական նյութերով, իսկ ընթերցասերները վայելում են համաշխարհային բեսթսելլերների որակյա թարգմանությունները:

Դիտարկի՛ր այս նկարները և դասում ներկայացված գծապատկեր 1-ը և աաս՝, թե որ նկարում որ գործընթացն է նկարագրված: Մեկնաբանի՛ր, թե ինչ ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ են իրավիճակները, ինչպես են դրանք իրականացվում:





ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Ընտրի՛ր քեզ ծանոթ ընկերություններից մեկը և պատասխանի՛ր թվարկված հարցերին՝ ի՞նչ են նրանք որոշել արտադրել, ինչպե՞ս են իրականացնում արտադրությունը, ո՞ւմ համար են արտադրում:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

1. Ի՞նչ կլիներ, եթե ռեսուրսները չլինեին սահմանափակ, և սակավության խնդիր չլիներ:
2. Ո՞ւմ է ավելի շատ վերաբերում սակավության հիմնախնդիրը:
3. Ի՞նչ կլիներ, եթե չլիներ տնտեսագիտություն:

7.4. ԱՆՁՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, ԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅՈՒՄ ԵՎ ԱՊԱԳԱՅՈՒՄ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

- Բյուջե** — Եկամուտների և ծախսերի հաշվեկշիռն է որոշակի ժամանակի համար: Կարող է լինել անձնական, ընտանեկան, կազմակերպության, պետության և այլն:
- Եկամուտ** — ձեր վաստակած կամ ստացած գումարն է որոշակի ժամանակահատվածում, օրինակ՝ աշխատավարձը, նվեր ստացած գումարը և այլն:
- Ծախս** — գնված ապրանքների ու ծառայությունների գինն է, օրինակ՝ հյուֆի դիմաց վճարված գումարը, կոմունալների վճարը և այլն:
- Խնայողություն** — գումարի, ժամանակի, այլ ռեսուրսների չծախսվող մասն է, որը կարող է ծախսվել ապագայում՝ չնախատեսված իրավիճակներում կամ նպատակներն իրականացնելիս:

Դասարանում փոքրիկ հարցում արա՛ր ու պարզի՛ր, թե ինչ եք հասկանում «բյուջե» ասելով:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ինչո՞ւ է կարևոր ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելը:

ԱՆՁՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, ԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թե՛ մեր հայրենակիցների, թե՛ այլազգիների շարքում քիչ չեն այն մարդիկ, որոնք, թեկուզ քիչ գումար ստանալով ու փոքր ֆինանսական միջոցների տիրապետելով, կարողացել են գրանցել ֆինանսական հաջողություններ և հասնել իրենց նպատակներին:

Այդ հաջողության առաջին «գաղտնիքը» ունեցած ֆինանսները և ծախսերը ճիշտ կառավարելն է, այլ կերպ ասած՝ **բյուջեն** կառավարելը: Շատերը **բյուջե**

բառը կապում են միայն ունեցած գումարի հետ: Սակայն բյուջեն և՛ ստացած, և՛ ծախսած գումարն է, այդ երկուսի միասնությունը:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ սեփական միջոցները պլանավորելն ու կառավարելը բերում են հետևյալ դրական արդյունքներին.

- Բյուջեն պլանավորելն ու ծախսերին հետևելը ձևավորում են ֆինանսական լավ սովորություններ, օգնում կայացնելու ֆինանսական արդյունավետ որոշումներ (ըստ Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության 2015 թվականի հետազոտության):
- Հանգեցնում է ֆինանսական բարեկեցության աճի, քանի որ սեփական միջոցները լավ կառավարելն օգնում է ունենալու գումար ապագայի ցանկությունների համար և չկուտակել պարտքեր (ըստ ԱՄՆ Ֆինանսական կրթության ազգային հիմնադրամի 2013 թվականի հետազոտության),
- Կանոնավոր կերպով բյուջե կազմողներն ու դրան հետևողները իրենց ֆինանսապես ավելի կայուն են զգում, քան նրանք, ովքեր չեն հետևում իրենց փողերին (Չալզ Շվաբի՝ 2018 թվականի հետազոտության արդյունքներով):

Այլ կերպ ասած՝ եթե մենք ունենք նպատակներ, որոնց հասնելու համար մեզ ռեսուրսներ են անհրաժեշտ, բյուջե ունենալն ու դրան հետևելը նման կլինի ճանապարհային քարտեզի, որին հետևելը մեզ կօգնի հասնելու մեր նշա-

նակակետ, իսկ շեղվելը՝ կհեռացնի մեր նպատակից:

Բյուջեն կարող է լինել և՛ մեկ հոգու համար, և՛ ընտանիքի, և՛ անգամ պետության համար: Ահա անձնական բյուջեի մեկ իրական օրինակ.

Աղյուսակ

Սևան համայնքի բնակավայրերից մեկում ապրող 12–ամյա Կիկտորյայի բյուջեն
(օրինակը իրական է, սակայն բերված չէ ձեզ հստակ ցուցումներ տալու կամ օրինակ ծառայելու համար)

ՎԻԿՏՈՐՅԱՅԻ ԵԿԱՄՈՒՏԸ	ԳՈՒՄԱՐ (դրամ)	ՎԻԿՏՈՐՅԱՅԻ ԾԱԽՍԵՐԸ	ԳՈՒՄԱՐ (դրամ)
Ծնողներից ստացվող ամսական գումար	50 000	Խնայողություն	5 000
Պապիկից և տատիկից ստացվող գումար	1 500	Դպրոց տանելու սննդի գումար	5 500
Գնումներից մնացած մանրադրամներ	3 200	Տրանսպորտ	4 200
		Կոշիկ	8 000
		Նվերներ ու ժամանց	11 000
		Գրենական պիտույքներ, էքսկուրսիայի գումար	19 000
		Չսախառտեված ծախսեր (մատակ, չիփս, հյուֆ, այլ գնումներ)	2 000
Ընդամենը եկամուտ	54 700	Ընդամենը ծախսեր	54 700

1. **Դիտարկի՛ր բյուջեի օրինակը և քննարկի՛ր, թե ծախսերից որոնք կարող են Վիկտորյայի համար լինել կարիքներ, որոնք՝ ցանկություններ:**
2. **Կազմի՛ր բյուջե նշված օրինակով նախ քեզ համար, հետո նաև քո ընտանիքի համար: Պետք է այն դասարանում ներկայացնել. նպատակը քո ուշադրությունը քո եկամուտների ու ծախսերի վրա կենտրոնացնելն ու բաղձալիցան ուղիներ բացահայտելն է:**

Դիտարկելով Վիկտորյայի ֆինանսական ապրելակերպը՝ կարող ենք ասել, որ նա ունի եկամտի տարբեր աղբյուրներ, օրինակ՝ ծնողներից ստացվող գումար՝ ամսական ծախսերի համար, պապիկից ու տատիկից ստացվող ամսական գումար, ինչպես նաև նա հավաքում է գնումների արդյունքում մնացած մանրադրամները: Իսկ ի՞նչ պատկեր է ծախսերի պարագայում. տեսնում ենք, որ Վիկտորյան բոլոր ծախսերն անելուց առաջ նախ մի կողմ է դնում որոշակի

գումար՝ որպես **խնայողություն**: Նա այդպես սկսեց վարվել այն բանից հետո, երբ հասկացավ, որ եթե գումարը չխնայի, ապա կծախսի ու այդպես էլ չի հասնի իր նպատակին, որն անցյալ ամիս իր սիրելի ֆիլմի նոր թողարկումը երևանում դիտելն էր: Նա խնայում է նաև իր ապագա լավ կրթության համար:

Վիկտորյան ունի նաև այլ ծախսեր, որոնցով հոգում է իր կարիքներն ու ցանկությունները:

Ի՞նչ ես կարծում, եկամտի ո՞ր մասն է պետք ծախսել, ո՞ր մասը՝ խնայել:

Ֆինանսիստները ձեզ առաջարկում են ունեցած գումարի կեսը ուղղել կարիքների բավարարմանը, 30%–ը կարող եք ուղղել ցանկություններին:

Իսկ 20%–ը հենց սկզբից առանձնացնել որպես խնայողություն, հետո անցնել գումարը ծախսելուն: Եթե կարող եք ապրել 200 000 դրամով, ուրեմն կարող եք ապրել նաև 160 000 դրամով: Խնայե՛ք գումարն ու մոռացե՛ք դրա մասին, տեղավորե՛ք ծախսերը մնացած գումարի սահմաններում:

Օրինակ՝ 100 000 դրամից 20 000 դրամը հենց սկզբից առանձնացնում ենք որպես խնայողություն, 50 000–ով բավարարում ենք կարիքները, մնացած գումարով էլ հոգում ենք ցանկությունների մասին, քանի որ դրանք բարձրացնում են մեր կյանքի որակը:

Խնայողությունները մարդկանց անհրաժեշտ են մի քանի կարևոր նպատակով:



ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մեր օրինակում Վիկտորյան, ամեն ամիս ստացած գումարի մի մասը խնայելով, կուներենա առանձնացրած գումար՝ չնախարեակցած իրավիճակներում, անհրաժեշտ դեպքերում ծախսելու նպատակով: Օրինակ՝ եթե կարիք լինի առողջական խնդիրները լուծելու, նա կօգտագործի խնայած գումարը, կրթական նպատակով ճամփորդություններ և կկարողանան մասնակցել իր խնայած գումարով: Հիշի՛ր «Վերև» («Սք») ֆիլմը, որտեղ Կառլը և Էլլին չէին կարողանում հասնել իրենց երազանքին, քանզի միշտ մի չնախարեակցած բան էր տեղի ունենում, և նրանք ստիպված էին լինում ծախսել իրենց խնայողությունները:

- Պատկերացրո՛ւ, որ դու հասել ես քո ցանկալի նպատակին, որը օգտակար է և՛ քեզ, և՛ շրջապատի մարդկանց: Կարող ես փակել աչքերդ ու մտապատկերել քեզ, քո դրական հույզերը, եղանակը, ձայները: Իսկ հիմա, երբ արդեն գիտես, թե որքան դրական հույզեր կարող է այն քեզ տալ, ինչպես նաև վերոբերյալ տեքստը հաշվի առնելով՝ գրի՛ր, թե ինչ քայլերով կարող ես հասնել այդ նպատակին: Իսկ ի՞նչ կարող ես անել այսօր, վաղը, մյուս շաբաթ:

Վիկտորյան և նրա ընտանիքը ունեն նպատակներ, կարևոր ծախսեր, որոնց համար այդ պահին գումարը բավարար չէ, բայց կարելի է դրանք հեղափոխել իրականացնել՝ խնայելով գումար: Օրինակ՝ երկու տարի խնայելով՝ կարող են ընտանիքով մեկնել հանգստի: Կամ՝ տասը տարի խնայելով՝ կարող են լավ կրթության համար գումար առանձնացնել, ինչպես վարվել էին Հարրի Փոթերի ծնողները՝ իրենց խնայած գումարով հնարավորություն ստեղծելով Հարրիի համար սովորելու Հոգվորթսում:

1. Ամսվա սկզբում կազմի՛ր բյուջե՝ նշելով, թե ինչ եկամուտներ ես ունենալու ու ինչ ծախսեր ես կատարելու:
 - Ամսվա ընթացքում կատարի՛ր նշումներ, թե ինչպես ես իրականում օգտագործում քո գումարը:
 - Ամսվա վերջում պլանավորածդ համեմատի՛ր իրականության հետ. ի՞նչն այլ կերպ եղավ, կարողացա՞ր գումար խնայել, ի՞նչն այլ կերպ կանես հաջորդ ամիս:
2. Տանն ընթերցի՛ր, ապա դասարանում մեկնաբանի՛ր, թե ինչ կապ ունեն բյուջեի, խնայողությունների հետ գրական հետևյալ ստեղծագործությունները. Ղազարոս Աղայան. «Անահիտ», Իվան Կռիլով. «Ճպուռն ու մրջյունը»:



ԱՐԺԵՔ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔ

1. Ի՞նչ է լինում ամբողջ հասարակությունում, երբ մարդիկ, ընտանիքները, պետությունը ընդհանրապես չեն կառավարում կամ լավ չեն կառավարում իրենց բյուջեն:
2. Ի՞նչ կլինի, եթե ընտանիքը չունենա խնայողություններ, սակայն այդ ամսվա ծախսերը գերազանցեն եկամուտները:
Արդյոք պե՞տք է, որ բոլոր մարդիկ աշխատեն և խնայեն: Ինչի՞ համար են խնայողությունները:



ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
Կարիքներ և ցանկություններ հասկացությունների բացատրությունները	
Արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացներն ու դրանց կապը	
Ինչպես կարելի է պլանավորել անձնական բյուջեն	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Իրավիճակներ վերլուծելով՝ հետևություններ անել՝ ելնելով կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելու իրողությունից	
Նկարագրել արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները	
Բացատրել ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը	

Թեմա 8. ՄԱՐԴ-ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Քաղաքականություն — մարդկանց, խմբերի, համայնքների համակեցությունը, բաղկեցությունը և անվտանգությունը կազմակերպելու միջոց է:



ԲԱՌԱՊԱՇԱՐ

Քաղաքականություն — հին հունարեն «Πολιτική»՝ «պոլիտիկա», բառից, որի հիմքում «քաղաք» բառն է (հին հունարեն πόλις՝ «պոլիս»): Իր սկզբնական իմաստով «քաղաքականությունը» նշանակում էր «քաղաքային գործեր», և քանի որ Հին Հունաստանում քաղաքները միաժամանակ նաև առանձին պետություններ էին՝ քաղաք-պետություններ, ապա «քաղաքականություն» նշանակում էր նաև «պետական գործեր»:

Ինչո՞ւ էր քաղաքականությունը կապված հենց քաղաքների հետ:



ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապերի ստեղծում



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Քաղաքականությունն առնչվո՞ւմ է մեզ շրջապատող սոցիալական բոլոր երևույթներին:
- Ինչպե՞ս է քաղաքականությունն ազդում անհատի ու հասարակության վրա:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հին աշխարհի առաջին պետություններում մարդկանց խաղաղ ու ներդաշնակ համակեցության ապահովման նպատակով ձևավորվեցին քաղաքա-

ցիական կյանքի կարգավորման միջոցներ, որոնք պետք է կարգավորեին մարդկանց փոխհարաբերությունները, շփումները՝ պահանջելով բոլորից հարգել և պահպանել հաստատված կանոնները: Մարդիկ պետք է այդ բնակավայրերում ապահով ապրելու նպատակով ընդունեին կարգուկանոն՝ **քաղաքականություն**: Այսինքն՝ քաղաքականությունը կոչված էր լավագույնս կազմակերպելու մարդկանց համատեղ կյանքը պետության մեջ:

Մարդկային համայնքների ու համայնքային կյանքի զարգացմանը զուգահեռ՝ զարգացել, բարդացել է նաև այդ կյանքը կազմակերպելու գլխավոր միջոցը՝ քաղաքականությունը: Եվ եթե այսօր անհնար է պատկերացնել մարդու բարեկեցիկ ու անվտանգ կյանքը հասարակությունից դուրս, ապա նույնքան անհնար է պատկերացնել հասարակական կյանքն առանց քաղաքականության:

Քաղաքականությունն այսօր նաև ներթափանցել է հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Օրինակ՝ պետական կառույցների մի մասը (կառավարությունն իր նախարարություններով և այլ կառույցներով) որոշում է հասարակական կյանքի որ ոլորտում ինչ է պետք փոխել, մյուս մասը (խորհրդարանը) սահմանում է կանոնները՝ ով ինչ իրա-

վունքներ ու պարտավորություններ ունի, մյուս մասն էլ (դատարանները) որոշում է պետական կառույցների գործողությունների համապատասխանությունը սահմանված կանոններին՝ օրենքներին: Եվ բավարար է միայն ծանոթանալ պետությունների նախարարությունների գործառնություններին՝ համոզվելու համար, որ դրանք կոչված են կարգավորելու հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ կրթությունը, մշակույթը, առողջապահությունը, տնտեսությունը, հասարակական կարգը, պաշտպանությունը և այլն: Բայց ընտրությունների արդյունքում փոխվում է կառավարության և խորհրդարանի կազմը. գալիս են քաղաքական այլ ուժեր, այլ մարդիկ, որոնք երբեմն շարունակում են իրենց նախորդների քաղաքականությունը, երբեմն՝ փոխում այն: Օրինակ՝ կառավարությունը սահմանում է (կամ փոփոխում նախկինում սահմանվածը), թե երեխան ինչ գիտելիքներով, հմտություններով ու արժեհամակարգով պետք է օժտված լինի՝ ավարտելով դպրոցական կրթությունը: Ըստ այդմ, հանրակրթության ոլորտում փոփոխությունների արդյունքում փոխվում են դպրոցական կրթության տևողությունը, դասավանդվող առարկաների ցանկը, դրանց բովանդակությունը և այլն:

1. «Հասարակագիտություն» առարկան դպրոցում անցնում ես 7-րդ դասարանից: Անցկացրո՛ւ հարցում ուսուցիչների շրջանում՝ պարզելու համար, թե որ դասարանից էին անցնում նախկինում, և ինչպես կայացվեց նոր որոշումը, որն էր նպատակը:
2. Համավարակի ընթացքում որոշում կայացվեց դասերն անցկացնել հեռավար տարբերակով: Որոնումների միջոցով պարզի՛ր, թե որ կառույցը կամ

Կառույցները ընդունեցին այդ որոշումը և ինչու:

Հարկային քաղաքականության փոփոխություններն էլ, օրինակ, ազդում են վաճառվող ապրանքների և ծառայությունների գների վրա, առողջապահության ոլորտում փոփոխությունների արդյունքում (օրինակ՝ պատվաստումների հարցում) կանխվում են համավարակները, մարդիկ հնարավորություն են ստանում կանխարգելելու և բուժելու տարբեր հիվանդություններ, ռազմական

ոլորտում բանակը դառնում է ավելի մարտունակ՝ տեխնիկապես ու տեխնոլոգիապես ավելի հագեցած, զինծառայողները՝ ավելի բանիմաց, հասարակարգի պաշտպանության ոլորտում փոփոխությունների արդյունքում նվազում է հանցավորության մակարդակը, տվյալ երկրում կամ բնակավայրում ապրելը դառնում է ավելի անվտանգ և այլն:

Հիշի՞ր դեպք, երբ քաղաքական այս կամ այն փոփոխությունը նպաստել կամ խոչընդոտել է քո պահանջումքների բավարարմանը:

Իհարկե, միշտ չէ որ բոլոր մարդիկ համամիտ են հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում պետական քաղաքականության փոփոխություններին: Այդպիսի դեպքերում հակադիր քաղաքական ուժերը, օրինակ, խորհրդարանում դեմ են քվեարկում փոփոխություն

նախատեսող օրենքի նախագծին, երբեմն էլ քաղաքական ուժերը կազմակերպում են բողոքի զանգվածային գործողություններ փողոցներում ու հրապարակներում: Անհամաձայնության գործողությունները ևս քաղաքական կյանքի անբաժանելի ու բնական մասն են:

եղե՞լ է դեպք, որ մասնակցես քաղաքացիական ակտիվության գործողությունների: Ի՞նչ արդյունքի է հասել գործողությունը:

Ավելին՝ մարդկային հանրույթների կյանքն այնքան է բարդացել, որ այսօր խոսում ենք **քաղաքականության մակարդակների** մասին՝ տեղական–համայնքային՝ որևէ առանձին բնակավայրի մասշտաբով, տարածքային, օրինակ՝ մարզի մակարդակով, համապետական՝ ողջ պետության մասշտաբով, տարածաշրջանային՝ որևէ տարածաշրջանում գտնվող պետությունների միջև հարաբերությունները, համաշխարհային՝ աշ-

խարհի բոլոր պետություններին վերաբերող հարցերի մակարդակը: Հաճախ որոշ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է բոլոր այդ մակարդակների կամ դրանց մի մասի սերտ փոխազդեցություն: Օրինակ՝ կլիմայի փոփոխության բացասական հետևանքները (ջրհեղեղներ, անապատացում, հիվանդությունների տարածում և այլն) կամ միջազգային հանցավորության տարածումը վերաբերում են ամեն պետության, բայց դրանց

դեմ պետություններն ունակ չեն միայնակ պայքարելու: Այդ պատճառով էլ պետությունները համագործակցում են տարածաշրջանային կամ համաշխարհային մակարդակով:

Այսպիսով՝ մարդու անհատական կյանքը սերտորեն կապված ու կախված է հասարակական կյանքից, իսկ վերջինս իր հերթին չի կարող լինել առանց քաղաքականության: Ավելին՝ քաղաքականությունը սերտորեն շաղկապված է հասարակական կյանքի բո-

լոր ոլորտների հետ, հետևաբար ուղղակիորեն ազդում է նաև մարդու անհատական կյանքի վրա: Այստեղ էլ հենց դրսևորվում է մարդու և քաղաքականության փոխադարձ կապը. մի մարդ կամ մարդկանց խումբը քաղաքականության միջոցով փոխում է այլ մարդկանց՝ հասարակության կյանքը, որի արդյունքում անխուսափելիորեն փոխվում է նաև այդ հասարակության ցանկացած անդամի կյանքը:



Երևանում ներքաղաքային տրանսպորտի ուղեվարձի թանկացման դեմ բողոքի ցույցեր (2013 թ.)



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՈՒՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է քաղաքականությունը, և ո՞րն է դրա դերը հասարակական կյանքում:
2. Ինչպե՞ս է կապակցված քաղաքականությունը հասարակական կյանքի այլ ոլորտների, օրինակ՝ տնտեսության, կրթության, առողջապահության հետ:



*Եվրոպական քաղաքակրթության զարգացման առանձնահատկություններով պայմանավորված՝ մինչև օրս պահպանվել և գոյություն ունեն Եվրոպայի քաղաք-պետությունները:
Հունաստան՝ Ակրոպոլիս, փրեդակայված է Աթենքի բարձր բլուրներից մեկի վրա:
Մ. թ. ա. 449 թվականին վերակառուցվել է Պերիկլեսի օրոք:*



ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ

Համաշխարհային պատմության դասընթացից հիշի՛ր, թե ինչպես էին քաղաքացիները մասնակցում պոլիսի կառավարմանը:

8.2. ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԱԿ

Մարդը բանական, հասարակական և քաղաքական էակ է: Քաղաքականության ծագման բազմաթիվ բացատրությունների հիմքում այն ելակետն է, որ քաղաքականությունը **հասարակական** երևույթ է՝ ներհատուկ համայնքային կյանքով ապրող արարածներին: Բայց քաղաքականությունը հատուկ է ոչ բոլոր համայնքային արարածներին, այլ միայն նրանց, որոնք ունեն բավականին զարգացած **բանականություն** համայնքի ներսում, տարբեր համայնքների միջև հարաբերություններում ծագող բարդ խնդիրները լուծելու, բանակցելու, վարքը պայմանավորող նորմերի հարցում պայմանավորվելու միջոցով, ունակ են երկարաժամկետ կտրվածքով պլանավորելու իրենց համատեղ գործողությունները և այլն: Համայնքային արարածներից (գայլեր, առյուծներ, փղեր, քարայծներ և այլն) **հատկանիշների այս համախումբը բնորոշ է միայն մարդուն:**

Չկա հասարակական կյանք առանց քաղաքականության, չկա նաև քաղաքականություն առանց մարդո: Մարդն է կերտում մշակում, պլանավորում և իրականացնում քաղաքականությունը թե՛ հասարակության ներսում՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, թե՛ տարբեր հասարակությունների միջև փոխհարաբերություններում՝ միջազ-

գային հարաբերություններում: Դեպի մարդն է ուղղված նաև այդ քաղաքականության վերջնարդյունքը:

Իսկ ովքե՞ր իրավունք ունեն մասնակցելու քաղաքականությանը, ինչպե՞ս են նրանք իրացնում այդ իրավունքը, և ինչո՞ւ են մարդիկ ընդհանրապես մասնակցում քաղաքականությանը: Այս հարցերի պատասխանները տարբեր են թե՛ պատմության տարբեր փուլերում, թե՛ այսօր՝ տարբեր երկրներում: Հնում միայն քչերը (ազնվականները, որոշակի ունեցվածք և ազատություններ ունեցողները, ավելի ուշ՝ միայն չափահաս տղամարդիկ) կարող էին մասնակցել քաղաքականությանը՝ դառնալ կառավարիչ, ընդունել որոշումներ, ժողովրդի անունից մասնակցել օրենքների ընդունմանը և այլն: Այսօր երկրների մի մասում քաղաքական կյանքին մարդկանց մեծամասնության մասնակցությունը սահմանափակված է, իսկ մյուս մասում մարդիկ համոզված են, որ պետությունը ստեղծվում է մարդկանց կողմից ու մարդկանց ծառայելու համար: Այդ երկրներում չափահաս քաղաքացիները ստանում են քաղաքական լայն իրավունքներ՝ ընտրել և ընտրվել իշխանության մարմիններում ու ընդունել հասարակական կյանքի կազմակերպման համար կարևոր որոշումներ, այլ մարդկանց հետ ստեղծել

կամ միանալ այս կամ այն քաղաքական ուժին, կազմակերպել կամ մասնակցել քաղաքական միջոցառումներին (օրի-

նակ՝ ցույցերին, երթերին)՝ ի նշան բողոքի կամ աջակցության կառավարության այս կամ այն որոշմանը և այլն:



2012 թվականի մայիսին Մաշտոցի պուրակում քաղաքացիներն իրենց պայքարի ձայնն էին բարձրացրել՝ պահանջելով իշխանություններից ապամոնոփումեյ կրպակները և այգին վերադարձնել քաղաքացիներին:

Մեզնից յուրաքանչյուրի բարեկեցությունն ու անվտանգությունը կախված է մեր սեփական ու հասարակական կյանքի տարբեր ոլորտները կարգավորող կառույցների որոշումներից: Իսկ այդ կառույցները գործում, ղեկավարվում են որոշակի մարդկանց կողմից: Օրինակ՝ մեզնից յուրաքանչյուրն է որոշում ինչպես սովորել դպրոցում, ինչ ոլորտի մասնագետ դառնալ, որ ոլորտում աշխատել, բայց հասարակության մակարդակով որոշում ընդունողներն են սահմանում ու վերահսկում կրթության որակի չափանիշերը, աշխատանքի ու դրա վարձատրության պայմանները:

Քաղաքական կյանքին մասնակցությունը ոչ միայն իրավունք է, այլև պատասխանատվություն՝ սեփական ու մերձավորների, ծանոթ–անծանոթ մարդկանց ապագայի համար, քանի որ մեզնից յուրաքանչյուրի քաղաքական որո-

շումը կամ գործողությունը ազդում է ոչ միայն մեր, այլև մեզ շրջապատող մարդկանց կյանքի վրա: Թերևս դա է պատճառը, որ քաղաքական կյանքին մասնակցելու համար որոշ երկրներում մարդուն նախապատրաստում են դեռևս վաղ տարիքից՝ հանրակրթության միջոցով, օրինակ, նրան փոխանցելով գիտելիքներ քաղաքական երևույթների, արժեքների, նորմերի մասին: Վերջնականատակն այն է, որ դպրոցն ավարտելուց հետո քաղաքացին պատրաստ լինի ընդունելու գիտակցված որոշումներ և պատասխանատվություն կրելու դրանց համար:

Այսպիսով՝ լինելով սոցիալական էակ՝ մարդը չի կարող անմասն մնալ հասարակական կյանքից, այդ թվում՝ դրա անբաժան մաս քաղաքականությունից: Կախված տվյալ երկրում առկա կարգերից՝ մարդիկ ունենում են քաղաքական

կյանքին մասնակցելու տարբեր հնարավորություններ: Այն երկրներում, որտեղ այդ հնարավորությունները շատ են, մարդկանց մի մասը նախընտրում է պասիվ մասնակցությունը, օրինակ՝ ընտրել իրենց ներկայացուցիչներին իշխանության մարմիններում, մյուս մասը նախընտրում է ակտիվ մասնակցությունը՝ տարբեր ձևով աջակցել քաղաքական այս կամ այն ուժին, ստանձնել

պաշտոններ համայնքային կամ պետական կառույցներում, մասնակցել քաղաքական բազմամարդ երթերին ու ցույցերին և այլն: Բայց ամեն դեպքում, ճիշտ և պատասխանատու քաղաքական քայլեր կատարելու համար մարդիկ ժամանակի ընթացքում՝ վաղ տարիքից սկսած, պետք է զարգացնեն քաղաքական կյանքի մասին իրենց գիտելիքները և հմտությունները:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է նշանակում «մարդը հասարակական, բանական և քաղաքական էակ է»:
2. Ինչպե՞ս է դրսևորվում մարդու քաղաքական էակ լինելը:
3. Ուսումնասիրի՛ր ՀՀ Սահմանադրության 2–րդ՝ մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող գլուխը:
 - Դո՛ւրս գրիր այն հոդվածները, որոնք սահմանում են, թե չափահաս դառնալուց հետո դու ինչ քաղաքական իրավունքներ ես ստանալու:
 - Պատրաստի՛ր փոքրիկ ելույթ, թե քեզ համար կարևոր որ խնդիրների լուծմանը կծառայեցնեիր այդ իրավունքներդ:



4. Ուսումնասիրի՛ր ձեր համայնքում առկա կառույցները (բնակելի տներ, շուկա, դպրոց, համայնքապետարան, վաճառակետեր, ոստիկանություն, փրկարար ծառայության կենտրոն, մշակույթի կենտրոն և այլն): Փորձի՛ր պատկերել պատահալի վրա: Նշի՛ր, թե նշված կառույցներում կարգուկանոնի ինչ նորմեր են հաստատված:
5. Փորձի՛ր բացատրել, թե ինչու ես դու հաճախում դպրոց: Արդյոք դա քո՞ ցանկությունն է, թե՞ ինչ–որ մարդիկ են այդ որոշումը կայացրել: Ո՞րն է այդ ցանկության կամ որոշման նպատակը:
6. Ովքե՞ր են որոշել դպրոցի կարգուկանոնը, և ինչպես են այն վերահսկում:



ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ծանոթանալով ստորև ներկայացված իրավիճակներին՝ փորձիր նկարագրել, թե ինչպես կարելի է համատեղ ջանքերով ազդել որոշումների կայացման վրա, և որն է այդ ազդեցության արդյունքը:
2. Ներկայացված իրավիճակներում ինչպե՞ս կարող է քաղաքականությունն ազդել սովորողների կրթության որակի վրա:

Իրավիճակ 1

Դպրոցներից մեկում սովորողների մի խումբ ցանկություն ուներ մասնակցելու ռոբոտաշինության խմբակին, սակայն դպրոցում չկար մասնագետ: Սովորողները որոշեցին խնդիրը ներկայացնել դպրոցի տնօրինությանը՝ հիմնավորելով, որ մեր երկրի անվտանգության համար կարևոր է, որ սովորողները դպրոցական տարիքից ձեռք բերեն գիտելիքներ և հմտություններ:

Տնօրինությունը քննարկեց առաջարկը, ուսումնասիրվեց խմբակ ունենալու կարգը, որտեղ նշված էր, որ խմբակ ունենալու նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և կիրառական գիտելիքներ ձեռք բերելը: Որոշ ժամանակ անց դպրոց հրավիրվեց համապատասխան մասնագետը, և խմբակը սկսեց գործել:

Իրավիճակ 2

Հանրակրթական դպրոցներում կային սովորողներ, որոնք ունեին ցածր առաջադիմություն: Դպրոցների տնօրինության կողմից բարձրաձայնվեց խնդիրը << կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունում: Նախարարությունը կարևորեց ներկայացված խնդիրը և որոշում կայացրեց լուծում տալ: Այժմ դպրոցներում կան երկարօրյա խմբեր, որտեղ իրականացվում է խմբում ընդգրկված բոլոր սովորողների դասապատրաստման գործընթացը և աջակցում ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին յուրացնելու ուսումնական նյութը:



ԱՐԺԲԵ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆԲ

1. Ինչո՞ւ է քաղաքականությունը կարևոր քո կյանքում:
2. Քո կարծիքով որո՞նք են ամենակարևոր քաղաքական հարցերը, որոնց մեր երկիրը բախվում է այսօր:
3. Նշի՞ր վերջին շրջանի քաղաքական իրադարձություններ, որոնք ոգևորել կամ հիասթափեցրել են քեզ: Հիմնավորի՞ր՝ ինչու:
4. Պատմական կերպարներից ո՞ւմ վարած քաղաքականությունն է քեզ համար ողջունելի և օրինակելի: Ինչո՞ւ:



ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԵՍ ԱՐԴԵՆ ԳԻՏԵՄ	
«Քաղաքականություն» եզրույթի բացատրությունը	
Ինչպես է քաղաքականությունն առնչվում մեզ շրջապատող սոցիալական բոլոր երևույթներին	

ԵՍ ԱՐԴԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՄ	
Վերլուծել մարդու քաղաքական էակ լինելու փաստը	
Օրինակների միջոցով ներկայացնել, թե ինչպես է քաղաքականությունն ազդում մարդու և նրա սոցիալական միջավայրի վրա	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 1. ՄԱՐԴ–ԲՆՈՒԹՅՈՒՆ

1.1. ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ	3
1.2. ՄԱՐԴՈՒ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ	9
1.3. ՄԱՐԴ–ԲՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ	14

ԹԵՄԱ 2. ՄԱՐԴ–ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	19
2.2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ	25

ԹԵՄԱ 3. ՄԱՐԴ–ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ–ՎԱՐՔԱԳԻԾ

3.1. ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ	33
3.2. ՀՈՒՅՋԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	40
3.3. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ	46

ԹԵՄԱ 4. ՄԱՐԴ–ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

4.1. ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԿԱՆՈՆԸ	55
4.2. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	61

ԹԵՄԱ 5. ՄԱՐԴ–ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

5.1. ԳԱՂԱՓԱՐ ԳԵՂԵՑԻԿԻ ՄԱՍԻՆ	68
5.2. ՄԵՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ	73

ԹԵՄԱ 6. ՄԱՐԴ–ԻՐԱՎՈՒՆՔ

6.1. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ: ԻՐԱՎՈՒՆՔ	78
6.2. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐ	86

ԹԵՄԱ 7. ՄԱՐԴ–ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

7.1. ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ, ԿԱՐԻՔՆԵՐ, ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	91
7.2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ, ՍԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ	96
7.3. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՇԽՈՒՄ, ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՍՊԱՌՈՒՄ	99
7.4. ԱՆՁՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, ԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄ, ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅՈՒՄ ԵՎ ԱՊԱԳԱՅՈՒՄ	103

ԹԵՄԱ 8. ՄԱՐԴ–ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

8.1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	108
8.2. ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԱԿ	113

Կարինե Հարությունյան, Հայկուհի Բարսեղյան,
Նարեկ Գալստյան, Արաքս Մանուչարյան, Տարոն Սիմոնյան

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7-րդ դասարան

*Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար*

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Մարիամ Կանայան
Խմբագիր՝	Նվարդ Փարսադանյան
Սրբագրիչ՝	Նարինե Ղուկասյան
Կազմը՝	Մարիամ Կանայանի
Էջադրումը, ձևավորումը՝	Գրիգորի Հարությունյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 7,5 տպ. մամ.: Տառատեսակը՝ GHEA Granshan

«ԶԱՆԳԱԿ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
info@zangak.am, www.zangak.am, www.book.am, www.facebook.com/zangak

